

ՍԻՆԱ

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՅՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԵՐԱՎԵՐԱԿԱՐ ՀԱՅ ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՅԱՆԴՑՈՒԹՅՈՒՆ

1. Պայտօնական. — 2. Ասուածպաշտորհան Խորհուրդը, Ա. ՄԱՆԵԼԻԱՆ Տօնիքի առքի. թ. ե. Դ. — 3. Պատմութեան Մուսան. Վ. Հիւկո. — 4. Պետութիւն և Եկեղեցի (Ը). — 5. Նոիրուն. Արսէն Երկար. — 6. Առաջնախանութիւն Հայոց Եկեղեցւոյ. — 7. Կրօնական. Զատիկի առքի. Բ. ե. — 8. Կենաչափ Քարոզութիւնը. — Սրբահան խաւարը. Թ. ե. Գ. — 9. Համբիլ. Թրգմ. Նեսար. — 10. Զիրինաց իւրան վրայ Աշակերտանի և Բրի Եկեղեցիները, և հայկական վանենիր. Մ. ե. Ա. — 11. Բանասիենի Երզը. Արսէն Երկար. — 12. Իշեալ Թրգմ. Թ. ե. Գ. — 13. Բորուր. Թրգմ. Ներսէ Մարկոսաց. — 14. Այս բաները պիտի ըլլամ. Թրգմ. Ներսյոր Մարկոսաց. — 15. Մատենախօսական. Թղթատինցին և իր զործները. Բ. ե. — 16. Մովֆ-Կոկժին. Բ. ե. — 17. Ազատունի. Ազրիւ անմանութեան. Գ. Մ. — 18. Ս. Գիրիշ ընթերցումը. Բ. ե. — 19. Կրօնական անումուրիւնը. հայացոց ե. Եսպիկ. — 20. Մանդակունիի ճաներուն մէկ նոր Զեռազիրը. Ե. ե. Դ. — 21. Գիտական. Աստենականը և Անդիմականը. Թրգմ. Ն. Ա. — 22. Գիտառ Աստերի կուրեի ազդեցութիւնը նեղենների վկայ. Ս. Տիր Մ. Գրիգորեան. — 23. Կրօնական Կամելը Ամպյական Եկեղեցւոյ մէջ. Թրգմ. Ն. Ա. — 24. Կիլիկիոյ Կարողիկոսները. Բ. ե. — 25. Ամերիկացի Հայագիրը. Թրգմ. Ն. Ա. — 26. Սուրբեան ու Անատունները. Ե. ե. Դ. — 27. Ս. Պետրոս Սուաթեան և Հովհանն Եկեղեցին. Ֆ. Յ. Մ. — 28. Աղքան. Մելքոն Յ. Սկրեան. — 29. Հայերենի Երևոյր մը. Խ. Պ. Բարսաշ. — 30. Հրեայ թեսակութեան անումը Պատմաշիմի մէջ. — 31. Եշաւր Նախանաց Մատենագրութեան. Ֆ. Յ. Մ. — 32. Ս. Յակոբի Ներսէ:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

ՍԻՌՆԻ այս թիւը միացեալ է, Ապրիլ - Մայիս,
լիւն 64 երես:

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ

Կ. Պոլսի մեր ազգայիններէն անոնք որ ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻՆ երրորդ մասը
գնել կ'ուզեն. բո՞ղ դիմեն կ. Պոլսի մէջ՝ ուղղակի Պերֆին. Փոխանորդ
Գեր. Անքաս Եպոս. Գազազեանի, որուն զրկուած են բաւական թիւով
Ազգայինացներ:

ՍԻՌՆ ՆՈՒԹԱԳՆԵՐ 1928-Ի ՀԱՄԱՐ

Տիար Միհրդատ Թիրեացեանէն՝ Նիւ Եսորքէն,
Այսնեան Տ. Յաւսիկ Քչոյ, ին՝ Պէյրութ,
Բէռդիկին՝ Փարիզ, Պապանան Տ. Խերաչո
Քչոյ. ին՝ Հայէպ, Կրթամիրաց Միւթնան՝
Հայքա, Մանկաբան Վլոժնին. Գանիրէ,
Պալթանան Գրիգոր Նիւ-Եսորքէն, Յ. Ա.
Պալթանանին՝ կ. Պոլսու:
Զէքինեան Հայկողն՝ Նիւ-Եսորքէն, կ. Թիւ-
թիւննեանին՝ Հայէպ:
Հազարեան Յարութիւն Նիւ-Եսորքէն, ձըր-

ճըրեան Յակորին՝ Լայրցիկ:
Պէրպէրեան Մ. կ. Նիւ-Եսորքէն, Սիօն Ազգ-
Մնկպրտէզին՝ Երուսաղէմ:
Տիկին Ս. Առաքելեան Գանատայէն, «Այ-
տա»-յի՝ Թաղական Խորհուրդին:
Պէտօյեան Եղբարք Ուլիմէթ, Շիրինեան Տկն.
Զարուհիին՝ Խվենսթըն. Թուղլաճեան Ա-
գապիին՝ Մարտէլ. Բասմաջեան Կարա-
պետին՝ Բարիզ.

ԱՏԱՑԱՄ ԵՆՔ

11. Կիլիկեան Կոկի՛՛ներ. Ղաւերացրէր, Կիլիկիոյ Կարողիկոսական
Դիւանէն, 1903-1915. Տպ. Հրազդան Պէյրութ, 1927. 8° էջ 208. Գին՝ Սու-
րիոյ և Լիբանանի համար 100 Ա. Գ. — Արտասահման՝ Մէկ Տօլար: Գիմել*
Zakaria Bizdikian, Caracol Abed, Beyrouth (Liban):

12. ԿՏԱԿ. Պահակ Բ. Կարողիկոսին Հայոց Կիլիկիոյ, Տպ. «Արախ»ի
Բ. Յ. Թօփալեան. Հայէպ. 8° էջ 11:

13. Եղիշէ ԵՊԻՍԿ. Զիլինկիրեան, Յուշի և պատմէնի պաշօնաւոր և
անպաշօն վիճակու զանազան անձանց գրուած պաշօնաւորերու և նամակ-
ներու. Ա. Հասր, Տպ. Ռուսիան և Տէր Յովիաննեան, 1928. 8° էջ
480, Գին՝ 25 Պր. Եզ.:

Ա Ի Ռ Ա, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Բ. ԱՄ.Ի - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1928 - ԱՊՐԻլ - ՄԱՅԻ

Թիվ 4-5

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Եթովպիոյ Դահաժառանգ Խշխանին ուղղուած Պատրիարքական Կոնդակին և արուած իշխանական պատասխանին պատճենները:

ՅԱՅՈՒՍՈՒ ՔՐԻՍՏՈՍՈՒ ՆՎԱԱՑ ՏԵՐ ԵՊԻՃԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՇՆՈՐՀԼԻ ԱՄԵՆԱԱ-
ՍՈՒՐԲ ՀԱԳԻՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԽՈՐԻԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՓՈՈՈԾՍ ԵՐՈՒՍԱԳԼԻՒՄ,
ՎԵՐԱՏԵՍՈՒԶ ՍՈՒՐԲ: ԵՒ ՏՆՈՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՅՑ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԵ ՀԱՍՅԵ ՇՆՈՐՀԼ ԵՒ
ՅՈՇՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐՈՅ ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՈԱՍ ԹԱՖԱՐԻ ՄԱՔՅՆԵՆ
ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԽԾԱԱՆԻՆ ՄԵՆԻՆ ԵԹՈՎՊԻՈՑ,


1924 աւրոյ Զատկական օսմերուն Զեր Արքայական Բարձրութեան Ս. Քա-
ղաք զՏնուած միջոցին Երջանկութիւնն ոնեցանի անձամբ ծանօթանալու Զեզ
նես, որը գեղեցիկ ու անջնջիկ լիւատակ մը բողուց մեր մէջ: Այդ բարերաս
առիրով՝ ևսանեֆ Զեր անձին վրայ ոչ միայն բարեպատ եւ լուսամիտ Մեծ
Խխանի բժիշոնէական բարձր առաքինութիւնները, այլ եւ այն սէրը առ
Ազգն մեր, զոր եւ իշխանական մեծվայելչութեամբ ցոյց տուիի:

Այդ սիրոյն ազնուական հաւատսիրք կ'ընծայուի մեզ դարձեալ, անով ու
բախտէն հաւածական Հայ ժողովուրդէն մաս մը Մեծին Երովակիոյ հիւրընկալ
երկիրը ապաստան զՏնելով, Զեր Արքայական Բարձրութեան նովանիին ներ-
նեւ համես գաղուր մը կազմած է եւ կ'ապրի հանգիս, ապահով ու եր-
ջանիկ, վայելերով Զեր բարձր ու վեհանձն պատապանութիւնը:

Մերի անհուն զնունակութեամբ իմացանի վեցիեր թէ Զեր Արքայական Բար-
ձրութիւնը բարեհանած է իր բարեսէր ուսադրութեան արձանացնել Երովակա-
բիսկ մեր հոգեւոր որդինները ու զործ զնել իր զօրաւոր ազդեցութիւնը, որպէսզի
ապրին անոնի սիրով ու համերաշխուրթեամբ: Իմացանի նաև թէ Զեր հզօր պատ-
պանութեան տակ զՏնուող հայ զաղութին հոգեւոր ու կրական կեանիը բար-
ձրացընկելու փափազով չէ զլացած ընորհել Զեր բարդական ու նիւրական բա-
զալերութիւնը, մղում տալու համար նոյն ուղղութեամբ անոնց կողմանէ կա-
տարուած ջանենուն:

Այս պարագան Զեր հապատակ Հայոց անհուն Երախտագիտութեան առիր
եղած է, ինչպէս կը տեղեկացրէ մեզ Երովակիոյ հոգեւոր նովիւ Տ. Յովսէփ
Շայրազոյն Վարդապէտ:

139-98



Այս գեղեցիկ առիրէն օգտական նույրական պարտ կը համարին անոնց զգացումներուն միացնել մեր ալ ընուհակալիքն ու եռախաղիտոքինը եւ երուսաղէմի Տնօրինական Մրավայրերուն մէջ չերտեռանդն աղօրել, որ մարդացեալ Փրկիչն մեր Յիսուս՝ Քրիստոս Աստուածաւը ու Ամենաբարեպատշաճ Կայսրունոյն, Չեր Մրավական Բարձրութեան, Չեր Բարեպատշաճ Տիկինց եւ Աստուծմէ օրինեալ զաւակաց երջանկութիւն, առողջութիւն եւ արեւատութիւն պարզեւէ:

Զերմապէս կ'աղօրենն նաև Մեծին Երովայիոյ զօրութեան եւ բարգաւանումին եւ մեր հաւատակից Երովակական Սուրբ Եկեղեցւոյն հաստատութեան եւ պայծառութեան համար :

Մնամք ողջունի Քրիստոսաւանդ սիրոյ եւ օրինութեամբ

16 Դեկտմ.ի 1927 Ամբ
յԵրուսաղէմ
յԱռաք. Արոռ Ս. Յակորեանց
Համար 45|16.

Պատրիարք Երուսաղէմի
Եղիշէ Ա.ՐՔԵՊՈ. ԴԱԽԹԵԱՆ

ԹԱՅՑԱՐԻ ՄՌԱՔՑՆԷՆ, Գահաժառանց եւ Խնամուկալ Երովայիոյ Կայսրութեան, առ Ն. Ամեն. Մրազնութիւն Եղիշէ Դուռեան. Շնորհօ Սուրբ Հոգևոյն Պատրիարք Հայոց Սուրբ եւ Առաքեական Արոռոյն եւ պահապան Քրիստոփ Մրավայրերուն :

Ողջոյններ Չեր Ամենապատութեան.

Միւս մեջիս մէջ պահած եմ յիշատակը այն լաւ ընդունելութեան, զոր ըրբի ինձի Երուսաղէմին անցած ատեն 1916 (1924):

Աւախութեամբ կը յայսնեմ Չեր Ամենապատութեան թէ Հայ մասուկները ու Չեր նովանիին տակ կ'ապրէին, եւ Չեր ընորին Երովայիա եկան (*), եռանորդ կը կատարեն իրենց պարտականութիւնները, որուն համար շատ ուրախ ենք :

Աւախ ենք նաև որ Հայոց նոզեւոր նովիւր Տ. Յովսէփ Վարդապէտ մեր Մայրաքանակին մէջ է, եւ իր բոլոր բարոզներուն մէջ համակրանք կը ներենչէ Մայրաքանակի Հայերուն հանդէս Երովայիոյ կայսերական կառավարութեան:

Մրանց կը ցանկան որ ուսուվ աւարտի այն Եկեղեցւոյն Ժիմութիւնը, որուն ձեռնարկեց Հոգեւոր Հովիւր, եւ որուն յատակագիծը եւ տեղը անըսպիւս են :

Կը ինցրեմ Չեր Ամենապատութեանն որ Չեր աղօրեններուն մէջ յիշէ Երովայիան եւ զիս :

Գրեցու յԱթիս-Ապաւազ յամին Շնորհաց ի 1920 (= 1928) եւ յերեքտասահներողի աւուր Եմարիք ամսոյ :

(*) Կակնարէկ Երուսաղէմի Արարատեան Որբանոցէն Ելովագիւա գացող տղոց :

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԹՎԱՇՏՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ

Ա. ԱՌԵՆԴԵԱՆ ՏՅԱԲԻ ԱՌԹԻՔ

Դ. «Քարոզեցաւ ի ներանոս» . — Աւետարանի արագ արագ ծաւալումը մարդկութեան մէջ՝ այլ ևս իրականութիւն մըն էր, ու Առաքեալը իր խանդակառ նայուածքովը կը յառի այն ընդարձակ հորիզոնին՝ ուր Պատմոսի աքսորականն ալ՝ իր մենաւոր կղղիէն՝ կը գիտէր հրեշտակի մը թեւերուն վրայ հանգչող յաւիտենական աւետարանին թռիչքը բոլոր ազդերու և լեզուներու մէջ (Յայտ. ԺԴ. 6):

Անոնք որ հեթանոս էին՝ անհաղորդ մնացած ըլլալով չին Ռւխտի յայտնութեան, պիտի ընդունէին նոր Ռւխտի յայտնութիւնն ու ըոյսը, հրաժարելով անօգուտ պաշտամունքի սայթաքումներէն, որոնցմով կարելի չէր ո՛չ մօտենալ կրօնական ճշմարտութեան, և ոչ ալ նորոգ խիզճ մը արթնցնել թմրած ու քայլայուած հոդիներու մէջ: — Պարագան տարբեր չէր զրեթէ չըէին համար ալ, վասնդի նիւթական զոհներու և պատարագներու մեքենական մատուցումը այլ ևս պիտի չկրնար լաւագոյն զիտակցութեան մը կատարելութիւնը երաշխաւորել թէ՛ քահանային և թէ՛ ժողովուրդին համար (Երբ. Թ. 9):

Առաքելական գարու այդ օրերուն մէջ քարոզուեցաւ ուրեմն Յիսուսի երեւում ու փառաւորումը, քայլ աստուածպաշտութեան խորհուրդին սքանչելիքը լսող այդ ազգերուն մէջ հաւասարապէս չներգործեց աւետարանական վարդապետութիւնը. ոմանք մանանեխի առակաւոր հատին նման ծառի մը ուռճացումը տուին անոր, և ոմանք մեծ Սերմանացանին սերմերը չկրցան բեղմնաւորել պարարտ հոգի մը վրայ: Բազմագիմի էին նպաստաւոր կամ աննպաստ տրամադրութիւնները, որոնց մասին տեղը չէ հոս խօսիլ: Այս պահուստեղ հետաքրքրութ կէտն է պատմական այն եղելութիւնը՝ որ աեղի ունեցաւ երկրագունդին վրայ՝ քրիստոնէական քարոզութեան շնորհիւ՝ Տիրով վերացումէն յետոյ անընդմիջարար: Ուրեմն այն հեթանոսները, որոնց մէջ ցրուած հրէական գաղութներ կայիին, ըլլայ արեմուտքի՝ ըլլայ արեելքի մէջ, կամ Ա. Գիրքով ծանօթ աշխարհներու բնակչութիւնները կանչուեցան աշակերտութեան, ինչպէս հրամայած էր Տէրը իրեններուն (Մատթ. իր. 19): Ոչ ոքի համար մեկնութեան չի կարօտիր տէրունական այդ բացարձակ պատուէրը եւ անոր գործադրութիւնը, ու հարկ չիկայ վերլուծելու զանազան ժողովուբներու մօտ, պատմութեամբ կամ աւանդութեամբ պահուած պայծառ կամ ազօտ ցուցումներու մօտ, պատմութեամբ կամ աւանդութեամբ պահուած պայծառ կամ ազօտ ցուցումներու մօտ, պատմութեամբ կամ աւանդումը նկատի առնելու այս կամ այն վայրերու մէջ: Մեր համոզումը այն է միայն՝ ինչ որ էր Առաքեալինը՝ թէ

Աւետարանը խարզուեցաւ ազգերուն։ Շատերու անծանօթ չեն արդէն՝ անոր տարածման պարագաները հռոմէական կայսրութեան սահմաններուն վրայ, ուր Պօղոս և իր գործակիցները գերազանց արդիւնաւորութեամբ կատարեցին իրենց պաշտօնը՝ մինչև պետութեան մայրաքաղաքը մանելով, թէպէտե շատո՞նց իսկ կազմուած եկեղեցին մը հիմը դրուած էր հոն։

Միւս կողմէն հեռաւոր արևելքը ևս աւելի լայն ասպարէղ մը պիտի բանար Առաքեալներուն, որոնք վերնատան մէջ առիթ ունեցան՝ լեզուախօսութեան հրաշքին օրը՝ իրենց մօտ տեսնելու Պարթեաց՝ Մարաց և Խամացւոց աշխարհներէն՝ ինչպէս նաև Միջագետքէն, ևայլն, Պենտեկոստէի տօնին համար եկող հրեայ ուխտաւորները, իրենց նորահաւատաներովը (Գործք. Բ. 9—11)։ Հոս կանդ կ'առնենք պահ մը, վասն զի ընթերցողը անձկութեամբ մը պիտի հարցնէ թէ՝ ինչո՞ւ աշխարհազրական կարգի մը համաձայն՝ յիշատակուած չէ Հայոց աշխարհը՝ ուր հրէական գաղութներ ալ չեն պակսեր. ինչո՞ւ մոռցուած է Եննդոց Գիբրով (Բ. 4.) յաւերժացած և պատմական ու մարդարէական գրուածներով (Դ. Թագ. ԺԹ. 37. Երեմ. ԾԱ. 27) հռչակուած Արցահանն երկիրն ու ժողովուրդը: — Այդ հարցումին զոհացում մը տալու համար կը փութանք պատասխաննել՝ թէ խնդիրը լուծուած կը համարինք ինքնին ա՛յն սրբագրութեամբ՝ զոր Տերառովիանոս (Բ. դար) եւ Օդստինոս (Դ. դար) ըրած են՝ Գործք Առաքելոցի ցուցակին մէջ նշանակուած Հուան (Հրէաստան) կարգալով Armenia (Հայաստան). եւ գեռ մինչև հիմա զարմանալի կը թուի Ս. Գրոց Մեկնիչներուն՝ թէ հոգ բնչ զործ ունի «Հրէաստան»ը երբ Հրէաստանի մէջ էր որ տեղի կ'ունենար օրուան հրաշքը: — Անցնինք մեր նիւթին: Առաքեալներուն մեծագոյն մասը դէպի Արևելը ուղղեցին իրենց քայլերը. այդ ճամբան աւելի գիւր էր և յանկուցիչ. այդ ճամբէն մանաւանդ եկած էին Մոգերը Յիսուսի խանձարութին մօտ՝ խորհրդաւոր ասուզի մը առաջնորդութեամբը, մինչդեռ Արևմտաքի դիտուններն ու կախարդները դեռ կը խորդային: Ասորիք, Միջագետք, Պարսիկք, ինչպէս նաև Հայք, առին առահովապէս փրկութեան աւետիսը, ու Երկոտասանից խումբէն մին՝ չողացուց մեր հեթանոս հայրերուն աչքին երկինքի թաղաւորութեան մարգարիտը, հաւանաբար անցնելով երկրին հրէական գաղութներէն (Վան, Վաղարշապատ, Արտաշատ, ևայլն), և հուսկ ուրեմն նահատակուելով Արտազի մէջ Սանատորուկ հայ իշխանէն՝ անոր Սանդուխտ աղջկան հետ: Անցողակի դիտել կուտանք որ, եթէ չենք սխալիք, այս էր Հայոց եկեղեցիին հնագայն աւանդութիւնը, որը սակայն գրաւոր յիշատակարանի մը պակասութեան երեսէն և մանաւանդ համանունութեան կնճիսի մը հետեանքով (Թագէոս, Ադգէ = Թագէոս) Ասորական աւանդութիւններու հետ խառնամանուեցաւ մեր միամիտ և պատմաման գրադներուն զրչին տակ:

Անդամ մըն ալ գառնանք Առաքեալին, իրեն հետ վստահաբար կրկնելու համար՝ թէ աստուած պաշտութեան մարմացած խորհուրդը խարզուեցաւ ազգերուն: Պատմութեան կամ աւանդութեան վկայութիւններէն շատ վե՛ր է մեզի համար Պօղոսի այդ վկայութիւնը. ու կը սիրենք համոզուած միաւ՝ թէ այդ հեթանոս ժողովուրդներուն մէջ կայինք մե՛նք ալ, Քրիստոնէական եկեղեցիի հաստատութեան առաջին օրերէն իսկ:

ե. — « Հաւատարիմ եղիւ աշխարհի » — ինչ որ էր Պօղոսի յայտարարութիւնը՝ նոյնը եղաւ նաև Եկեղեցիի Հայրերունը գրեթէ առանց բացառութեան՝ թէ Աւետարանի խօսքերը լսուցան ամէն կորմ, ու բազմաթիւ ազգեր հաւատացին Յիսուսի. Առաքելական գործունելութեան արդիւնքը գաղանիք մը չէր այս ևս՝ անով որ Հեթանոսութիւնը իր ամօթալի տկարութիւնը յաղթահարուած կը գանէր նոր ուսուցածին մաքրագործ ու կաղդուրիչ բարոյականէն, և բազմաստուածութեան մտացածին ցնորդները պիտի ցնդէին աստուածպաշտութեան խորհուրդին պատմական եւ իրական ապացուցութեան ճառագայթումէն՝ որ դուրս բերելով մարդկային դիտակցութիւնը իր դարաւոր խարխափումներէն՝ պիտի զուարճացնէր զայն պայծառ արշալոյսի մը ծագումնվը :

Այդ նորոգ յայտնութեան պէտքը սակայն՝ ի հարկէ միննոյն ուժգնութեամբ չէր զգացուեր անձնիւր ժողովուրդի և անոնց ընկերային կամ կրօնական գասակարգերուն մէջ, ինչպէս ակնարկեցնք քիչ առաջ. վասնզի աշխարհի պատրանքներէն շլացող մեծամեծները, մաքի խարկանքներէն մոլորով իմաստուները, իրենց սպաշտոնին կախարդանքնէն ու դիրքին շահագործումներէն մագնիսացած քուրմերը, և դեռ ինչ թաքուն թշնամութիւններ պիտի կրնային սպառազինու իլ քրիստոնէական վարդապետութեան դէմ՝ որ արհամարհուած աղքատներուն սրբազն իրաւոնքը կը պաշտպանէր, աստուածային իմաստութեան մը լուծին կը խոնարհեցնէր խորհուներու ամբարտաւնութիւնը, ու սնուտի պաշտելութեան տեղ կը կանգնէր նշմարիտ երկրպագութեան սեղանը։ Դիւրին չէր անշոշտ խայտառակել ու խորտակել այդ բոլոր դարանակալ ուժերը միւնք. և սակայն այդ եղաւ Աւետարանին յաղթանակը, երբ աշխարհ հաւատաց Յիսուսի։

Հոս անօգուտ չըլլար թերեկ՝ ձանօթ կրօններու նախապատրաստութեանց կարգին՝ դիտել տալ նաև կրօնական այն իմացումը, որ պիտի կրնար ոչ նուազ նպաստել «սպառաւած» փրկչի մը զաղափարին ընդունելութեանը։ Պէտք է յիշել ուրեմն՝ ոչ միայն արեւմտեան հին խորհրդատոններու մէջ սաղմնուած միաստուածեան հայեցողութիւնը կամ հրէական գաղութներու շնորհիւ աւելի համոզիք ընդմտումով մը հեթանոս աղղերու փոխանցուած միննոյն վարդապետութիւնը՝ որոնք գետին մը պատրաստած էին «անծ անօթ Աստուածը» ճանշցնելու, այլ և հրէականէն անկախ — այն հաւատալիքը՝ որ կ'ընդունէր միշնորդ էտկի մը զերբնական երեւումը երկրի վրայ, զո՞ւր չանալով մարդուն ինքնարերական հաւատքը պսակաւորել օժանդակութեամբը աստուածային յայտնութեան մը, որ երկրաւոր ու երկնային իրերամերժ աշխարհները պիտի կրնար միատարբել կրօնական ներքին խառնումով մը, մեղքը չնշելու, և յաւերժացնելու համար մարդկութեան երազած երջանիկ թուականը։ Փրկագործութեան և միջնորդի այդ անակնկալութիւնը պիտի դիւրացնէր անշուշտ այս կամ այն ժողովուրդներու մօտ Աւետարանին մուտքը։

Ըստնք նաև՝ որ նտիսաքրիտոնէական կրօններու այն շրջանին մէջ՝ ուր աստուածները մարդ կ'ըլլային ու մարդերն ալ աստուածներ, կային տարակուսող միուքեր որ կը խորհնին թէ այդ կրկին ազդակները պիտի չկընային հիմնառել հաստատուն հաւատք մը, ցորչափ հրաշապատում կեզծիքներէ ծնունդ առած այլանդակ առասպելներու կուտն ու խառնակոյտը վրիպեցնէին աստուածպաշտու-

թեան ողին, և ցորչափ միւնոյն կրօնքէն բխէին երկու աղբիւրներ, մին գառն և միւսն անուշ. հակօրինութիւն մը՝ որուն կենդանի պատկերը կը նկարէր Պրոդիկոս առակաւոր այն պատմուածքովը՝ ուր մարդկային առաքինութիւնն և իմաստութիւնն անձնաւորող աստուածուհի մը մէկ կողմէն, և միւս կողմէն՝ անպատճիւն կառ վայելքներու հրապոյը ցուցադրով զիցուհի մը՝ երկուքի կը բաժնէին Հերակլէսի մը կորովի կամքը, վտանդաւոր կոփւի մը մասնելով զայն, և խլել տալով իրմէ այն խորունկ հառաչքը զոր Առաքեալը միայն պիտի կընար բանաձեւ սրտառուչ բացադանչութեամբ մը, «Այլ մի տառապեալ եմ ես, ո՞վ ապրեցուացէ զիս ի մարմնոյ աստի մահու» (Հո. է. 24):

Զերծ մեալու համար այս դժբախտ երկուութենէն, արևելքի հին կրօնքներն ալ, զոր օր. Զբադաշտականութիւնը, յունական խորհրդատօններու ստուերազգածին նման՝ ազատարարի միջնորդութիւնը սկեռանք մը ըրած էին իրենց, և կը յաւակնէին վերջնականապէս լծորդել մարդը Աստուծոյ հետ նոյն հաւատալիքն ունէին մեր հայրերն ալ իրենց Արտաւազդովը՝ որուն կըս պասէին անձկութեամբ: Այդ անմահ Ոզին, զոր գեւրը բանասարկած էին, օր մը խղելով իր շլթաները՝ պիտի տիրէր աշխարհին, եղնիկ ճշգրափւ կը պարզէ հայկական այդ զրոյցին որոշ նշանակութիւնը՝ համեմատելով հրեց մեսիական ակնկալութեան հետ (*): Բայ այսմ ազատարարի մը մասին Հայոց ունեցած հին հաւատոք՝ ընդունակ կ'ընէր զիրենք մօտ երթալու Յիսուս Քրիստոսով իրականացած փրկութեան, և տատամսու զրոյցը կը փոխարկուէր ստոյդ գաւանութեան մը:

Այսպէս կամ այնպէս, աշխատաց Յիսուսի. ճշմարիտ փրկութեան միջնորդին բացած ճամբան առաջին օրէն ընտրեցին մեր նախահայրերը, և մեր եկեղեցական աւանդութիւնն ալ կը հաւաստէ՝ թէ այդ ճամբուն սկիզբը՝ որ տակաւին կ'երկարի մեր կեանքին բովանդակ նահատակութեան գնացքովը՝ արիւնի կարմիր հետքեր կը նշմարուին քսան գարերու հեռաւորութենէն. — որովհետեւ նաւատացինք Յիսուսի, «զերազանց Ռւխտի մը «միջնորդ»ին (Եբր. Բ. 6):

(Եարումակելի)

Ե. Ե. Դ.

ՊԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՍՈՒՍԱՆ

Մուսա, չիկայ ժամանակ մ'ուր ու աշերդ ըլ նային.
Կը նեւելիս ապատնոյն պեր ու շըմել շշանին,
Վասրմի ու տարի դար կը զըմեմ միշ յեւեկ
Հարեւանցի ակոս մը յաւերմական զեսին միշ:

Մի՛ երկրայի, դամիններ, բո՞դ զններն ալ չերկրային.
Ամենուրեմ կը տանի ինմն անշէ շոյսն իր շահին.
Կը սաւառի սարն ի վեր, կը մըխարահ խորֆն ի վար,
Ցանափ մենինան կը հիմնի ուր որ շիրիմ իսկ չիկար:

Պ. Հերկո

(*) Հոս տեղը չէ խարբաւել Խորենացիով աւանդուած Արտաւազդեան զրոյցը, ուր բրիսոս նէական մտայնութեամբ խեղակերպուած կ'երես հեթանոսական պատարագ գերը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԵԿԱԿԱՆ ԵՎ ԵԿԱԿԱՆ

Ը.

Թիւրքիոյ մէջ, թիւրք-իսլամ պետութեան հետ Հայաստանեայց եկեղեցւոյ յարաբերութիւնները սահմանուած և ճշուած են ԱԶԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ, տիտղոսը կրող կանոնագրութեամբ, որ իր վերջնական ձևը առաւ և թիւրք կառավարութեան կողմէն գաւերացուեցաւ 1863 Մարտ 17 ին:

Արդէս զի Ազգային Առնինանդրութեան ծագման վրայ պատմական ստորյա գաղափար մը կազմուի մեր Ընթերցողներու մտքին մէջ, պէտք է զիտել տանք որ թիւրքիոյ այլակրան և բազագրեալ ժողովուրդներուն մէջ միայն հայ տարրը չէ որ իրեն սեփական ազգային կանոնագրութիւն մը ունեցաւ. այլ բոլոր ոչ-իսլամ հասարակութիւններ ունեցան իրենց ազգային-կրօնական ինքնուրբյն նկարագիրը ապահովող և ուղղակի թիւրք պետութեան կողմէ ճանչցուած, հաստատուած և վաւերացուած իրենց սեփական կանոնագրութիւնները: Ասոր ալ պատճառը ուա է որ երբ Ֆաթիհ տիրեց Կ. Պուստի և իր իշխանութիւնը տարածեց Առումէմիլի և Անատոլուի վրայ, ամենեւին չուզեց զօշիւ բնիկ ժողովուրդներու վայելած ազգային և կրօնական առանձնաշնորհումներուն, ուրիշ խօսքով չուզեց զանոնք թրքացնել և իսլամացնել, այլ ուզեց որ ամէնքն ալ պահեն իրենց ազգային իրաւունքները և կրօնական ազատութիւնը, ըլլալով միանգաման հպատակ տիրող պետութեան և հարկատառ: Այս էր պաշտօնական ըմբռնումը և հանգամանքը թիւրք պետութեան ենթարկուած ոչ-իսլամ ժողովուրդներու քաղաքացիական կացութեան:

Թիւրք պետութեան ներքին կեռնքին մէջ՝ իրաքանչիւր ոչ-իսլամ հասարակութեան հոգեւոր պետիրն էին որ կը կազմէին պետութեան և իրենց հասարակութեան միջն միութեան զիծը. նախ Յունաց և Հայոց և ուրիշ յարանուանութեանց պատրիարքները, Հրէից խոխամները (և շատ ետքը՝ հայ-կաթոլիկներու Պատրիարքը, հայ-ռողոքականոց Ազգապիսը և մերջապէս Պուլկարաց Լիգարքը) պետութեան կողմէ ճանչցուած անձնաւորութիւններ էին, տեսակ մը զործակալները, որոնք պետութեան կը ներկայացնէին իրենց ժողովուրդներուն խնդիրները և փոխարձարաբար՝ պետութեան կամքն ու կարգագրութիւնները կը հաղորդէին իրենց ժողովուրդներուն և կը բացատրէին:

Այս է պատմական կեցուածքին պատկերը թիւրքիոյ ոչ-իսլամ ժողովուրդներուն հանդէպ գերիշխան պետութեան:

Եւ այս պատկերը միայն բաւական է ցոյց տալու թէ թիւրքիոյ մէջ Պետքանքն և Եկեղեցիի խնդիր չէր կրնար ըլլալ. վասն զի պետութիւնը ազգով թուրք կամ օսմանցի է և կրօնքով իսլամ. իսկ ոչ-իսլամներու կրօնքը ունէ կազ չունի թիւրքիոյ պետական կրօնքին հետ: Հետեւաբար ոչ-իսլամ հպատակ ժողովուրդներու և իրենց վրայ իշխաղ իսլամ պետութեան միջն չէր կրնար պետութեան և եկեղեցիի խնդիր մը զույթիւն ունեցած ըլլալ, ինչպէս որ ունեցաւ Պապութեան և Եւրոպիոյ կաթոլիկ պետութիւններուն միջն, կամ Ռուսաստանի մէջ՝ Զարերու պետութեան և Արթոսոքս եկեղեցւոյն միջն:

Այս բացատրութիւններով ինքնին կը հաստատուի թէ պետութեան և եկեղեցւոյ բաժանման խօսքը թիւրքիոյ մէջ անիմասս է ինքնին, և ինչ որ խօսուած է և կը խօսուի այս մասին՝ բաշաղանքներ են պարզապէս:

Բայց որովհետեւ Թիւրքիոյ մէջ Հայոց Եկեղեցւոյն վարչական գործերը կանոնաւորուած են պետութեան կողմէն տրուած Սահմանագրութեամբ մը, կ'արժէ որ քննենք Ազգային Սահմանագրութիւնը և Հայաստանեայց Եկեղեցւոյ զիրքը Թիւրքիոյ մէջ:

Մեր Ազգային Սահմանադրուրիւնը արդիւնք է Թիւրքիոյ ներքին բարեկարգութեանց հետ կապ ունեցող ձեռնարկի մը:

1856 Փետր. 6/18 ին Հրատարակուեցաւ Խարբի Հիւնայուն կոչուած Բարեկարգութեանց Հրովարտակը: Այս Հրովարտակին պահանջներէն մէկն էր որ ոչ-իսլամ ժողովուրդներէն ամէն մէկը իրենց վայելած տաճանաշնուրիններն ու արտօնութիւնները (Հրովարտակին բառերով՝ խմբագրար վկ մուաֆիյար) որոշեալ պայմանագրամի մէջ պիտի քննէին և «ժամանակին բերմանցը և խալամակրուրեամ արդանացն ու զիտորեամ պահանջնած բարեկարգութիւնները խորհրդակցութեամբ պիտի որոշէին և պիտի ներկայացնէին Բարձրագոյն Դրան: Կառավարութիւնը պիտի հաստատէր զայն և պիտի վաւերացնէր, որպէս զի «Հոգեւորական Գյխոց շնորհուած ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՈՒ ԶԵՄՆՅԱՍՈՒԹԻՒՆ» (պաշտնօագրին բառերով՝ բուժագրար վկ իշրիտար) իշտամանէիւր Հայաւակուրեամ ապահովուած վիճակին ու նոր դիրքին նետ համանայներեամ մէջ դրուի» (Ազգ. Սահ. եջ 1):

Ամէն ոչ-իսլամ ժողովուրդ այս սկզբաւնքով իր վայելած ազգային-կրօնական ազատութիւնները քննեցին, կանոնի վերածեցին և ներկայացուցին կառավարութեան: Մեր Ազգային Սահմանադրութիւնն ալ այս կերպով մշակուեցաւ, և իր վերջնական ձեւը առաւ մեզի ծանօթ Հրատարակութեամբ, որուն Յառաջարանուրեան մէջ կ'ըսուի.

—«Օսմանեան Տերութեան իր Մահմետական չեղոյ հայտակներուն շնորհած արտօնութիւնները, հաւաաւ են ըստ սկզբանց անենուն համար: բայց անենց գործադրուրեամբ եղանակը՝ իւրամանական Ազգին մէջ ըստ պահանջնամաս սեպանիստ սովորութեամ իւրեամ, մասնաւոր կերպով սկզբանուած է:

Հայոց Պատրիարք զուիս է իր Ազգին, և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տերութեան հրամանաց գործադրուրեամ միջնորդ: Սակայն Պատրիարքանի մէջ կրօնական զործոց համար՝ կրօնական ժողով մը, և խալամակն զործոց համար՝ Քաղաքական ժողով մը կամ հաստատուած: Այս երկու ժողովները ի պահանջնել հարկին միանալով Խոռն ժողով կր կազմնեն: Թէ պատրիարքը ևս քի այս երկու ժողովոց անդամները՝ Ազգին պատուաւոր անձնացնեն բարիստեալ մէջ Ընդհանուր ժողովուին:

Պէտք է ուշադրութիւն ընել խալամակն գործեր և խալամակն բառեաւուն, որոնք բառին շատ լայն առումով գործածուած են հոս, հետեւապէօ՝ չեն նշանակեիր Politique այլ պարզապէս աշխարհական = Laïque. գասն զի Թիւրքերէն բնագրին բառերն են՝ ումուրը միամանիյիք (=աշխարհական գործեր), միայնիս միամանի (=Աշխարհական ժողով), իբրև ճշգրիտ հակագրութիւն ումուրը բուհանիյիքի (=Հոգեւոր զործեր). այս վերջին բառերն ալ մասնաւոր առումով կիրարկուած են Սահմանագրութեան հայերէնին մէջ, որովհետեւ ումուրը տինիյի (կամ մեզնիսիյի) պէտք է ըլլար թիւրք բնագրիը՝ կրօնական զործեր թարգմանուելու համար կամ մեջնակի տինիյի կրօնական ժողովը ըստելու համար:

Պատմականօրէն ուշադրուած է նաև զիտել որ այս Սահմանադրութիւնը պատրաստուած երկու Յանձնամասներու կողմէն. անոնցմէ մէկը կառավարութիւնը ինքն նշանակեց 12 անդամներով, ուրը աշխարհական, չորս ևկեղեցական. մէկն ալ կազմուեցաւ ազգի կողմէն, միայն եօրը աշխարհականներով: Այսինքն՝ 19 անդամներուն միայն չորսը ևկեղեցական էին: իսկ չորս ևկեղեցականներէն երկու քը կուսակրօն (Պարքին. Տեղապահ Ազգաւնի Ստեփանոս Արքեպօս. և Վարդապետ մը) երկու ալ ամուսնացեալ քահանաց:

Պատրիարքը թէև պետութեան կողմէն Ազգին Գլուխ հոչակուած է, բայց անոր հեղինակութիւնը բացարձակ չէ. այլ քանի մը ժողովներով հակակռուած է անոր զործունէութիւնը, այսպէս որ Պատրիարքը չի կրնար ոնէ կարգադրութիւն ընել ինքնազլուս, ամէն կարգադրութիւն իրենց պատկանեալ ժողովներուն խորհրդակցութեամբը և որոշումովը պիտի ըլլար. իսկ եթէ պատրիարքը, ի պահանջնել հարկին, առ

սանց ժողովներու ընէ կարգադրութիւն մը, ետքը պարտաւո՞ր է զայն Ենթարկել պատկանեալ ժողովին հաւանութեան և արձանագրել տալ:

Պատրիարքը զմասւորապէս պիտի գործէ Կրօնական և Քաղաքական ժողովներու հետ, որոնց առաջինը կը բարկանայ 14 անդամներէ, իսկ երկրորդը՝ 20: Իսկ Ընդհ. ժողովը, որ կ'ընտրէ Պատրիարքը և Կրօնական ու Քաղաքական ժողովները, և կը հսկէ անոնց գործունէութեանց վրայ, իբրև Ազգային վերին իշխանութիւն, կը բազկանայ 140 անդամներէ, որոնց 20ը, այսինքն մէկ հօմներորդը միայն եկեղեցական են, մեացած 120ը բոլորովին աշխարհական են, և անոնց ալ 40ը է. Պոլսէն կ'ընտրուին իսկ 80ը՝ զաւառներէն:

— «Ընդհանուր ժողովին պաշտօնն է՝ Պատրիարքը, Կարողիկուր և Ազգին զիւաւոր պաշտօնաւոները, և Կրօնական ու Քաղաքական ժողովուց անդամները ընտրել, Ազգային ժողովոց վարչորեան հսկողութիւն ընկէ, այն ժողովներուն վերաբերեալ բայց իրենց ձևունասութիւնն ինք համարուած գործերը ոռոշել և վճռել, և Ազգային Սահմանադրութիւնը անխափ պահել» (Յօդ. 60):

Ծնդհանուր ժողովը թէն ըստ Սահմանադրութեան վերին մարմինն է, որ կ'ընտրէ Պատրիարքը, ինչպէս նաև Կրօնական և Քաղաքական ժողովները, բայց չի կրնար հաստատել զանոնք. ասոնց ընտրութիւնը պէտք է հաստատուի կայսեր կողմէն (Յօդ. 25, 37):

Սահմանադրական այս սկզբունքները և ատոնց համաձայն կազմակերպուած դորձունէութիւնները ցոյց կուտան թէ թիւրքիոյ մէջ Հայց. Եկեղեցւոյ վարչութիւնը աւելի աշխարհականներու ձեռքն է քան թէ եկեղեցականներու, հակառակ սա իրողութեան որ բոլոր գործին գլուխը զանուողը եկեղեցական մըն է, եկեղեցական մը սահայն, որ պիտի ընտրուի թիւրքիոյ հայ եպիսկոպոսներու մէջէն միայն, պիտի ըլլայ սամաննան հպատակ և 35 տարին լրացուցած. Եկեղեցական մը, որ վերջապէս տէրը չէ իր պաշտօնին, որ կրնայ Կրօնական ու Քաղաքական և Ընդհ. ժողովներէն մէկուն կողմէն ամբաստանուիլ և պաշտօնանկ ըլլալ, և կամ բոլորովին իսկ իր կամքովը հրաժարիլ այդ պաշտօնէն, և երկու պարագային մէջ ալ իր վարած պատրիարքական պաշտօնը ոչինչ կ'աւելցնէ իր գիրքին կամ աստիճանին վրայ, այլ «Հրամարեալ Պատրիարքը վիճակսւոր նպակուսուաց կարգը կ'անցնի, և ամոր վրայ ըստ կանոնի պիշտ եղածը կը սնօրինուի հատն Ժողովի կողմէն» (Յօդ. 7.):

Ազգային Սահմանադրութիւնը 99 յօդուաններէ կը բազկանայ և չունի յօդուած մը որ արդարացնէ Քաղաքական=Politique գործի մը խաւնուելու խօսքը: Պատրիարքը կը գործադրէ ինչ որ իր ազգին զաւակները կ'որոշեն և կը վճռեն իրենց օրինաւոր ժողովներուն մէջ:

Հետաքրքրական են սակայն Սահմանադրութեան քանի մը բացատրութիւնները, ուրոնք քաղաքական նկարագիր ունին: Զոր օրինակ. պատրիարքը «Տէրութեան կոտարեալ վստահութեանն արժանաւուր» անձ մը պէտք է ըլլայ (Յօդ. 4): Դարձեալ, իբրև սկզբունք, Ազգային Վարչութեան երեխ պարատականութիւններէն մէկն է Հայ ժողովուրդը «կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել» (Էջ 6):

Ասոնք քաղաքական նկարագիր ունեցող բացատրութիւններ են, բայց բարեկառնարար քաղաքականութիւն չեն, վասնզի ատմիկ քաղաքականութեամբ զրազելու դէմ նախազգուշութիւնն մըն է աւելի կամ արգելք մը: Եւարժէ ճշգել թէ արգեօք այս բացատրութիւններ պետութեան կողմէն ներմուծուած են Սահմանադրութեան մէջ, թէ Հայեր իրենք զրին զանոնք: Երկու պարագայի մէջ ալ փափուկ կացութիւն մը սաեղծուած է ատով, որուն ծանրութիւնը Աշբգեան և Օրմաննան պատրիարքներ կրեցին. վասն զի անոնց օրով պայմանագրական ցոյցեր, բայց այդ երկու պատրիարքներու ձեռքք չէր յեղափոխութիւնը կասեցնելու կարողութիւնը:

Արդէն խարականուրինը, բատին բուն պետական իմաստով, թիւրք պետութեան գործն է: Պետութիւնը հայ չէ որ Հայոց պատրիարքը խաւնուի ատոր գործերուն, և միւս կողմէն, պէտք չէ մտահան ընկէ որ պետութեան հետ յարաբերութիւն ընկու

արտօնութիւնը ինքն թիւրք պետութիւնն է որ կուտայ Թիւրքիոյ Հայոց Պատրիարքին՝ իր հաստատած սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն:

Եթէ այսպէս է Սահմանադրութեան տրամադրութիւնը, բայց մենք զիտենք որ Արիմենին և Վարժապետեանի պատրիարքութիւնները, մանաւանդ ներսէսինը, գուտ ազգային-քաղաքական խնդիրներով եղան եղան Թիւրքիոյ Հայոց պատրիարքութեան ամբողջ պատութեան մէջ, և անկէ յետոյ ազգային պատրիարքարանը զրեթէ Թիւրքիոյ Հայոց հարստահարութեան խնդիրներով զրազեցաւ: Մասյ է որ առանք քաղաքական խնդիրներ էին, բայց նոյն ատեն մասը կը կազմէին նոյն ինքն Թիւրքիոյ ներքին բարեկարգութեան խնդրին: բարեկարգութիւնն մը, որ թիւրք կառավարութիւնը յանձն առած էր հանդէպ Հայոց, նախ Ալ-Մթէֆանոյի և յետոյ Պերլինի գաշնազիներուն հիման վրայ, և մասնաւորապէս ներսէս պատրիարք ի՞նչ որ ըրաւ իր ստեղծած այս «Հայկական զատ»ին մէջ, ըրաւ սուլթան Համբուլ և անոր կառավարութեան զիտութեամբ, և իրրե միջնորդ պետութեան և ազգին մէջ, ներսէս ազգային կամքը կատարած եղաւ: Սահմանադրութեան իրեն տուած իրաւասութեամբ: Ասկէ զատ ներսէս պատրիարքին մշակած «Հայկական զատ»ը ուրիշ բան չէր բայց եթէ Թիւրքիոյ մէջ, մանաւանդ հայկական զաւատներու մէջ, հայ ժողովուրդի կեանքին ապահովութիւնը ընդդէմ տիրող հարստահարութեանց: Այն ատեն միայն այլոչափ էր հայկական զատին իմաստը և սահմանը:

Աւելի հւտաքրքրական է Թիւրքիոյ Հայոց առաջնորդներուն զիրքը զաւաներու տեղական կոստավարութեանց վարչական ժողովներուն (Անդիսի իսարի) մէջ: Հոս անգամ մըն զիտելու է որ այս կարգադրութիւնը միայն Հայոց համար առանձնաշնորհում մը չէր: Բոլոր հոգեւոր պետեր աթոռ ունէին իրենց տեղուոյն վարչական ժողովներուն մէջ: Ազգային Սահմանադրութեան մէջ այս մասին ունէ յօդուած չկայ: Բայց աւանդութիւն ըլ եղած էր զաւաներուն մէջ կառավարութեան վարչական զործերու կարգադրութիւնը ընել, հոգեւոր պետերու հետ խորհրդակցելով: Ասկէկա ամէնէն ապահով կերպն չէր պաշտպանելու ոչխօսամեներուն, ինչպէս նաև նոյն ինքն ուղղակի իսլամիներուն իրաւունքները և պետութեան շահերը:

Թիւրք պետութիւնը ի զիմակի չէր, իրրեւ քաղաքակիրթ պետութիւն մը, իր այլացեղ հպատակներուն քաղաքային և ընկերական պահանջները զոհացնելու: Խոլամութիւնը պետական կրօնք էր. Թիւրքիոյ մէջ կա՛ր սակայն քրիստոնէութիւն և հրէութիւն, և պետութիւնը չէր կրնար անտեսել այս յորանուանական զանազանութիւնը իր հպատակներուն մէջ: Դարձեալ իսլամութեան բռն զատարանը կախուած էր Պուրանէն. այսինքն՝ իսլամը Շերիարը, Շերի զատարանները կը ճանչնար, թէե անոր կողքին կազմակերպուած էին ետքէն աշխարհիկ զատարանները: Արդ՝ ոչ-իսլամներն ալ ունէին իրենց սեփական կրօնական, ազգային աւանդութիւնները, կանոններն ու օրէնքները, որոնք նուիրական էին իրենց համար: Աշխարհիկ զատարաններու կազմակերպումէն ետք իսլամ պետութիւնը չէր կրնար իր Շերիարը զարտազրել քրիստոնէայ հասարակութիւններու վրայ, թէե ոչ-իսլամներ, ի հարկին, Շերիարի ալ կը զիմէին ժառանգական և այլ խնդիրներու կարգադրութեանց համար: Այդ է պատճառը որ ստիպուած էր պետութիւնը յարգել իւրաքանչիւր կրօնքին և իւրաքանչիւր յարանուանութեան դիրքը իր զրօշին տակ և յարգել անոնց կրօնական և աշխարհական իրաւունքներն ու առանձնաշնորհումները, և համեւարար զաւաներու մէջ տեղական կառավարութիւնները, նոյն իսկ իրենց դիրքութեան և իրենց շահերուն համար, պէտք կ'զգային խորհրդակցին հոգեւոր պետերու հետ, վարչական զործերու կարգադրութեան մէջ:


Միայն Հայոց մասին խօսելով, պէտք է ըսել թէ զիւրին էր հայ հոգեւոր պետերուն համար այդ ծառայութիւնը մատուցանել տեղական կառավարութեանց, ցո՛րչափ գեռ թիւրքեր չէին խմորուած ազգայնական և այլամերժական զարտարաններով և ցո՛ր-

չափ գեռ հայ յեզափոխական շարժումներ հայ ժողովուրդը կասկածելի չէին ըրած հանգեց թիւրք պետութեան :

Բայց Հայոց առաջնորդներուն այս անձնուէր ծառայութիւնը թիւրք կառավարութեան, կենդանի նահատակոնի՛ւն մը եղաւ հետզհատէ, երբ թիւրքը սկսաւ հայը թշշնամի նկատել իրեն և երբ Հայոց մասին համբաւեան հալածանքները, ուղղուած Հայ ժողովուրդի գոյութեան բօլոր կողմերուն, զգալի եղան կառավարական յարաբերութիւններու մէջ։ Այլ եւս հայ առաջնորդներուն այդ ծառայութիւնը սկսաւ ծանր զալ թիւրքին։ Անոնք այնուհանու ոչ թէ իրենց պաշտօնին հարկով, այլ իրենց անձնական հմայքով զործ կը տեսնէին։ Ասիկայն ստկայն երեւակայուածէն աւելի անհանգուրծելի վիճակ մըն էր առաջնորդի մը համար, այսինքն զգալ և զիտնալ թէ պետութիւնը իրեն թշնամի կը նկատէ իր հպատակներուն ամէնէն հաւատարիմ և ամէնէն անձնուէր մէկ մասը, թէ պաշտօնական հազար տեսակ դժուարութիւններ — Հայ ժողովուրդի կրօնական, կրթական, տուետրական, դատական, եւայլն եւայլն զործառութեանց զէմ — կանոնաւոր կերպով մը կը մշակուին և կը զործադրուին, թէ վերջապէս հոգեւոր պետին անձր թէեւ պաշտօնականութեան արտաքին ձեւերով կը յարգուի, բայց ներքնասիէս ատելութիւն կը զրգուէ . . . Այս բոլորը այնպիսի կացութիւն մը ստեղծուած էին որ առաջնորդը աւելի զոհ պիտի ըլլար եթէ կառավարութեան հետ յարաբերութիւն ընելու ժամավաճառութիւնը խնայուէր իրեն, և ազատ զգար ինքզինքը ակռայ կճրտող թիւրք պաշտօնեաններու հետ տեսակցելու հարկէն։

Նոյն ինքն թիւրք կառավարութեան կողմէն թիւրքիոյ Հայոց տրուած Ազգային Ահմանայրուրեան այս քննութիւնը ցոյց կուտայ թէ Պետարին և Եկեղեցի բացատրութիւնը, այն իմաստով որ զոյտիթիւն ունէր ներսպայի պետութիւններուն և Հռոմի Եկեղեցւոյն վերաբերութեամբ, ամեննեին զոյտութիւն չէ ունեցած Թիւրքիոյ ոչ-իսլամ հպատակներուն և թիւրք պետութեան միջեւ։

Յաջորդ յօդուածով պիտի տանք ամփոփումը մէր այս ուսումնասիրութեան, և պիտի ներկայացնենք արդի Եւրոպայի մէջ պետութիւններու և Եկեղեցիններու յարաբութեանց պատկերը սեղմ շրջանակի մը մէջ։



Արցունով և լեցուցի կամքելն անա՛ շողակայ,
Աւ կը բերեմ խորամի շա՛ս նեռուեն ուր ծրայ.
Արինեցան իմ ոսկիր նրիրումի ձամբուն վրայ.
Ես ըշխու եմ, և յոգնա՛ծ, նազի կրնան ոսի մեալ։

Աւ նսեր եմ տանարի սևմեն նեռու, բախանձու,
Այժմուս մեջ իմ սրբի ամենն երկմին ամապայ.
Կ'անցնին խվիս բիւրաւոր ուխտառներ մայսունակ.
Աւ կը կարծեն որ բշտա մուրացկան մ' ևս ամեանօր։

Ես չի կրցի ներս մշնել. ամրոխ անցաւ հողմակոծ
Ամսափի պէս ուր լուսած մ' եր իմ նողին . . .
Բայց դեռ անուր կը սեղմեմ կանքեղին կումբը ծունկիս։

Աւ եր զիշերը դատնաց, եր աշ մարի տեհն բոց.
Պիտի բերեմ խորամի, նողիս վատուած աստղեր,
Իմ արցունովը լեցու խորունի սափորն այս նողի . . .

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

ԱՐԱՔԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵՑՎՅՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՑԻԱՅ

(Հ. Պ. Հացունիի Երկրորդ յօդուածիմ առքի)

Բ.

ՏԵՐՏՈՒԴԻԱՆԱԾԻ ԱԿՆԱՐԿԱԾԻ ՄԵԾ ՀԱՅՔՆ Է

Հին մատենագիրներ ՀԱՅՔ բաելով կը հասկընան ընդհանրապէս ՄԵԾ ՀԱՅՔՆ, և անվիճելի փաստեր կան առ այդ:

1.—Եսայեայ լ. ՀՅԻ մէջ կը կարգանք որ երբ Ասորեստանի թագաւորը Սենեքերիմ, Նինուէ՝ իր տան մէջ կ'երկրպագէր նեսրաք կուռքին, իր երկու զաւակները, Աղրամելէք և Սարասար, սպաննեցին զինքն և «ինքեանք զնացին փախստական ի ՀԱՅՑ»:
Եսայեայ երրայերէն բնագիրը փախստական ոի Հայուի ունի «յերկիրն Արարադյա» (Հմտ. դ. Թզր. ԺԹ. 37): Ա. Գիրքին յոյն թարգմանիչները, երբ Արարադի տեղ Արմենիա կը զնեն, անշուշտ շատ լաւ զիտանալով թէ Արարադը կը գտնուի Արմենիաի մէջ, կը հասկընան բուն Հայաստանը, այսինքն ՄԵԾ ՀԱՅՑԻ, և ոչ թէ Փոքրը: Գալով Տերտուդիանոսի այն ալ անտարակոյս ՄԵԾ ՀԱՅՑԻն կամ սուրբը պական Արմենիաին կ'ակնարկէր երբ Գործք Առաքելոցի ծանօթ համարին (Բ. Տ-11) մէջ Կոչձնչի (Հրէաստան) տեղ կը դնէր Արմենիա (Հայաստան), Պարթևեաց, Մարաց, Խամացւոց, եւայն, սահմանակից կամ մերձաւոր երկիրներու չարքին: Առանց այլեւայլի, արգէն այս իրարու սահմանակից երկիրներու աշխարհագրական դիրքը ցոյց կուտայ թէ խօսքը ՄԵԾ ՀԱՅՑի գրայ է:

2.—Կ'արժէ աշքի առջեւ ունենալ նաև Մտրարոնի (+24?) աշխարհագրութեան քարտեսներէն Ժերցը, Armenia et Adjacentes Regionesը, ուր ՄԵԾ Հայքը (Armenia Magna) կը տարածուի լայնութեան 36էն 42 և երկայնութեան 36էն 46 աստիճաններուն վրայ, զուրս յորգելով այդ աստիճանագիծներէն, իսկ Փոքր Հայքը (Armenia Parva) համեմատաբար շատ փոքր երկիր մը կը մնայ ՄԵԾ Հայքի արեւմտեան հարաւային ձայրը, լայնութեան 39էն 41 և երկայնութեան 35-38 աստիճաններուն միջեւ, սեղմուած Կապաղովիոյ և Պոնտոսի մէջտեղ, նոյն իսկ զրկուած Մելիտինէն, որ մնացած է Կապաղովիոյ մէջ, և իրքն նշանաւոր քաղաք ունենալով միայն Նիկոպոլիսը:

3.—Փոքր Հայքի աշխարհագրական և քաղաքական կացութիւնը այնպէս էր հին տակները որ զրեթէ անկախ երկիր մը չկամաւ, և հետեւաբար կարելի չէր որ այդ իսկ պատճառով Հայք ըսոււած ատեն Փոքրը հասկըցուէր, երբ անդին կեցած էր ՄԵԾԸ:

Th. Mommsenի սա դիտողութիւնները շատ կարեւոր են Փոքր Հայքի մասին «թէ Պոնտոսի թագաւորութիւնը այս ժամանակներ (Ն. Բ. 156-120) որչափ կը ցաւ տարածուիլ մինչև կոմկաս և մինչև Եփրատի ակոնքը, ճշգրիտ կ'երազով չի կընար սահմանուիլ. բայց այնպէս կ'երեւի թէ իր մէջ առած էր Հայաստանին արեւմտեան մասը, զրեթէ ինտէրէզը և Տիգրիկը, կամ փոքր ըսոււած Հայքը, իրքն կախում ունեցող ստորապութիւնը, մընչ ՄԵԾ Հայք և Մոռք առանձին և անկախ թագաւորութիւններ էին:

Դարձեալ, Փոքր Հայք իր այդ կախուալ իշխանութենէն ալ զրկուեցաւ և ամբողջական մասը կազմեց Պոնտոսի թագաւորութեան (Ն. Բ. 92): Այս կարգադրութիւնը ընողն էր Միհրզատ, ուր շատ սերտ յարաբերութիւն մը հաստատեց ՄԵԾ Հայքի թագաւոր Տիգրանի հետ, իր կ'ողեսպատրա աղջիկը հարանութեան տուաւ անոր, և Տիգ-

(1) Strabonis Geographicorum Tabulae XV. Instruxit Carolus Mullerus, Parisiis, M Decem LXXX.

բան՝ իր աներոջ օգնութեամբ է որ կարող եղաւ թօթափել Արշակունեաց լուծը և առանց տեղը բռնել Ասիոյ մէջ օ⁽¹⁾):

Փոքր Հայֆի կցումը Պանասի և Կապադովիլոյ շատ սուզի նատաւ տառը հայութեան, այսինքն պատճառ եղաւ որ ստարանայ կոմ այլասերի: Հակոսակ այս իրազութեան Ս. Բարսեղ իբրեւ Կապադովիլոյ թեմ, այս Փոքր Հայֆին կ'ակնարկէ ՀԱՅՔ բռնով, ինչպէս յայտնի է իր թուզթերէն:

4.—Եւսերիսոս կը պատմէ թէ Աղեքսանդրիոյ Դիոնեսիոս հպիսկոպոսը (248-265) ապաշխարութեան վրայ թուզթ մը զրեց Հայոց, որոնց եպիսկոպոսն էր Մեհրուժան. — «Նոյնակէս և առ Հայս վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոսն էր յայնժամ Մեհրուժան» (Եւսը. Զ. Խզ.):

Եւսերիսոսի այս վկայութիւնը շատ թանկազի՞ն է և ցոյց կուտայ թէ Լուսաւորչէն յառաջ ոչ միայն քրիստոնէութիւն կայ Հայաստանի մէջ, այլ և կազմակերպեալ եկեղեցի որուն նույիրապետութեան գլուխը կը գտնուի Մեհրուժան եպիսկոպոս մը, որ ձանօթ է ժամանակին քրիստոնեայ աշխարհին, և որուն կարեւոր խնդրի մը մասին նամակ կը զրէ Աղեքսանդրիոյ եպիսկոպոսը:

Le Quien ինչպէս նաև L. Duchesne, այս Հայոց կ'ուզեն հասկընալ Փոքր Հայֆը, առանց սակայն պատմական հիմքի: Արովհեաւ հոս ալ խօսքը Մեծ Հայֆի վրայ է, և այս մասին մեր կողմն ունինք Գելցերը, որ նոյն ինքն Մեհրուժան անունին կոթնելով, կը հաստատէ թէ Եւսերիսոսին ակնարկածը Մեծ ՀԱՅՔն, է և ոչ թէ Փոքրը: — «Մերաստիոյ, Մերաստապուլոյ, Նիկոպոլսոյ, Սատոպայի և Ա(ռաջին) Հայոց եպիսկոպոսանիստ քաղաքաց եպիսկոպոսներու ցանկերը համեմատելով իրարու հետ՝ կը գտնենք որ արգէն Գ. Դ. և Ե. գարուց մէջ, յիշեալ տեղեաց առաջնորդք՝ որչափ զիտենք՝ բոլորն ալ յոյն-հռոմէական կոմ Աստուածանչի բնիկ անուններ կը կրեն. նոյնը կարող ենք ըստ նաև Մելիտինէի թեմին համար: Ապա կը հետեւի աստի, թէ Մեհրուժանայ եպիսկոպոսանիստ քաղաքքը պէտք է փնտուի Մեծ Հայոց մէջ. որովհետեւ մեհրուժան անունն իսկ բնիկ ազդային է և հայկական: Այս անունը կը կրէ նաեւ այն պարկամոլ ուրացող Արծրունի իշխանն, որուն համար կ'ըսէ Փաւստոս. «Ճի ոնն ի նախարարաց մեծամեծացն Մեհրուժան անուն Արծրունի» (Դ. Խզ.): Զուր տեղ փրնուեցի ուրիշ Մեհրուժան մի հայկական հին գրականութեան և պատմութեան մէջ (⁽²⁾):

«Յայտնի է թէ սոյն անունս յատուկ և յայտարար է այն հին նախարարական ցեղին, որ Մենեքրիմէն սերեալ կը համարուի: Արծրունիք կը բնակէին և կ'իշխէին ի բնէ մարտկան Վասպուրականի մէջ, զոր միայն Տիգրան՝ արքայից արքան կամ իր նախարարերէն մին՝ միացուց տէրութեան հետ: Այս հարաւ արեւելեան նահանգը միշտ իրեն առանձին զոյւթիւն մունեցեր է քաղաքականօրէն: Շատ վերջը, ամիրաւողեներու ժամանակ, երբ Հայաստան ազատեցաւ արարացոց իշխանութենէն և հաստատուեցան Բագրատունի արշայից սրբայի նմին ժամանակի կ'իշխէին նաև Արծրունիք Վասպուրականի մէջ իրը անկախ փոքրիկ թագաւորք (reguli) զոր յոյնք՝ իշխան Վասպուրականի կը կոչէին: Անտարակսյո Մեհրուժան եպիսկոպոսն այլ Արծրունեաց ցեղին շառաւերդ մ'էր:

«Դժբախտաբար Ազտմանգեղոսի Հայոց գարձի պատմութիւնն կը լոէ բոլորովին հարաւ արեւելեան կողմերու մասին: Հաւանականաբար այն գաւառներուն դարձն եղիք է Ասուրոց կողմէն (Եղեսիա կոմ Մծրին), շատ աւելի կանութիւ քան աշխարհին

(1) The History of Rome by Theodor Mommsen, Translated by William P. Dickson, The Popular Edition, London, 1880, III էջ 57-58, և էջ 28: Հմելու. Th. Reinach, Mithridate Eupator Roi de Pont, Paris, 1890, էջ 78-80.

(2) Զարմանակի է որ բարեհամատ պատմական ուսուցաբնեն վերաբեր է Ազան Արծրունիին եղբայրը Մեհրուժան, որ կը լին Փաւստին (Գրլ. ազ. Վենես, 1891, էջ 206, 286), Արծրունակ պատմի Թավման ալ ոնի Մեհրուժան Արծրունի մը (Տար. էջ 109), Տես Մեհրուժանին մասին Ferdinand Justi, Iranisches Namenbuch (1895, Marburg), էջ 209:

միւս գլխաւոր մասն, և այնու միայն կարելի է բացատրել Մերուժան եպիսկոպոսին զոյսութիւնը վազ իսկ յամին 250» (Հ. Դիլցիր, ՓԼԱՍՏԱ ԲԻՒԶԱՆԴ կամ Հայկական եկեղեցոյ Սկզբնաւորութիւնը Թրգմ. Հ. Յովհանն. Թորոսեան. տպ. Վ. Խնամիկ—Ս. Դադար. 1896. էջ 159-161):

Կոնիքիրն աւ կ'ընդունի թէ Մեհրուժան եպիսկոպոսին է Արծրունեաց, և նոյն իսկ շատ յառաջ կ'երթայ զիտել տալով թէ Մեհրուժան եպիսկոպոս որդեգրական (adoptionist) եղած ըլլայ, և թէ ճիշդ ասոր համար է հայ պատմիչներ չեն ուզած յիշել Մեհրուժանի անունը, եւայլն⁽¹⁾:

Մեր ուսումնասիրութեան համար կարեւոր կէտը Կոնիքիրի հաւասարութիւնը մէջ սա է թէ կուսաւորչէն յառաջ ոչ միայն քրիստոնէութիւն մը կայ Հայաստանի մէջ, այլ նաև կազմակերպեալ եկեղեցի մը, որուն զլուխը կը գտնուի Մեհրուժան եպիսկոպոս Արծրունեաց:

5.—Անդրագառնալով Դիոնսոնիս Աղեքսանդրացոյ թուղթին, դիտել կուտանք թէ Մեհրուժան եթէ ունէ քաղաքի պարզ եպիսկոպոսն եղած ըլլար, հաւանարար Աղեքսանդրիոյ եպիսկոպոսը այդպիսի կարեւոր նիւթի մը մասին պիտի չզրէր անոր: Դիօնսոնիս իր ժամանակը զրադեցնող նիւթի մը (Ապաշխարութեան) մասին այլեւայլ տեղեր նամակներ կը գրէ, և ընական է որ Հայաստան գրուած նամակ մը, պիտի ուզգուէր Հայաստանի Եկեղեցւոյն պետին: Եւ Եւսեբիսո ալ ճիշդ այս պատճառով է որ կարեւորութիւն տուած է Հայաստան (առա Հայա): ուղղուած նամակին:

Կարելի է նաև զիտել տալ որ իթէ Մեհրուժան պարզ եպիսկոպոս մը եղած ըլլար, Դիօնսոնիս միայն անոր պիտի չզրէր, այլ Փոքր Հայքի ուրիշ եպիսկոպոսներուն ալ պէտք էր գրել: Ընդհակառակն պէտք է ընդունիլ որ ծանօթ Աթոռէ մը ուրիշ ծանօթ Աթոռ զրուած թուղթ մըն է այդ. ուրիշ խօսքով՝ Աղեքսանդրիոյ «Հայրապետը» Հայոց պետողիկասինս է որ կը գրէ, և ոչ թէ եպիսկոպոսի մը:

Պահ մը հնմադրելով որ Մեհրուժան Փոքր Հայքի մէջ է, ուրիմն այդ կերպով կ'ընդունուի թէ կուսաւորչէն յառաջ կազմակերպեալ եկեղեցի կայ Փոքր Հայոց մէջ: Բայց այն առեն ինչպէս կարելի է մեկնել սա երեւոյթը թէ Փոքր Հայք քրիստոնեայ եղած է կուսաւորչէն յառաջ, բայց Մեծ Հայք հեթանոս է մացեր մինչեւ կուսաւորիշ: Կարելի չէ որ աշգաղիսի թիզ մը պաշտպանուի իրեւ պատմական իրողութիւն:

Խոսիքը այս տեսակէտէն ալ քննուած ատեն կը տեսնենք որ ոզդմիտ տրումարանութիւնը Մեծ ՀԱՅՔԻ հետ է, և հետեւարար Տերտուղիանոսի ակնարկածն ալ Մեծ ՀԱՅՔԻ հետ է, որ արդէն կազմակերպեալ եկեղեցի ունի և Դիօնսոնիս Աղեքսանդրացի առեն այդ եկեղեցւոյն զլուխն է Արծրունեաց Մեհրուժան եպիսկոպոսը:

6.—Մեհրուժան եպիսկոպոսի մասին Ամեն. Դուրեան Արքազանի կարծիքն ալ հարցուցինք, որ բարեհաճեցաւ պատասխանել մեզ հետեւեալ կերպով.

—ԱՄեր կարծիքն այն է թէ Եւսեբիոսի յիշած Մեհրուժանը Մեծ Հայքի եպիսկոպոս էր, և ոչ Փոքր Հայքի, ուր Գ. գարուն կարելի չէ ո՛չ զուռ հայ ընակըութեան կեղեցներ զատորոցել և ո՛չ յոյն եպիսկոպոսական աթոռներու միջեւ ազգայնօրին ուրոցն աթոռու մը զոյսութիւնը ենթազրել: Եկեղեցւոյն պատմիչն ակնարկուծ Հայուսանը ա՛յն աշխարհն էր՝ ուր կանուխէն Հոսոմի նիւգակակից ու բարեկամ, քրիստոնեայ և բարեպաշտ ժողովուրդ մը կ'ապրէր ինք իր մէջ, և ինքզինքն ալ յատոյ բանակներով կը պաշտպանէր Մաքսիմինոս Դաժայի բանաւորութեան դէմ: Եթէ Մեհրուժան Փոքր Հայքի մէկ անկիւնը զրած ըլլար իր աթոռը՝ ի՞նչ հանգամանքով կընար Հայաստանի հաւատացեալներուն եպիսկոպոսը նկատուիլ ուրիշներէ, և ի՞նչ պէտք կար որ իրեն այնքան մօտիկ գտնուող աթոռները անտեսելով՝ մինչեւ Աղեքսանդրիա զիմէր ազգախարութեան հրահանգ մը խնդրելու համար:

(1) The Key of Truth. p. CIX, նաև Հմաս. p CII—GIV.

Նոյն Եւսերիոսի ուրիշ մէկէ աւելի վկայութիւններովս ալ սակայն դժուար չէ հաստատել թէ իր Հայաստանը Մեծ Հայքն է միչու, իրապէս և իրաւագէս երկիրը Հայոց, զոր երկու անգամներով իր Ապացուցուրին Աւետարանի գործին մէջ (Ա. զ 54 և Դ. զ 25) կը յիշատակէ Պարսից ու Պարթևաց հետ քով քովի: Ասկէ զատ իր Եկեղեցական Պատմութեամ մէջ (Ը. Ճ. Ճ.), ուր Գաղերիոս կայսեր հրօմարտակը կ'աւանդէ մեզի, Հայերը կը յիշուին Պարսից և Մարաց միջեւ:

Ուրիմ Եւսերիոսի աչքի առջև ունեցած Հայերը բնիկ երկրին ժողովուրդն են, և ո՛չ թէ գաղուց հետէ օտարացած կամ յաւնացած աշխարհի մը Հայ բնակչութիւնը»:

(Տարումակելի)

ԿՐՈՆԱԿԱՆ

Դիտաթիւնը կը հաւաստէ մեզ թէ անչափելի մնձութիւններ կան ափեզերի մէջ:

ԶԱՏԿԻ ԱԼԹԻՒԴԻՆ

«ՓԱՌՈՐ ՅԱՐԱՒԹԵԱՆ ՎԱ. ՏՂ.Բ.»

Համբիկ Քրիստոնեաթեան ամէնէն մեծ Տօնն է. վասն զի Յարութեան հաւատարին Տօնն է այդ:

Սուրբն Գօդոս Փրկչին Ցարութեան հաւատարին վասն ամէնէն մեծ Տօնն է. վասն զի Յարութիւնը իր բարգարակինը, և յարտարակին թէ Քրիստոս մեռաւ մեր մնջերուն համար, թաղուցաւ. և երդորդ օրը յարութիւն առաւ: Աւրիմն թէ որ կը բարզողի թէ Քրիստոս յարութիւն առաւ մեռներէն, ա՛լ ճեզա՞լ ոմանք ի՞նչպէս կը համարժակին ըստ մեռները յարութիւն չեն առներ: Թէ որ մեռները յարութիւն չեն առներ, ուրիմն Քրիստոս ալ յարութիւն չէ առներ. և եթէ Քրիստոս յարութիւն չէ առներ, փո՞ւ է մեր բարզութիւնը և փո՞ւ է մեր հաւատարինը և փո՞ւ է մեր հաւատարն ալ (Կարպատ Ա. Կրնի. Ժ. ը.):

Այս յատակ տրամադրութեան մէջ է Քրիստոնեաթեան մեծ խորհրդագնդեան մէջ, որ կը բարձրացնէ մարդկային հոգւոյն արժեքը:

Թէ մահմ, սովորաբար բարձրնաւածին պէս, վերչնական երեւոյթ մը չէ որ անձափանցելի վարագոյր մը կը ճագէ յաւստենական բրոգութիւններու վրայ, ասիկա այլ եւս սովորութիւն մըն է նուեղնաւական դիտութեան համար:

Հոգեկան աշխատք մը կայ այս նրեւելի և շօշափելի աշխատանքն ու աշխատանքներէն աւելի մեծ, աւելի վեր, աւելի իրական և ափեական:

Այս երկրագունդը իր ամբողջութեամբը իր անքայի զարկերու պատմական գայութեամբը, իր մարդկային զանգուածով, իր ճրաշայիններով, իր ներկայով ու իր ապազայով, շամանդադ մըն և լոկ՝ համազոյքը լցնող սեսանելի եւ անտեսանելի աշխարհներուն բռու:

Մարդիկ ամէնէն ապուշ մեթուս մը ստեղծեր են Աստուծոյ զաղափարը եւ զործերը մարդկային կերպութիւնը մէջ թափելով: Անոր «մնձութիւնը» եւ զործերը զուրս են սակայն մարդկային չափերէն ու հաշիւններէն:

Գեղեցիկ է այս աշխարհը, բայց մարդիկ չափէն աւելի բարգարածէր եւ գեղեցիկ կը տեսնեն զայն: Այն տեսանելի բաներուն, որոց չափազանց կարեւոր թիւն կ'ընծայենը մննը այս աշխարհի կեաննին: Այնուն առժէր ալ ունենան, շատ պարուիկ, շատ սակաւագին բաննը են: Բայն գեղեցիկ թիւնը համարզոյը լցնող անչափի ու անհաշուելի մնձութիւններուն մէջ է, որոնց արժանի չէ այս աշխարհը. — «զորս ոչ արժէ աշխարհն»:

Զամեան, Խնձեսան, Ն. Սաղբիսան և Ալիսան, աշուունիլ անսննեւու ննանուրենն, Խարենի Խովհանովինին նն սփորած էն Մալ-Դեղնակի աշխատանքական դիեր, որ Տրու գառանին մէջ է: և առկայն առաջին մնան նոյն ինն Ալիսանն է որ ատելի մօտն ուսումնասիրեալ պատմական աղբիւները՝ անդապահած է այդ սփորին վրայ, եւ իր «Շնորհալի եւ Պարագայ իր» գործին մէջ սրբած է իններան եւ իր այդ սփորին բառաջ եկած սփորած էն Մալ-Դեղնակի աշխատանքական դիեր, որ Տրու գառանին մնան նոյն ինն Ալիսանն է որ ատելի մօտն ուսումնասիրեալ պատմական աղբիւները՝ անդապահած է այդ սփորին վրայ, ցոյ տուած է զայի եղեխից իշխան ձույնին (չ. 1131) կարստածն մէջ, որ միջամանն էր Եղեցին և Անտիոքի խխանութեանց, եւ ո՞ւ նոյն ինն Ճառինին անտենավ՝ կը կոչուէ Մրկին Ճառինի: Ալիսան իր մատը դնելով աշխատանքական այս կէտին վրայ, կ'ըսէ. «Ճառ էր անո Մալ-Դեղնակին ալ ի Տրու գույսոի, ուր մեր կօրոդիկոսն եւ իր Շնորհալի եղացար կը նուռին» («Շնորհալի եւ Պարագայ իր» էջ 96—97 և էջ 189):

Խնդիր ու կանինից բռէ, Ալիսանի այս բնապահի գույննենեւուն վրայ է որ ես մատուռու ուսումնանքարքան առաւելայ թիւ Մալմբ. **Տրու** եւ Հառելիպայն, այնի առջև ունինովով պահական աղբիւները, ճնշչէ նուն անձանմբ անձեռն մնելով աշխատանքական և եղացրական դիետեր արքին Տիւլիսին (= Տրու կամ Դրու) և Աօժին (= Մալ կամ Մալք), եւ անսիս կերպած նույնի Ալիսանի մատանին բռան կէտք:

Այս բորբը մանամանօրէն պատցուած են իմ վերսիետա ու առմանսիրեանն մէջ. իսկ նոս բառական կը համուխի յառաջ թերլ եւել զիսաւու կէտք միանց, ուրքո զի բնեցընեւ զաղախու մը կազմեն այդ մատին:

Ա. — Խնձես յառաջ նոյն ինն Շնորհալին կ'ըսէ մեջի իր **Ախոսաննուրեան** մէջ թէ Խիսին ուն-

տան Առանուս' 1149-50ին եկաւ մինչեւ Գեղամանցոց (= Գեղամանիկցոց) աշխատիր և ներառացոց կողմէեր, եւ իր եղացար Գեղարդիս Կրդս., արձակումնեւն գեր մնարու համար նամար եկաւ իրեն սեփական Խոյս:

Խոյի առ յասոկ բայաւորիններ են, եւ ցոյ կուսան թէ Մալ-Դեղնակիր կը զնուէ Գեղամանիկի (Մալուս) և ներառացոց միտէ տեղ մը:

Բ. — Մարտրու Առանցքցին (էջ 514) կ'ըսէ թէ 1161-2-ի Առան, Անիսինի իշխան Սիր Արքանց եկաւ - Անիսոս Եղիշերն եւ ի Ծերդը Կարողիկոսի. ու կոյի Ծով- եւ առէն կողմէ ապահանից, եւայն:

Պատմական եւ աշխատանքական այս վկայութիւնն այ առ յասոկ է, եւ ցոյ կուսան թէ Անիսինի իշխամը եկած մաս է իրեն սահմանակից երկիր մը, այսինքն Անիսոյն Եղիշերը, ու անուս Խարբեղը չէ, ոչ այ ան ու Խովի-Խովնինկը ու:

Գ. — ԱՌՓԵՐԻ մէջ (Ճ. էջ 45-48) առէի մանամանուստիրն կը զննեն Մալ-Դեղնակի վրայ. — Խոյակին նույն կ'ըսէ այս աղբիւներ, եկան առեւելուն, տիեզին մինչեւ Խոյակի անհանները, առն ինեւսանի. յեսու կոմի առ Թարուան նազար շշախաւուն մէծի Անիսոյոց, եւ նիս այս մանամանները, կ'ըսէ, Գեղօր Կրդս. եւ իր եղացար Ներսա (Շնորհալի) կը բնակին «Եղիշեր Անիսոյաց, ի զաւարին Տրու, ի փարացոյն զգիակն Մալ կոչար:

Այս այ առ յասոկ սեղեկուրին մըն է աշխատանքական, ու Խարենի և ասու Խովի-Խովնինի նետ տեկ կոպ չունի:

Երե ։ Մալ-Դեղնակը՝ Խարեւոյն նույն եղած րիւսու, կուրելի⁵ է մսածել թէ առու (Խովի-Խովնինի) աշխատանքական դիերը բայաւորեալ համար Խարեւոյի պիտի նախաւար գետի առաջ բերել սուած պատմական վկայութիւններն վեշչմին մէջ կը շեշտուի **Տրու** անունը. ու այս մսած զաւառ մըն էր, իսկ այդ մսածն է իւսի մը եւ առու կողմին համանաւած թիւր զիսին մը, Ամրեկի առ մօտիկի, հիստիսոյին առեւմեն կողմին իսկ Տրուին մօտ, զարձակ առեւմենն նիւսախան նիւսախանի կողմին:

Գեղ. Խոյեան ո՞չ մխաբ չէ կրցան բըրնել այս պատմական եւ աշխատանքական պատցուածներն արձեր, այս նուն պայտակի ենքուրութիւններն՝ Խովի-Խովնինի եւ Հառ-Դրուի վետարեալ դիումերն առ ուն է կոպէն Խարեւոյի «Ծովի-Խովնինին» (էջ 29-30):

Ամենուն թիւր բայր բայր գարծածերզ, պիտի բան ու կատաւու իսկ կապատկանուրին է առիկու և ո՞չ թէ պատմուրին:

Պատմակ Գեղ. Խոյեանի զիսին եկեղեց մասին, որտանիմի դուռու մըն է այն՝ 1915-ի անուն է անհամատայի սնիւնեւն....

Մեր կառձիսով Գեղ. Խոյեան, ու խնդիր իւսական պատմակ մըն է այդ սնիւնեւն, բայս իր նիս-

թիվ մէջ է Աշ օքանունի ունի մնացածելու իր նրանցիւրու և պատճառցելու իերպերը:

Բայց կ'եւելի թէ «Շռով. Առաջնական հեղինակը այս իշխանութիւնուն պատճառութեան մէջ այլ իրդանունիք չէ եղու», և «բազմարի սխալները բայց չէ», ինչպէս որ կ'անձնուի Ձեւզնոյն ՄՇԱԿ քերին (Թիվ 206, ՅՇ. ՅՇ. 10 և 27) մէջ հասաւալուած որուածերէն, «Ա. Ա. մը Դոմի - Ա. Օլժիկի զիբորի շուշ» խուզավով, ուր կ'ըստի թէ այս «պիտի նախանձեան, ունիման խօսեան նուանածոյ մըն է», և այնին:

Ի առաջի Պետ. Խելային Մշակի նմանառութիւններուն գիտ, իր պատճառունին նետ, զայ ուու ու ոյիս ըրբ նաև Խաղաղեալիս այն սուերը, ուր ուզուած էն իշխան՝ յօք զիբորի նուե ընդունածեան կողմէն, և մին տառապաօծ է փունչ մը կազմել առանցք, իրեւ զրահանական խաղուածներ յարմի նեղինակներու գրախանակներու խորագրին առկի, թէն առան, բայց չուուն, պարզ նամակներ են, զրուած իրեւ նարկ փախհանակառքան, և ո՞չ թէ իրեւ զրահանական զնամասում, զոն զիբի Ա. Մասին այլանդաւարիններուն . . . համար:

Բ. Ա.

Գ. Ա.

մասց կը գտնեն ձեւի առաջ կառաւցաւած մը, և նոյն տաճ, առաջն ո՞չ միշ, մրարին մը ու կը նուէ բներցողին նույնին, զեղցիկ ըմբռածին առջեւ զարմանայի, զբացուածներ և պատճառութիւններու պայմանութեան կարօսով լիւուած առաջազ պատահուի մը ընդունաւած զեղցիկութեան մը պէս, ու պարզուել առաջ կը ծառաւ բայց ու նեռառութեան ներառութեան մէջ:

Ապասնի միհանական բանասէնի խմար ունի, իր պատճառութեան մասն է եւ ազնի, և իր ներառածներ ունին:

Բայց պիտի փախանքին ու ինչ մը աւելի պայծառանային իր սեսիններ, և նու շարեր ու պիտի նետիք ունացինին, ինչպէս նամեկի է յառաջ իր սիրու առանակներ, քերին մեջի մեր խառաւ մէջ նիսաւուած յայ նախանդութեան մը կառուցաւմը, փախանակ ու ունացած և պատճառութիւն ներմշուններու:

Անորդ կը համարէմ նմայննե զնեկ նոս իր առուեսնի Ամրացողին կարգացւելու արժանի նասորին մը է բայց անոնցնէ, ու կը սիրեն նամակի առայսարքներ զեղցիկ և ապնաւական ձեւի մը հետապոյը և կախարացին:

Եռաւազէ

Գ. Ա.

Ս. ԳԻՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

«Բաւոյ առ Հռովմայիցիս»

Հերու, Սիմենի Յունիսի Թիւին մէջ (Եջ 165-168) խոսելով Ս. Գիրքի ընթերցման առաննեն պէտքին վրայ, խոստացած էինք առաջնորդել ընթերցողներուն՝ սկսելով Հըռումայիցւոց թուղթէն:

Կը փութանք կատարել մեր խոստումը:

1.— Մեր կարգամիք զիրքը կամ զիրքը նոր կոտակարանէն՝ կոր թիւով 20 դարերու հնութիւն մը ունին. և այսքան հին ու երկար ժամանակի մը ընթացքին անոնք ձեռքէ ձեռք ընդօրինակուելով և տեղէ տեղ փոխազդուելով կրնացին ենթարկուիլ փոփոխումներու և այլայլութեարու։ Հեղինակին զըւէն կոսմ բնագիրը միւայն կրնար ապահովութիւն տալ մեզի, զոր օրինակ, զիանալու համար թէ ի՞նչպիսի յաւելումներ կամ փոփոխումներ կրած է Հըռումայիցւոց թուղթը։ Դժբախտարար այդպիսի բնագիրներ չեն պահուած. և մեզ հասած ընդօրինակութիւններու ամէնէն հինն ալ Զորրորդ զարէն անդին չ'անցնիր։

Այս է պատճառը որ ինչ ինչ տարրեւ բաւթիւններ կը զանուին օրինակէ օրինակ,

2.—Պէտք է զիտնալ որ առաքեալներ իրենց կազմակերպած և կեղծցիներուն և իրենց ժամանակի պէտքերուն համար զրեցին այս թուղթերը կամ նամակները, և կարելի չէ ըսել թէ անոնք աշքի տաջն առնեցան նաև իրենցմէ հագարաւոր տարիներ և աքաքեր քրիստոնեայ և կեղծցիներու պէտքերը: Այսպիսի հաւատում մը շատ տառօրինակ պիտի ըլլար: Բայց առաքելական դարաւ և կեղծցիներուն ուղղուած այդ թուղթեր կը բովանդակին իրենց մէջ այնպիսի սկզբունքներ և ճշմարտութիւններ և աւանդութիւններ, ինչպէս նաև պատմական իրողութիւններ, որ թանկապին են բոլոր ժամանակներու և տեղերու քրիստոնէութեան համար, և այդ է պատմանը որ Առաքելական թուղթեր պահուեցան և կեղծցիներու մէջ և կարդացուեցան ու կը կարդացուին մինչև հիմայ, իրեն առաջին ձեռքէ եւած վաւերազիրներ, որոնց վրայ կը կոթնինք քրիստոնէական հաւատալիքներու և բարոյագիտութեան վաղեմի հիմերը ճանշնալու և ատոնց մեկնութիւնները տալու համար:

3.—Պէտք է զիտնալ նաև որ այն ժամանակներու կրօնքը հեթանոսական էր: և Հին Կտակարանի կրօնքով կրթուած Հրեաները գաղթականութիւններ հաստատած էին այդ հիմունու երկիրներու մէջ: Աւետարանը այս գաղթական Հրեաներու մէջ կը քարոզուէր նախ, և անոնց միջոցաւ ալ կը տարածուէր հեթանոսներու մէջ:

4.—Պատճենուին, հրէութեան բնաշխարհը, հոռմէական կերիշանութեան ներքեւ էր քրիստոնէութեան ծագումին, և հոռմէական պիտութեան ալ պաշտօնական կը բռնքն էր հեթանոսութիւնը:

Պօզու առաքեալ իր առաքելական գործունէութեան ասպարէզ բնարեց հոռմէական պիտութեան սոհմաններուն մէջ գրտնուող հրեայ զարութները, որոնք սփուրսուծ էին այն տանին Աօթու (=Փոքր-Ասիա) կոչուած երկրն արևմտեան մասերը: Այս երկիրներ, սկսելով Պատաւիայէն (Ինկիքրի): իրենց ամբողջութեամբ թերակղզի մը կը ձեացնեն:

5.—Հոռմի մէջ ալ կար Հրեայ գաղութ մը, բաւական զօրաւոր և բարաւոճ, և Պօզու շատ միծ փափաք ուներ երթալ Հոռմ, տեսնել կեզբոնը այն պե-

տութեան որ իր զրաշին տակ առած էր այնատենուան ծանօթ աշխարհին մեծադոյն մասը, Միջերկրականի աւազանին չուրչ: ինքն ալ հսոմէական քաղաքացի մըն էր, և թերես, ո՛վ զիտէ, կ'ուզէր հեթանոսաւթիւնը ուղղակի իր սիրտէն զարնել Աւատարանի լուսով:

Պօզու շատ անգամ միտքը զրտ այցելել Հոռմ, Աւետարանի պատուզ գտնելու համար այդ հեթանոս միջավայրի մէջ ալ, բայց արգելքներ ունեցաւ (Հոռմ. Ա. 10-15, ԺԵ. 22-24):

6.—Ե՞ր զրուեցաւ Հոռմայիցուց թուղթը և մը տեղէն: Այս մասին ակնարկութիւններ մը կան արդէն թէ՝ նոյն ինքն Հոռմայիցուց թուղթին մէջ և թէ ուրիշ զրուածներու մէջ: Պօզու Մակեդոնիոյ և Աքայիոյ կողմէրը կը զանուէր հարուստ և կեղծցիներէ նպաստներ հուսաքած էր և անձամբ երուսալէմ պիտի բերէր զանոնք (Հոռմ. ԺԵ. 18-29, Գործք. ԲԴ. 17) և յետոյ պիտի երթար Հոռմ (Հոռմ. Ա. 10, ԺԵ. 24, Գործք. Առք. ԺՔ. 212, Ի. 1-6, Ա. Կրնթ. ԺԶ. 1-6 Բ. Կրնթ. Բ. 1-8 Թ. 1-5): իսկ այս ճամրորգութեան ընթացքին կորնթոս կը զանուէր երեք ամբուներէ ի վեր (55-56ին), և Հոռմայիցուց թուղթը զրեց Կորնթոսէն (56ին) և զրկեց զայն քոյլ Փիրէի հետ, որ սարկաւազունին էր Քենքաւայրի (հաւահանգիստ Կորնթոսի) և կեղծցեցն (Հոռմ. ԺԶ. 1):

7.—Ինչ կերպով քրիստոնէութիւն մըտած էր Հոռմ, քանի որ զես Պօզու չէր զացած հն, ոչ ալ . . . Պիտրոս:

Ամէնէն յոտաջ զիտենք թէ Հոռմէն Հրեայ ուխտաւորներ եկած էին երուսալէմ, Պատեքի տօնին, և ներկայ զանուէր Պենտէկոստէ հրաշալի օրուան (Գործք. Բ. 10, հմմտ. Հոռմ. ԺԵ. 11, ԺԶ. 7) հաւատացած էին Աւետարանի և իրենց վերաբարձին տարած էին առաջին աւետարունոր կրօնքին: Յետոյ Պօզու ինքն բաւական լոյս կը սփաէ Հոռմի այս անդրանիկ և կեղծցեցյ կազմութեան մասին այս թուղթին վերջը (ԺԶ), երբ յականէ յանուանէ կ'ողջունէ 26 անձեր, որոնք մեծ մասամբ հեթանոս անուններ են:

Այսպէս կ'երևի թէ Պօզու արդէն ինքն ալ զործիչներ զրկած էր Հոռմ, Աւետարան քարոզուելու և կամ թէ իրեն ծանօթ-

ներէն գործով Հռոմ հաստատուողներէն ու մանց յանձնաբարած էր կազմակերպել առանին եկեղեցի մը . այսպէս, նպենի առու, որ բնիկ Աստացի է, Պօղոսի սիրելին և անոր աշակերտ, անշուշտ գործեց Հռոմի մէջ, Մարիա, որ շատ աշխատանք ունեցած է Հռոմի եկեղեցւոյն կազմութեան մէջ, այսպէս նաև ուրիշ առուները, որոնց կեանքն ու գործերը կը դնահատուին Պօղոսի կողմէն: Խնամքով կարդացէք Հռմ. ԺԶ. գլուխու:

8.—Ի՞նչ լեզուով գրուած է թուղթը և ի՞նչ նիւթի վրայ:

Հռոմի բնիկ լեզուն թէն լատիներէն էր, բայց մինչեւ Գրդ գար յունարէն կը խօսեէին ու կը գրէին Հռոմէացիներ, իրրե մը շակոյթի լեզու: Հետեաբար Պօղոսն ալ յունարէն գրեց իր թուղթը: Գալով նիւթին, ատիկա շատ հետաքրքրական է այդ ժամանակի համար, մանաւանդ և առաքելական գարու եկեղեցւոյն պատմութեան տեսակէտէն: Քրիստոնէութեան դարձող Հրեաներ կը պնդէին թէ Մովսիսական օրէնքին տրամադրութիւնները պէտք է յարդուին քրիստոնէութեան մէջ ալ. և առանց ամէնէն գլխաւորը կը նկատուէր թէ փատութիւնը: Իսկ Պօղոս կը պնդէր թէ հին օրէնքին այդպիսի արամադրութիւնները ինքնին խափանուած են Աւետարանով: Թէ՛ քրիստոնեայ ըլլալ և թէ՛ հրէական սովորութիւնները պահէլ՝ տարօրինակ մտայնութիւն մըն էր, և Պօղոս բուռն կերպով կը մաքառէր ատոր դէմ խօսքով և գրչով:

Եւ Հռոմէացւոց, ինչպէս նաև Գաղատացւոց ուղղուած թուղթերը շատ հետաքրքրական են այս կողմէն:

Պօղոս երկար ատենէ ի վեր կը մաքառէր այս սկզբունքի համար և Հռոմէացւոց թուղթին գրութենէն 7 տարի յառաջ (49-ին) Երուսաղէմի ժողովին մէջ ալ (Խործք ժԵ) խորհրդակցած էին և Պօղոսին տեսութիւնը յազթած էր, և ինքն որոշած էր Հեթանոսներու մէջ գործել և որչափ որ կարելի է, ազատ ըլլալ հրէական մտայնութենէ և աւանդամութենէ:

Բայց մտարորական ու աւանդապահ Հրեաներ այնպէս կարծելով թէ Պօղոսին ընթացքը կործանարար պիտի ըլլայ Մովսիսական օրէնքին համոր, կազմակերպուե-

ցան ու սկսան դժուարութիւններ հանել Պօղոսին դէմ: Պօղոս ուր որ կ'երթար, կը քարոզէր, եկեղեցի կը կազմակերպէր, անոնք, այդ սուտ առաջնորդներ, ինչպէս որ Պօղոս ինքն կ'որակէ զանոնք, հակառակը կը քարոզէին, կը խոսովէին աւետարաններ եկեղեցիներն ու համայնքները, և այս հակառակութիւնը այնքան յառաջ տարին որ, ինչպէս զիտինք, երգումով վճռեցին սպաններ զինքը Երուսաղէմի մէջ, բայց Հռոմէական իշխանութիւնը կրցաւ ազատել զինքն այդ խուժանային մահափորձէն, և իր իսկ բողոքին վրայ Հռոմ զրկեց զինքըն կայսերական ատեանին մէջ զատուելու համար:

Արդ՝ Հռոմայեցւոց թուղթին մէջ կը գոնանք Պօղոսին ամէնէն ուժգին քննդատութիւնները թէ՛ հրէամիա քրիստոնեաներու դէմ և թէ՛ հեթանոսական սովորութիւններու և անրարոյութիւններու դէմ. այս վերջններն ալ տարբեր դժուարութիւններ էին նորածին եկեղեցւոյն շուրջ, և հետեւաբար առաքեալը ստիպուած էր իր քարոզած Աւետարանը պաշտպանել թէ՛ հրէամիա քրիստոնեաններուն և թէ՛ հեթանոսներուն դէմ եկեղեցւոյն մէջ և եկեղեցին գուրա:

9.—Զորս զլաւաւոր մոսեր ունի այս 16 զլուխներու բաժնուած թուղթը: Վերլուծնք բովանդակութիւնը.

Ա.—Ներածութիւն (Ա. 1-15).

Բ.—Վարդապետական մաս (Ա. 16-ՓԱ).

—Այս մասին մէջ է որ կը բացատրէ հաւատով արդարացման խնդիրը (Ա. 16-17), մատնանիշ կ'ընէ, իրրե իրոզութիւն, սոսկականութիւնը բարքերուն թէ՛ հեթանոսներուն (Ա. 18-32) և թէ՛ Հրէկեց (Բ. 1-29), իրեւ արդիւնք անհաւատութեան, և Ա. Գիրքով կը հաստատէ իր ըսածները (Գ. 9-20):

—Կը զիտէ ու կ'ընդլայնէ նոյն խընդիրը և կը բացատրէ թէ Փրկչին քաւշական մանը կարելի կ'ընէ հաւատքով արգարացումը (Գ. 21-25), կը մերժէ պարձանքները (Գ. 27-31), Արբահամի օրինակով կ'ապացուցէ ըսածները (Գ.), կը մատնանշէ հաւատքով արգարացման արդիւնքները (Ե. 1-11), կը բազդատէ առաջին և երկրորդ Ազամը իրարու հետ (Ե. 12-21):

—Կը բացատրէ յառաջտըւական ար-

դարացումը Քրիստոսի հետ միանալով (Զ. 1-14), կը պարզէ քրիստոնեաներուն աղաւագը օրէնքի հարկէն (Զ. 15-է), յոյց կուտայ Հոգիով կեանքը (Ը. 1-17), արաւածներուն ակնկալութիւնը և քրիստոնէից յոյցը (Ը. 18-39):

Թ.—ԺԱ. գլուխներու մէջ խօրայելացիներու մերժուելուն արդարութիւնն (Թ. 1-23) ու պատճառը (Ժ. 1-21) և կը յորդորէ ապագայ փերահաստատութեան յուշով (ԺԱ.):

Դ. Գործեական խրաներ և յորդորներ (ԺԲ. 1-ԺԵ. 13).

—Քրիստոնէից պարտականութիւնները (ԺԲ. 1-21), եկեղեցի և պետութիւն (ԺԴ. 1-7), Սիրոյ օրէնքը (ԺԴ. 8-14), ներողամտութիւն (ԺԴ. 1-ԺԵ. 3) միութիւնը Հրէից և Հեթանոսաց (ԺԵ. 4-13):

Դ. Եղրակացորդին (ԺԵ. 14-ԺԳ.):

—Անձնական շնչիչ խորհրդածութիւններ և Ապանիտ երթալու առթիւ Հըսոմմ այցելելու խոստում, և ողջոյնների ծանօթներուն (ԺԵ. 14-ԺԳ. 16), վերջին խրատ մըն ալ և փառութրութիւն (ԺԳ. 17-28):

Ինչպէս կը տեսնուի այս վերլուծումնեն Հոսմայլիցոց թուղթը կը խօսի այնպիսի խնդիրներու վրայ, որոնք շատ ծանրակրշուն արժէք մը ունին Առաքելական գուրու եկեղեցոյն համար:

Ներկայ ժամանակներու եկեղեցիները չտւնին այդ խնդիրները, բայց մենք պէտք ունինք այս թուղթին մէջ բացատրուած պատմական քրիստոնէութեան փորձառութիւններուն:

—Ի՞նչ է մեր հաւատքը Աստուծոյ վրայ:

—Ի՞նչ է մեր ըմբռնումը Յիսուս-Քրիստոսի մասին:

—Որո՞նք են քրիստոնէական կեանքը ապականող երեսոյթներ:

—Որո՞նք են մաքուր և հաւատացեալ մարզու կեանքի մը պայմանները:

—Ո՞քափ պէտք ունինք Պօղոսի ոգիով աշխատող հոգեւորականներու .—ահա՛ հարցումներ, որոնք կուգան մեր միտքը, երբ խղճմտօրէն կը կարգանք եւ կ'ուսումնասիրենք այս թուղթը:

Այս ծանօթիւններով և նախապատըրաստութիւններով սպասազինուելէ ետքը, սկսեցէ կարգալ այս թուղթը ձեր զրա-

բար կամ աշխարհաբար նոր կտակարանին մէջ, հանդարտ և ուշագիր, և պիտի տեսնէք թէ ո՛քափ հաճելի և հետաքրքրական ընթերցում մը կ'ընէք զրեթէ 2000 տարուան հնութիւն ունեցող զիրքէ մը:

Հասնուցած, ուշիմ, հետաքրքրիր քրիստոնեաներու համար ամէնէն զործնական և ամէնէն սքանչելի ՔՄԻՄՏՄՌՆԷԱԿԱՆ մընէ Ա. Գիրքը:

Կարգացէ՛ ք զայն սիրով, պատկառանորդ և երկիւղած ողիով:

F. Ե.

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Ամուսնութիւնը բնական հաստատութիւնն մըն է ենթարկուած քաղաքային իշխանութեան հակալվութիւն: Բայց մարզը, ինչպէս որ քրիստոնէութիւնը կ'ըմբռնէ զայն, զուտ երկրաւոր էակ մը չէ, այլ միանգամայն Աստուծոյ պատկերն ու փառքն ըլլալով՝ իր աշխատանքը պիտի մինի ապրիլ երկինքի համար, և ամուսնական կապը այդ զործին կը նոպասէ երբ սրբազործուած է ան Աւետարանով: Այն ժամանակ ամուսին միութիւնն իրեն առարկայ ունի միայն անոնց հոգեկան թուիչքը—այս բառին խկական առումնվար—այլ եւ անոնց կրօնական զարգացումն և բարոյական կատարելութիւնը: Ասի չի նշանակերթէ ամուսնաւոր վիճակին զուրս միշտ և հարկադրաբար մարզը անկատար պիտի ըլլայ, երբ անդին հոյակատպ օրինակներ հակառակը կ'ապացուցեն Աստուծոյ թագաւորութեան պատմութեանը մէջ, սոկայն և այնպէս երբ կ'ուզեն սերական կեանքն ընտրել, հարկ է որ ամուսնութեան ձեւին տակ ըլլայ ան, անպատկ կենակցութիւնը (concupinage) ստնակապ մըն է անձնական գործին, ինչպէս և իր ընկերային պարտապրումին համար: Բա՛ւ կը համարենք այս մասին երկու օրինակներ ներկայել:

ա) Ամուսնութեան բնական արդիւնքը տեսակին անումն է: Ստոյգ է թէ ասոր համար ամուսնական հաւատաբանութիւնը երբեք պահանջ մը չէ: Բայց ներկայի ալ չէ

անհասունի վերածել մարզը՝ որ իր մէջ ուղիւց զօրութիւն մը պիտի չզգայ բայց եթէ մասկ բնազդին հետեւողութիւնը, անշուշտ այս չէ Աւետարանին պատուէրը։ Մարզկային զարգացումը կրօնական եղած է, ո՛չ թէ այլամերօքէն ֆիզիքական։ այնպէս է նաև բոլոր գաստիարակչական գործին նկարագիրը։ ուրիշ խօսքով՝ հայրերու և մայրերու ջանքն է դաստիարակել իրենց ընտանիքը, այսինքն զանոնք ուսուցանել բարոյն մէջ։ Արդ, ի՞նչպէս պիտի հասնէին այդ նպատակին երբ անպատկ կինակցութեան կառչած կը մնան։ Ի՞նչ կ'ընեն այն ծնողքները՝ որոնց անառակութիւնը իրենց միակ յօժտութիւնն է։ ամէն առիթի մէջ իրենց սիրային յարաբերութիւնները փոփոխելով պիտի կրնային առանին կհանքի պատկեր մը ընծայել իրենց զաւակներան, տաճար մը՝ առողջ և զօրաւոր մինութուով։ Անոնց ուրիշ ճամրայ չէր մնար եթէ լքել զանոնք որոնց կեանք արւած են և անձնատիրութեամբ ազատիլ անոնցմէ։ Այն ժամանակ պիտի տեսնէին օրը սաօրէական ծաւալու մը անկարգութեան, երբ ամէնքը նոյնօրինակ շարժէին, ընտանիքը պիտի ընկզմէր պիտութեան անշունդին մէջ և ուղղակի պիտի հասնէին համայնավարութեան։ Արդ՝ ընկերութիւնը չի կրնար ըլլալ զաստիարակը—քրիստոնէական իմաստով—մանկութեան։ Այդ տեսակ աշխատանք մը, լիցուն անհամար գժուարութիւններով, չի կընար կատարուի հաւաքական անձնաւորութիւնով մը՝ որ չունի ո՛չ սիրատ, ո՛չ զգացում, ո՛չ համզում, վասնդի անհատական կեանքը կ'անդիտանայ։ Այդ աշխատանքը կը պահանջէ մտածումի նուիրումի և զոհողութեան բովանդակութիւն մը՝ զոր միմիայն հայրերն ու մայրերը կընան ցոյց տալ։ Եթէ ծնողք պարտաւորեալ են իրենց զաւակները կըրթելը բարեւոյն մէջ, ամուսնութիւնն ալ պէտք է հաստատուած ըլլայ բարեւոյն, այսինքն կրօնքին և բարոյականին վրայ։

(բ) Բայց ասով ծնողքներուն չէ որ կը պարտազրուի Աւետարանի այդ օրէնքը։ ամոլը աւելի զժուարաւ կընայ ծողողպրիլ անոր լուծէն։ Քրիստոնէութեան համաձայն ամուսնութեան նպատակը ամէն բանէ առաջ բարոյական և հոգեկան է։ վասն զի երբ անհատը մենաւոր է, անկատար է.

արդ՝ ոչ մէկ բան կեանքի այնքան սրբագրիչն է ո՛րքան ամուսնական կեանքի կիւրարկումը։ Երբ կինն ու այբբ կը միանան բարւոյն գործնականացումին մէջ, այդ սուրբ ներգաշնակութիւնը կը բազմապատկէ անոնց կորովը։ վասն զի միակամհամայնութիւնով է որ կը կոռուին (չարին գէմ)։ Փարձառութիւնը ցոյց կուտայթէ ամուսնութիւնը կը բարձրացնէ հոգին, մինչդեռ հակառակ տրամադրութիւնը զայն կ'անբանացնէ։ սիրոյ բառին երկու ներհակ զնահատումին—մարզկային իմաստին մէջ առնելով—հետ կը կապուին այս ծայրացեղ հետեւանքները։ Ազատութեան մասին ըսուած է թէ ատկէ աւելի վսեմ սահմանարար (terme) չկայ, բայց ամէնէն աւելի զեղծուած բանն է այն։ Արդ՝ այս զի առզութիւնը քաջ կը պատշաճի սերական զրգինին։ Ի՞նչ աւելի վսեմ, և ի՞նչ աւելի անարգ, ի՞նչ աւելի մաքուր քան այն սէրը՝ որ կը սրբազորէ պարտականութիւնը, և ի՞նչ աւելի զնկումէ անկում, զէպի կործանում։ Ո՞րն է ուրեմն այն անդունդը որ կը բաժնէ այդ երկու սէրերը։ մին՝ զգացումներուն ամէնէն բարին, միւսը՝ ամէնէն ցածը և աղետաւորը։ Ամուսնութիւնն է որ կը զէք այդ սահմանը։ Գրեթէ միշտ մսեղ կիրքը, այս կանոնէն զուրս զոհացուելով, տիզմերու մէջ կը քաշէ ենթակաները, մինչդեռ ամուսնական կեանքին մէջ սէրը ամէնէն կորպիլ բարոյական զսպանակներէն մէկն է, զոր հնարաւոր ըլլայ յդանալ։ Այս անեղզիլ փորձառութիւնը, հաստատելով նախընթաց հետեւութիւնները (Déduction), կը յիշեցնէ մեզի թէ՛ առանց վասնգի չէ որ մարզիկ կ'ոտնահարեն աստուածային օրէնքը։ և եթէ ամուսնական վիճակը բնական է, անոր հիմնագրած հաստատութիւնը կերպանցանցապէ բարոյական է և էական կարևորութիւն ունի քրիստոնէին համար։

Արդ՝ աւետարանական տեսակէտով բարոյականը կը լուծուի կրօնական կեանքի մէջ, բարին հնագանզութիւն մըն է Տիրոջ

և անոր սուրբ կամքին։ Ահաւասիկ ի՞նչ դուրս կուզայ ամուսնութեան վերաբերմամբ Հին Կտակարանի յլացումէն, ինչպէս որ ցոյց կուտայ Ս. Գրքի բնագիրը՝ երբ այդ նիւթին վրայ կը խօսի։ Արգէն Հին Կտակարանի մէջ Ծննդոց հռչակաւոր կտորը Բ. 18-24 կը նիշէ, կարգառուն զիծով մը, աւելի ուշ՝ նոր Աւաստի ներքեւ ընդլայնուած ուսուցման ընդհանուր գաղտնափառը։

«Աղէկ չէ, կը սէ Աստուած, որ մարզը միայնակ ըլլայ։ Արդ՝ ո՞վ պիտի ամբողջացնէ զայն։ Երկրի կենդանինե՞րը. ոչ վասն զի սիրեն նմանող օգնականներ չեն։ Կրնան անոնք ըլլալ իր ծառաները, բայց ոչ իր կեանքի ընկերները (19-20). 21-24 համարներով կը լուծուի պատմութեան վերջարանը։ Տառացիօքէն առնելով՝ այդ նկարագրութիւնը արտակարգ իմաստ մը կը ներկայացնէ։ Ի՞նչպէս Ադամիր ծագումին մէջ ծայրատուած պիտի ըլլար. անոր կմախքը տարբա՞ր պիտի մինէր քան իր կնոջնը զոր Աստուած անոր օգնական կուտայ։ Ինչո՞ւ այն ժամանակէն սկսեալ այդ ձեռաշնդաւմը չփոխանցուեցաւ իր սերունդին։

Երեխայական հարցում, պիտի ըսեն։ կը հասկնամ, բայց ի՞նչպէս պէտք է խուսափիլ տառացի մեկնութենէն։ Ամէնքը կը փոխակերպուին, ընդհակառակը, երբ երբայական բնագրին պարունակած կրօնական գաղափարին իմաստը վեր հանեն։ Սըրազան մատենագիրն ըսել կ'ուզէ թէ այլ ու կին իրականութեան մէջ մէկի պէս են. սոսկորները իմ սոսկորներէն, միսը իմ միսէն, արտայայտի խօսքը միակ կապակցութիւն մը չի նշանակեր, չի՞նթադրեր նաև ծանր դատապարտութիւնը անառակութեան՝ այն հրէշային զործին՝ որ կերպով մը կը յօշոտէ մարզը իր բնական գործարանաւորութենէն խլերով։ Արդ՝ այդ խորին, անլուծելի միութիւնը հռուց կեանքին, ինչպէս մարմինին, հաստատուած է Աստուածմէ։ Ահա ա՛յս է կրօնական ամուսնութեան արժէքը, որ աւելի ուշագրաւ խօսքերով պարզուած է Եղիսացւոց թուղթին մէջ (Ե. 22-23)։ Համաձայն Առաքեալի խօսքերուն, ամսւանական սէրը կը բարձրանայ բարձրութեանը այն կապին։ որ կը միացնէ զբիստոս իր նկեղեցիին հետ։ Այն առեն իրաքանչիւր հաւատաց-

եալ, իր հաւայն Ս. Հոգիին Տաճարն է։ Աստուածոյ առջև իրենց կոած միութեան գաշինքով քրիստոնեայ ամուսնները, իրենց միասնական կեանքի մէջ, Տիրոջ փառքին համոր լուսաւորուած Տաճարին, որբուած անոր ներկայութիւնով։

Ընկերութեան բարզաւաճումին և խաղաղութեան, ինչպէս նուե կոռւած գաշինքին և հանդիսաւորապէս տրուած խոստումին պահպանութեանը վրայ հակել՝ պետութիւն իրաւունքն և միանգամացն պարտականութիւնն է. վասն զի մարդկային ընկերութեան վատթարացումը իր քայլքայում իսկ է։ Այնուհանդերձ եկեղեցին երկրի վրայ Փրկչի ներկայացուցիչն ըլլալով, անոր կը պատկանի այդ զաշինքին վաւերականութեան հաստատումը՝ հայցելով Ամալին վրայ աստուածային չնորհները. այլապէս պիտի չկարողանան ըլլալ Յիսուսի աշակերտները։ Պիտի չկրնան իրենց վրայ կոչել երկնքի օրհնութիւնները՝ անոր կուտայ վեհ նկարագիրը որբութեան զոր կը պահանջէ Աւետարանը։

Հայոցց
Jules Bovon ԵՐՈՒԱՆԴ ԵԳԻԱԿՈՍՊՈՍ

Ք Ամէն ոք իր անձին ուկո լո՞ր պիրէ իր կինը (Ելիս. Խ. 33):

Ք ԱՇԽԵՐ, սիրեցէք ձեր կիները և մի՛ զառնացնէք զանոնք (Կող. Գ. 19):

Ք Իմաստուն կիներ տուներ կը չինեն, իսկ առզգամ կիներ իրենց ձեռքով կը կործանեն (Առկ. Ժ. 1):

Ք Ամօթզամ կինը չնորհներու վրայ չնորհը մըն է (Սիրամ Խ. 1):

Ք Փազզուիս կինը թանկազին քարեկէն աւելի թանկագին է (Առկ. Լ. Ա. 10):

Ք Զար կինը վէրքն է սրտին (Սիրամ Խ. 31):

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՒԹԻ ՃԱՌԵՐՈՒՆ ՄԵԿ ՆՈՐ ԶԵՐԱԳԻՐԸ

Տար. Սիմեոն, թիւ 3. 84 էջ

Տպագիրը

Ճառ. ԺԱ

Էջ 107 ա.	25 չես ի հուր զիմել	չէ ի հուր զիմել
» — »	30 զարտմութիւնն ցածռւսցուք	զարտմութիւնն ցածռւսցուք
» — »	33 և ընդ հաշտել ընկերին . . .	և հաշտել ընդ ընկերին մեք . . .
		Ճառ. ԻԳ
» 108 ա	7 գաղարեն	չիշեալ գաղարեն
» — »	15 իժ խորամանկն	իբրև զիժ խորամանկ
» — »	14 զնենգութիւն սրտին	զնենգութիւնն ի սրտին
» — »	17 ի անս մարդ երեխ և բարիւք . . .	տիսարանօք մարդ երեխ և բարուք . . .
» 109 ս	1 նախանձորդին: Բղձանայ, ըլջի մարտորհ յուռ մարեալ (Տու. Էւ Նշանիկ նաև «ուռ մարեալ», ոյար- մարեալ) Քունանինը ըստ այլ Ձու.)	նախանձորդին: Երջի մը- տախորհ գումարեալ.
» — »	4 նմա խորհի և զմանս և զամնայն չարս և չարալուրս	նմա խորհի և զմարդամահն և զա- մնայն համբաւս չարալուրս .
» — »	12 ըղձանայ չարինչ խօսիլ զնախան- ձորդէն	ըղձանայ լսել չարախօսութիւն ըղ- ճախանձորդէն
» — »	20 չարախօսէ զնմանեաց նորա	չարախօսէ զընտանեաց նորա
» — »	07 այլ օծս և իժս	այլ աւծս, իշ'նձս և իժս
» — »	33 զարմանամ եւս	զարմանամ եւս ես
» 110 ս	13 ի մեծս յօժարեցուցանէ	ի մեծամեծ վնասս յօժարեցուցանէ
» — »	16-17 մինչեւ տանց և բերդից վեստել	մինչեւ բարդիցն ես և տանց վնասել
» — »	21 և զողալ և սարսել ի ձեռաց մա- հուցն	և ոչ զողալ և սարսել ի բազում մահուց
» — »	33 զտունս հրդեհել	զինչս հրդեհել, զտունս կործանել
» 111 ս	6 յայսպիսի խորս . . .	յայսպիսի խորխորաւս . . .
» — »	16 քինահանութեան	քինահանութեամբ
» — »	17-19 ած զմտաւ . . . և ի սնավաստակ անօրէնութեան քո ահա այրե- ցան . . .	ած զմտաւ . . . զնավաստակ ամ- բարչտութիւնս քո: Ահա այրե- ցան . . .
» — »	25 . . . ի վերայ հոսեսցեն նոցա: Առ- ժամայն մի ցաւեցուցեր	. . . ի վերոյ հոսեսցին: Զնոսա առ- ժամ մի ցաւեցուցեր
» — »	26 ախտիցն	աղետիցն
» — »	34 և ոչ անձամբ ինչ պահանջել	և ոչ անձամբ վրէժս ինչ պահանջել
» 112 ս	4 . . . տեառն իւրոյ	Կ'աւելչնէ. չարչարել և տանջել զնա վասն աներկիւզ յանգղնու- թեան իւրոյ
» — »	7 իւրովին իսկ վրէժս ի զրկողէն առ- նուցու	իւրովի իսկ անձամբ վրէժս ի զր- կողէն առնուցու
» — »	9-10 սոյն և առ զատաստանն Աստաւծոյ	սոյն է և առ ի յԱստուծոյ զատաս- տանն
» — »	14 չարչարողացն	չարչարարացն

- » — » 18 զյաւիտենական զբարութիւնս սըր-
բոց և արգարոց
» — » 18 ընդ անթիւ ինչ կորստեան զյաւիտենական բարութիւնս զօր սըրոցնե արդարոցնէ պատրաստեալ ընդ անթիւ ինչից (=ընչից) կո-
րըստեանն
- ձառ. ՓԴ
- » 114 » 3-4 յանկարծակի զողանայ . . . սատա-
նայ
» — » 12 անպատեհ խորհրդոց
» — » 13 Իսկ զի՞նչ արացեն . . .
- » — » 15-16 մինչեւ յայտնի զողունիս փոքր
և սակաւ համարեցեն
» — » 20-21 և ոչ ինչ համարին, և առնե՛ եթէ
փոքր ինչ զողունիս առանին . . .
» — » 27 Արդ մի այդպիսի կարծեցուցա-
նիցէ զքեզ սատանայ
» — » 30 զի որ միով ինչ պատուիրանացն
Ասունծոյ զթիցէ
» 125 » 8 զողանքն
» — » 11-12 զի ոչ եթէ զողուն մրգոցն եզե
պարտապան
» — » 13 զի որ սասցն՝ եթէ . . .
» — » 19-20 Զի զոր ինչ եւ է ի վէրս մեղաց,
և փոքր համարեցի
» — » 26 սուդ ինչ վէրք նորա
» — » 29 աներեւոյթ է և հարուած կարճի,
ոյլ սաստիկ ընդ ամենայն մար-
մինն կսկիծ արկանէ մինչն ի սիրան
» — » 32 զանպատկառութիւնն
» — » 33-34 Եզեւ յանէծս և ի ծառայութիւն
ամենայն զաւակօք իւրովք
» 116 » 2 առիւծ . . . երեկ զնա
» — » 11 զքուուր երկաթոյ
» — » 16 սպանութիւնք . . .
- » — » 18-19 ահա մի է հրամանատուութիւն
սակաւուն և մեծին
» — » 26 . . . արհամարհեաց
» — » 29 առաւել եւս տանջանս ընդունի
» — » 32 մեղանայ
» — » 33 . . . քան օտարին:
- » — » 34-35 մինչեւ առ ընտանին և մերձաւոր-
րին ես մեղանչել
- ձառ. ԽԴ
- անկարծ զողանայ . . . սատանայ,
Կ'ա-եւնէ. և մերժեալ հանէ զիր-
կիւն Ասունծոյ
անդէպ խորհրդոց
Կ'ա-եւնէ. և կամ յո՞ր խուար երթի-
ցն
մինչն զյայտնի զողունս փոքր ինչ
և սակաւ համարել
և արհամարհին, մինչն ասել՝ եթէ
փոքր ինչ զողունս որ առանին . . .
Արդ մի այդպիսի ինչ կարծեցուն-
ցէ քեզ սատանայ
զի որ միով իւրօք ի պատուիրանս
նորա զթիցէ
զողունքն
զի ոչ եթէ զողունից ինչ մրգոցն
հղեւ պարտապան
զի որ սասցն ասէ՝ թէ
զի զոր ինչ և վէրս փոքր համա-
րեցի ոք
սուդ ինչ և աներեւոյթ են վէրք նորա
(Մեր Գե-սէրէ շ-նէ ոյ- ու-նէրէ)
- զանառակութիւնն
եղեն անէծք ձառայութիւն Քա-
նանայ զաւակութիւն (՝)
առիւծ . . . եկեր զնա
զքուուր (՝) երկաթոյ
սպանութիւնք, զողութիւնք և
պոռնկութիւնք
ահա մի հրամանահատութիւն է ի
սակաւուն և ի մեծին
արհամարհեաց, և զգաւարիրաննո-
րս հատանիցէ
թշնամանելի է և մեղաղընի եւ
տանջելի.
մեղիցէ
. . . քան օտարին: Կ'ա-եւնէ. նոյն-
ոէս և գառնութիւն է զողութիւնն
զոր առանին և մերձաւորին ոք
մեղանչէ քան զուտարին:
մինչ առանին և մերձաւորին եւս
ես մեղանչել

» 117 » 11 և հին աւուրց նստի
» — » 13-14 և սուզ անմիսիթար մեղաւորց

(ՄԵՐ ՉԵ-ՔԻՇԱ Ա-Ա-Ե)
սուզ անմիսիթար զմեղաւորս առ-
նուցու

Ճառ. Ժ-Ե

Ճառ. Թ-Ե

- » 118 » 11 հրամանս ինչ երդման
» — » 17 թերեւս և չերպնուին իսկ
» — » 19 և մի՛ արդար
» 119 » 5 այլ այն՝ որ սպիտակացուցանէ
» — » 28 վատահանային
» — » 39 երդմեահարք և երդմանկերք
» — » 2 է որ վասն երդմանս է
» — » 36-37 նոյնպէս և առաւել մեղացն չա-
րութեան երդմանն
» 121 » 2 իբրհւ զհուր վատեալ ի բերանն . . .
այլին
» — » 5-6 զարթնու իմն և խորհի
» — » 8 առ ընդհետկան սովորութեամբ
» — » 14 ամենայն սպանութիւնք եթէ ար-
տաքոյ է
» — » 23 Մի՛ զայս փոքր կարծեցուցաներ
» — » 30 Արք ի հրապարակս և երդմունք
ի բերանս . . .
» — » 33 գատախազողն
» — » 35 սազալեզուացն» կամ «աղուալեզ-
ուացն» . բառերը վարչութեան մաս-
էլ և վարչութեան մասուալեզուացը»
» 122 » 2 հուր ժանտանոտ ցոլացեալ
» — » 5 ընդէ՞ր հուր առեր ի բերանդ
» — » 15 հետացուցանէ յԱստուծոյ
» — » 32 ի մեծութենէ և հիմանէ հաւատոյ
» 123 » 6-7 յանկանգնելի չարեացս . . .
և ընդ երկրու մտանիցեմք
» — » 19 երդմամբ հաստատեմք զբերանս
» — » 15 աղուալեզուացն
» 124 » 4 . . .որ ոչ էք ի քրիստոնէից հա-
ւատացելոց, այլ յանօրինոց հե-
թանոսաց
- սահմանս ինչ երդման
թերեւս և չընդունելին իսկ
և մի՛ զոր արդարն համարեցին
Կ-Ա-Ե-Զ-Ն-է . և սեւացուցանէ
վատահանան
երդմեախարք և երդմասէրք
կարեւոր է քան զամենայն
նոյնպէս և առ չարութիւնն երդ-
մանն
իբրեւ զհուր ասեալ ի բերանն . . .
այլին
զարթնու իմն և խորհին
առ ընդհետկան սովորութեանն
ամենայն սպանութիւնք եթէ ներ-
քոյ է և ե եթէ արտաքոյ
մի՛ զայս փոքրկացուցաներ և զայն
մեծացուցաներ
Արք ի հրապարակս և երդմունք
ի բերանս . Կ-Ա-Ե-Զ-Ն-է . կանայք ի
տունս և երդմունք ի բերանս .
գատախազն
աղուալեզուացն
հառ չարահոտ և ժանտ ցոլացեալ
ընդէ՞ր հուր առեր կրես ի բերանդ
հետացուցանէ զմարդիկ յԱստուծոյ
ի մեծ ամբութենէ և ի հիմանէ հա-
ւատոյ
յանակնածելի չարեացս . . .և ընդ
երկիր մտանիցեմք
երդմամբ հաստատեմք զբանս .
աղուալեզուացն
որ ոչ է քրիստոնէից հաւատացե-
լոց, այլ անօրինաց հեթանոսաց .

(Ծարումակելի)

Ե. Ե. Դ.



Ինչու ամեկառար ենք

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ա Ս Ե Ն Ա Կ Ա Ն Ը Ե Ա Ն Դ Ե Ն Ա Կ Ա Ն Ը

Զարժանալի տիեզերքի մը մէջն ենք, անոր մէկ մասը կը կարգներ, Ե՞ս պարզնը մըրգակներէն մէկուն վրայ՝ խարխափելով եւ մեր համբաւն ընթացքին ասդին շօշափելով։ Շատ բան չնոր զիտեր իշխում մասին, տակայն կ'աշխատինք զիտնալ։ Վատահարքը անոնք, որ հաւատքի թեւերուն վրայ կը բարձրանան, եւ իրազեկ կ'ըլլան թէ մեծվայելչութիւն մը կայ այն ամէն բաներէն անդին՝ որոնց ուղարկի կը ինելամասին, շատ չն միալիք, անոնք անկանած վիրազոյն աստիճանի մը կը զիմնեն. անոնք մէզ կ'առաջնորդն զէպի այն՝ ինչ որ մարդկութիւնը կնայ ըլլան օր մը։ Նշանակիլի մտածում մըն է թէ մարդկութիւնը նւետոնի, Ե՞րազիրի. Պատասին եւ ուրիշներու պէս մարդկի զարու բերած է։ Արգէն իսկ մարդկութիւնը ինչ մեծութիւններու հասած է, մեծութիւններու որոնք մեծաւոր սարագութիւններու նման հասարակ մակարդակն էքր կը բարձրանան։ Մակային, ինչպէս Բրամինկ կ'ըսէ իր Պարակիսու առուն զարմանալի բրդուածին մէջ, «մարդ մարդ չ' տակաւին»։ Միայն սակաւաթի բարձր զարդար են որ արեւ կը տեսնեն։ Երբոր ամրոց հասարակ մակարդակը այդ աստիճանին բարձրանայ՝ այդ առուն կրնանք համարձակորդէն երգել. «մարդ կերտուած է»։ Մակայն զարդարները ինչ պիտի ըլլան այն առին։—Լիներութեան հարաւորութիւնները կը հաւատաւած թէ անսահման են բառին բռն նշանակութեամբ։

Մարդիկ երբեմն կ'ըսնեն. «քան մը չափազանց բարի ըլլալով՝ ծշմարիս ըլլարա»։ Քէորդ Մտկառնալոյ սովոր է գատապարտել բացարարութեան այդ ձեւը և կ'ըսէր. «Եթէ բան մը բաւականացափ բարի է՝ անիկա ծշմարիս ըլլալու ասհմանուած է»։ Այսից խօսքագ մեզի արուած չէ իրեց զանոնք ասեղծաղին երեւակայածէն աւելի լաւ երեւակայել. Եւ տեսակ մը հայժոյութիւն ըրած պիտի ըլլայինք երէ ենթաղրէնը թէ Արարից իր կրօածին չափ բարի աշխարհ մը չէ ստեղծած։ Արդ, այսպէս ըսելը տարօրինակ բան մըն է. վասնզի եթէ մակարեսային կերպով առնաւիք ըսել պիտի ըլլայ որ աշխարհ կատարել է, մինչդեռ շատ ներու և անիկա կատարել է. անիկա կատարելութենքն է. անիկա շատ պիտի թիւներուն է. անիկա զեւ իրեւակայած հարսնեակի կամ թիւուրի մը որ զեւ չէ եղած այն զեղեցիկ բանը որուն կը ճգտի, որուն համար նշանակուած է։ Գէտը է աշխարհը անցնի պատրաստութեան անկատար աստիճանէ մը։

Կրնանք համակալ թէ ինչո՞ւ անկառար է աշխարհը. պատմառն այն է որ, երբ մարդ բարձրացաւ անանական արարածի վիճակին, երբ զոյտթիւն ունեցաւ այն զոր առաջին մարդը կրնանք կոչչել — այսինքն առաջին մարդը՝ իր աշզրտութիւն մարդկութիւնը յառաջեցին յասկու թիւնեներով — անոր մարդութիւնը յառաջեց եկամ իր այն հանացութէն։ թէ ուներ ազատ կամք, ընտրելու իշխանութիւն. թէ, մերենայ մը չէր, ու բարիի ու չարիութիւնը շատ կրթիչ է այդ տեսակէառվ Ազամ կերպով մը առաջին մարդն էր. անկէ առաջ անմեղ վիճակի մէջ կը զոյնուէր ան, և անասուններուն պէս էր, առանց մերդի զգացուութիւն։ բայց յեսոյ իրազի եղամ թէ կրնար բարն չարէն զանազանել, կրնար այսինչ բարնին հնտեւիլ կամ այնինչէն խոսսակիլ, թէ բանագանակը մը չէր, թէ ազատ զօրծականութ մըն էր եղագիտութիւն (evolution) մէջ մնե բարյ մըն էր ասիկա։ Գայթեցաւ ան, ինկա ու մեղանչեց. զիտակից մնդրը մուտք զօրծեց. բայց այդ բարյ մըն էր զէպի վեր, և սուսպակէս ծրագրուած էր, եթէ կարելի է այսպէս ըսել, ստեղծել ցեղ մը՝ որ ազատ ըլլան շիսուկ կամ սիալ ըլլամալու, որ չունենար մերնայի մը կատարելութիւնը, որ անցնել անկատարութեան շատ մը շրջաններէն, հարթելով իր համար աստիճանարար միայն զէպի աւելիք բարձր բան մը բան այն, որ պայտակէն կարելի եղած պիտի ըլլար կատարեալ աշխարհ մը դիւրին էր շինել, կատարեալ մերեննական աշխատութիւնը. մը. մինչ յոյժ զրժուար էր, մնե մինչ կը պահանջէր ստեղծել աշխարհ մը, որ պարտեանարար միայն զէպի աւելիք բարձր բան մը բան այն, որ պայտակէն կարելի եղած պիտի ըլլար էականական աշխարհ է անկատարութեան մնանք անիկա կ'ըսնեն։ Ենթայի բարձր ամսականի էական կամք կ'ըսնեն։ Ենթայի բարձր ամսականի էական կամք կ'ըսնեն։ Ենթայի բարձր ամսականի էական կամք կ'ըսնեն։

Ճանդեռնեալ կեանիթի իրականութիւնը

Ճիմա կուզանը հանդերձեալ կեանիրի իրականութիւնն եւ մարգիւթիւնն հակատապրին, որ կը բովանդակի՝ հոգիին և կիւթին միջև և եղող յարարերութիւնը՝ յարարերութիւնը հոգիին աշխարհի և նիւթական աշխարհի միջւնեւ ննչուկ, այէտոք է հասկնալ այդ յարարերութիւնը։ — Ենիր հասկնար զայն, Դանցուցիչ վարկած մը չունինք առ այդ թէ ինչպէս միտոքը և նիւթիք իրարու վրայ կը ներգործեն, կամ թէ ինչպէս ողին յարարերութեան մէջ մոսած է նիւթիք հնութ. այսաւամնայնին անելակ հնր իրողութեան։ Մենք անձամք այդ իրողութիւնը օքինակներն ենք. Արգարեւ չե՞ս ենթապրեց զուն թէ ու անկարած բաներէն շնուրած ևս Մարդ իր կերպը չէ, Այս մարմինը կերպակութիւն կը շինէ ան, ասիսին ինչն բան է, որ մարմինը կը շինէ. — Կերպով մը բութիւնը, անձր, մարդը ինքն իսկ նոյն բանն է բոլոր ապրաներու նկատմամբ։ Կերպակութիւն հայթածած նիւթը ներկայացնելու համար չէ, որ անոնք կը շինն իրենց մարմինը։ Անոնք կրնան շինէ զայն առանց որ եւ է կերպակութիւն։ Անհատական, կազմա-

կերպող ոյժ մը կայ որ նիւթը կը համադրէ։ Եւ անաւասիկ մեր մերենան նիւթէն՝ շինուած՝ մեզի անձանօթ միջոցներով։ Գեղցիիկ մերենայ մը գարսնալուիրէն ծրագրուած եւ կերտուած մեր կորմին անգլասակցարար։

Ենք զիտեր թէ ի՞նչուիս պէտք է զննենք մեր մարտողմթիւնը։ Հայ մը բանիք չենք զիտեր։ Արինք իր շըսանք կ'ընէք մարտոց մէջ՝ երբ անոնք տակաւին արհան շըսանք մասին որ եւ է բան չէին զիտեր։ բայց մերենականութիւնը կ'ամ՝ որ արժանի է կեանը մը տեսու ուսումնափութեան։ Առաջան ատիկա իրին սկիզբը, իրին անհատականութիւնը, հազին չէ, ինչպէս որ կառաւ ու ներկը նկարին չնոցին չեն։ Արացուցանեմ (paroxysm) եղանակն է ատիկա, նոզիին արտացուցման եղանակն, մարմնաւորում։ Մարմնաւորում բառը հիմա կը զորաածնեց պարզ «մ» զիրավ ներկայացնելու համար այն իրզութիւնը թէ մենք նոզիինք ենք նիւթով մարմնաւորած, և մենք զմեզ կը ցուցնենք միսին մէջ։

Կ'ըստի մեզի—սակայն ոչ զիտութիւն կոզմէ, թէ եւ ես կը հաւատական որ խորապէս չշշարիս է—թէ բարձրագոյն հակ մը երկիրէն իշու, մարմին առաւ և ընակեցաւ մեր մէջ, մոզի՝ մարտոց համար և մեր փրկութեան համար բայց տափիս իմ նիւթին դուրս է, և հասարակ էսկէերու մասին կը խօսիմ, նիւթին մէջ մարմնաւորուած նոզիին մասին, այն նոզիին՝ որ կը զորաածէ նիւթը իր այս երկիրն վարուած 70 կամ 80 տարիներու մասնական միջոցներն, որ յաւիտենականութեան մէջ չէին, կ'առ թագանական մըն է, զորաթեան դրուաց (episode) մը լիդ։ Մարմին մէջ արտացուցնեց մը՝ եւ ըլլալով ներբինակ նիւթին, և նոյնառան վերացնելով (զերպանցնելով) զայն։ Այն նիւթական մարմինը զմեզ կը ներկայացնէ, սակայն մեր էսկէերը չէ։ մեր զործին է այն։

Կ'օգուազործենք նիւթը։ կ'օգագագործենք եթերն ալ, որ աւելի մշտական իրականութիւն մըն է, աւելի կատարեալ իրականութիւն մը բան նիւթը։ Հառ աւելի տեսական, չինցոցը։ Եթեր բառաւ մարմինը վերազայական (supersensuous)։ մեր զայտումներուն չի խօսիր ան, բայց լիայոյն եմ որ զոնիկու ալ կ'օգուազործենք մենք, ինչպէս նիւթը։ նոյնառան զիտենք թէ, ուզեղը այն զործին է որ զործել կը տայ մկանները։ Մենք ուզեղը միջոցու մարմնական յօրինուածութիւն մըն է որ կ'աշխատցնենք։

Գոյութեան առարկան

Ի՞նչ է այս մարմնական զրութեան, այս նիւթական զոյտթեան առարկան։ Կարծես թէ անոր նկատական է զմեզ անշատել նոզեկան զրութեան այն մեծ ամիսեկանա զանգւածէն։ որուն իրապէս կը պատկանինք, բայց որում ժամանակի մը համար բաժնուած ենք և մարմնաւորուած՝ միասու։ Եթերկան կը հաստառէ, թէ ուզեղը արքելի զործի մըն է, որ կը կորցնէ զմեզ իրականութեան մէկ մուսին հանդէա, այսուև մը մեխուազնելով զմեզ որ անհատներ ըլլանք, մոզի յասուկ նկարազիր չիններ, անհատական ևս մը բարզաւաճներ։ Առոր համար

պատճառա մը երած բլլալու է։ Բայց ա՛ս է ինչ որ այս աշխարհնի մէջ կ'ընկներ—անեցնել անհատական են մը, նկարազիր մը, անձնականութիւն մը, թէ՝ լուազոյնին և թէ՝ յաւեղոյնին համար։

Եսկ մարմին չենք, այլ ծոզի ևս մարմին մխատեն։ Զօգին եւ մարմնաւոնել անբաժանելի չեն։ Դիմոննր այնպիսի պարազանելի՝ ուր միտաք կրնայ զործել մարմիննէն անջատ։ այս պարազանելը ուսոււմնաբրու ուսոււմնաբրուած են, սակայն ասիկու մեծ նիւթ մըն է որուն վեմ կրնար միջամտութիւնը լուալ հիմայ եթէ, ճեռ ազգայութեան (τέλεράθη) բառը զործածնում՝ պիտի զիտնար թէ ի՞նչ լուի կ'ուգիմ—միտրին ներգործութիւնը՝ մարմնական զործեներն եւ հասարակ զգայաբանքներէն անջատ եղող միտրին վրայ։ Այս իրողութիւնն իր ցուցնէ թէ միտր եւ մարմին բաժանելի են, թէ մըն միւսէն եարք կը շարունակի աւելէւ և այս է ինչ որ մներ հանդիրենալ կեանք ըսկով կը հաւկնանք—այսինքն թէ նոզին (眷戀) կամ միտրը կամ միտր կամ ոգին (spirit) կրնայ իր մարմնական զործիւն եարք աւելէւ Ան նոզին, պէտք չէ երբեք նոյնացուի մարմնինքնին, կ'օգաւազը զայն։ բայց կը ափրէ անոր ևս կրնայ զայն նոյն ճգիւղ առանց անոր շարունակիեւ։

Դիմոնն թէ ծերերը մասնէն կը վագնան։ կ'ուզիմ վասահացնել զիտենք թէ բանուուր զիրը մը չէ, տակիս հանդէւ այնպիսի բանի մը՝ որ անհուսափելի է այս զարմանալիք ամիսերին մէջ։ Մանք պատասխանը մըն է որուն ամինը ալ պիտի հանդիպինը։ լուրջ պասահանը մըն է անիկա, բայց որ եւ բանի մը վասահանը չէ։ Բաժանում մ'է ան, մարմնական մերենակումներն վասարել մը։ Մենք առանց անոր կը տեսենք։ Ակերեւէ է որ շատ պրզիկ փափուսութիւնը մըն է որ տեղի կ'ունենայ. պայմանները միայն կը տորբերին։ նոր, զոր անցուցած ենք այս աշխարհնին մէջ, անհատականութիւնը, նկարազիրը, յիշազութիւնը, ևս աւելի պատճեն կ'օգագագործենք նիւթին կամ։ թէ մենք աստիքանէ ասաթիման կը բարձրանար մըր յարմարութեան համանատաւ։ Անզործութիւն չկայ, յառ աշջիմութիւն կայ։ Արիեօր զէպի վեր միայն զիմնից սահմանուած ենք։ Ո՛չ, սափառմ չկայ այս կամ այն ուզութեամբ։ մոզի կը մայ վճարէ վեր դիմուած ոյժն ալ ունինք։

Ապագացի լաւագոյնը

Բայցայուս է սակայն որ պայմանները աւելի դիւրին են։ Նիւթին մէջ զրուազը (աշխիմն երկաւուր կեանըրի մասնակառը միջոցը, episode) ծրզաւում մըն է (strain): Մեծ չանըր թափուած է ուսումնասիրը այս նիւթական մարմինը, անոր կենդանական նախները։ Մենք հարէ որ յաղթենք մարմնին, և անդէ եար աւելի զիրութեամբ յառաջդիմներ—այսուև կ'օգագի մըզի։ Առոր որոնք իրնաց ազգականները կրսուցուցած են՝ երբենք անոնց հետ հա-

դորդտիեան զգացում մը կ'ունենան եւ կը յօւսան թէ անոնք տակուին զոյտթիւն ունին եւ անոնց զորովները (affectionis) զեռ կը տեւեն։ Հսեմ ձեզի թէ այդ մասին մի՛ կասկածիր Կ'ըսեմ մեզի, ամբողջ կենարի ընթացքին այս նիւթերը ուռումնասովով մը վաստանթեամբ, թէ ճշմարփաւ է ասիկա։ Սէր վիժնեն վրայ կամուրջ կը ճգէ։ Սէրը տիեզերքին մէջ տիրող բանն է։ Սէրը չի չըսնարա Ո՛չ մէկ բան արդէն կը չըսնայ, այլ կը փախուր կ'ըսնայ բլույ որ մեր անսողութեանը դրուր իշնան, կ'ըսնայ ըլլայ որ մեր զգացումներուն ներբեւ չիշնան, բայց անոնք կա՞ն իրականութեան մէջ ընդ միշտ։ Եւ ի՞նչ նկարացիր ալ ունենա, ի՞նչ յիշառակենք ալ ունեցու ըլլայ։ հետոյ պիտի տանիս երբ պատահարը, մանք վրայ համին։

Այս մեծվայելու տիեզերքին մէջ, կ'ըսնեմ, ոչ մէկ բան շատ բարի ըլլարով անձիշու է։ Երեքը կատարիւսթենէ նեռու, են տակաւին, բայց անոնք կը զործեն կատարիւսթեան համեմու համար։ Այդ բանը պիտի իրականանայ ։ Երեքն միշտ պիտի ճնիփինը կատարիւսթեան համեմու համար ։ Քանի ճնիփինը տարիներ տեսած է այս երկրիք, եւ ունի միշտն ատարիներ տակաւին կ'ըսնայ աւել ան։ Անհար յաւ իսկնունպէտ կը աւել։ Հասկա ցնդր Բացայացատ է որ նոցին զարգացումին մէջ, տիեզերքին մէջ եղող արժէքի անումն մէջ, երկրային կենարը կենական դրուաց մըն է։

Ո՛ մարդիկ եւ եղրայիններ, մննը հոս կոնտոնի մէջ զործի վրայ ննիք, եւ կամ թէ զոր զործի վրայ կը եւ մէր բաժներ կը կատարէր աշխարհի զործին մէջ։ Շատ ամ դժուարութիւններու մէջ լու է զիսնալ թէ այն ծրագիրը, որուն իրագործման համար օգնութիւն կ'ուզուի մեզմէ, եւ որուն օգնելու համար մեզի ոյժ արտօնած է՝ պարզապէս «միւս աշխարհ» բաժնու չէ, որի զոյտթեան որիշ վիճակ մը չէ, այլ այստեղ է եւ այժմէ է։ Արրայութեան զարւասր երկրի վրայ է որ պիտի ըլլայ, ինչպէս նուև երկինքին մէջ։ Երաց լաւացոյն վիճակը որուն կարաօք եր բաշէ ամէն որ, եւ որուն համար շատար կը ճնիփն, պիտի իրագործուի այս երկրի վրայ, մեր առօրինաց աշխատանքի միջոցին։ Բարձրեամբն հոգին յօւար է իշնել, յօւար է օգնել մեզի որպէսպի մեր կամձէն աւելի բարձր բան մը բլլանք, օգնելու համար ոչ միայն մէն մի անհատին՝ այլ ամբազ ցեղին, որպէսպի ան համար կատարելութեան աստիճանի մը՝ որ ներկային իրագործուած ըլլայ էր շատ հնուու է։ Սա՛ պէտք է ըլլայ մարդկութեան մ'ծ աղօթքը։ «Փռւ արրայութիւնդ թող զայ, թող կամքը ըլլայ երկրի վրայ, ինչպէս է երկինքի մէջ։»

Թրգմ. Ն. Ա.

SIR OLIVER LODGE

ԳԻՍԱԼԻՐ ԱՄԵՐԻԿԻ ԿԱՐԵԼԻ ԱԶԴԵՅՅՈՒԹԻՒՆՆ ՀԵՂԵԳՆԵՐԻ ՎԵՐԱՅՑ(*)

Վերջերումն այն ահազին հեղեղներն որք անզի ունեցան Ամերիկայի Միսիսիպիովի գետացն ըրջապատեալ լայնատարած երկիրներին մէջ, շատոնց տեսողների, կամ նույտ մասին կարգացողների ուշագրությանն գարձեց ուրիշ մէծ կամ փոքր հեղեղների որք պատահած են յառաջներումն, որոց մէծագոյնն էր այն որ ծանօթ է մեզ որպէս Նոյեան Ջրհեղեղն։ Անտարակուսելի ճշմարտութիւնն է որ այս Ջրհեղեղն իրօք պատահեցաւ, որոյ մասին ոչ միայն ունինք մէր կատարանական արձանագրութիւնքն այս տարրեր և տարրեր, և մէկն միւսէն շատ հեռաւոր, ազգեր ունին իրեանց աւանդական, և երբեմն առասպելախառն, երկրաբանական պատմութիւններն, զոր օրինակ՝ Բարեկոնացիք (ըստ իւրեանց Գիլէ էւրեշ կոչուած ուշագրաւ ամենահին Դիւցագնականնին), Զինէացիք (նկատմամբ իւրենց Հան Աս անունով հին զաւառի ջուրերու։ Փիդիֆքական յեղափոխութեանց), Զապոնացիք (որոց առասպելք յիշում ևն թէ ի պատճառու ջրհեղեղին հատ կապակցեալ երկնայինն մարմնոց զգրգութեանը Արեգակն աներեսյթ էր երկու և կէս օր, Յոյններն (աւանոցան Deucalion), Հնդկանքն, Մէքսիկացիք, և մինչև անզամ Պօլինիսիան կզզիների բնակիչներն։

Մննոց Գրքի հօթներորդ և ութերորդ Գլուխներին մէջ կարգում ենք որ Նոյի կենաց վեց հարիւրերորդ արարումն, երկրորդ արմույ տասնեւսոթներորդ օրն, երկրի խորերի աղբիւրներն խորտակուեցան և երկնից սահանք, այսինքն պատմուհներներն, բայոււցան, և անձքենց քառասուն օր և քառասուն գիշեր։ Պէտք ենք համարում այսուեղ մասնաւոր ուշագրութիւնն հրաւիրել երկրամիջի աղբիւրների յիշուած այս «խորտակուիլն», որ պիտի իւր տեղուածն բացարենք։ Յետոյ՝ ջուրերն սկսեցին տակաւ առ տակաւ բարձրանակ մինչեւ լերինք

(*) Ճառ խօսեցաւ ի առողջութիւն, Լոնգինի Հայկական Միացեալ Ընկերութեան Դրական Մասնակիլի հաւատոյրին համեյիսում, 25 Յունիսին, 1927։

ծածկուեցան։ Եւ երբ, եօթներորդ ամսումն, ջուրիքն սկսեցին ցածանալ՝ տառպանն հանգչեցաւ Արարատ աշխարհի լեռանց վերայ։

Եատ մօտ անցեալներումն, Հին Բարելոնի հնագիտական խուզարկութիւնք ի լոյս բերին կարգ մի քենապիր փորազրութիւնք աղիւսեայ տախտակների վերայ, յոյժ նշանաւոր խըրեանց արժէքներովն, որոց մէկն յիշատակութիւնը ունի Մեծ Զըրհեղի մասին, գրուած Բարելոնացի զըրպիրներէ, իւրեանց հնագոյն Անմական-Բարելոնական բարբառով։ Նորա տիտղոսն է սՊիլեամելչի Դիւցաղնականն։ որ կարծիք ծանօթ պիտի լինի ձևկ՝ առաւել յատկապէս ի չնորհն մեր տաղանդաւոր Պատուիլի Օրիորդ Զապէլ Պոյաճեանի պատկերագ Անգղիերէն բանաստեղծական սքանչելի մէկ երկասիրութեանն, հրատարակուած վերջներում։ Զրհնեղեղին մասին այս Բարելոնական անցքն զըրուցաւ բազում տարիներով յառաջ այն ժամանակից (ԺԶ. զար Ն. Ք.) երբ Մովսէս ճառեց իւր պատմութիւնն Մննդոց Դիրքին մէջ։ Հարցէ ծագում թէ, արդէօք, Մովսէս ունէ միջոցաւ ինքնին անձամբ զիտակից էր հին Բարելոնական Զրհնեղեղին յիշատակութեանցն երբ նա զրից իւր պատմութիւնն լսած լինէր գոնեա բերանցի աւանդութեան միջոցաւ, բայ որում շատ նմանութիւնք կան երկուստեք, տարբերութիւնքն լինելով վեբապրոցաց անուանց և նուեին՝ կամ տապանին կոզմի տեսակին մէջ, և տեղին ուր նաւու հանգչեցաւ։ Գալով վերջնոյն, ոմանք Ասորարանք համարում են Միջագետքի Արեւելեան հիւսիսակողմե՛ Խէվանդիկ կոչուած դաշտավայրի ամենաբարձր մէկ լեռան իւր 7000 ոստաչափ ծովի մակերեսէն ի վեր, կամ կիսով չափ բարձր քան մեր Արարատն։ Ցիշատակելի է, սակայն, որ այս աշխարհագրական գրութիւնն, իրեւ տեղի հանգստեան Բարելոնական կինսակիր նաւակին, յականէ անուանէ յիշատակուած չէ նոցա արձանագրութեանց մէջ վերաբերութեամբ այս նիւթին։ Ուստի՝ համարելի է այն լոկ որպէս նոթագրութիւն ուսումնասիրողաց կողմանէ, բայ իւրա-

քանչիւրոյն քմահաճոյից, և չատ հեսի համաձայնութենէ։ Յայտնի է որ իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի տալ իւր անձնուկան կարծիքն բայց, բարեկամներ, չափ ու սահման չկայ այս անցնիւր մտացածին հնթագրութեանց։ Զօր օրինակ՝ մինչև անգամ ումանք Եղեմական Դրախտոն զեղում են ստորին Միջագետքի անտանելի, աւազապատ և արեակէզ Շատ-ալ-Արարի սահմաններումն։ Եթէ այդպէս, ուրիմ մեր ըմբռնումներն ի մասին զալարագեղ, ծառապարզ և հոգեզուարձ Դրախտին, բոլորովին արդիւնք են սխալ խմացականութեան։

Ի նկատի ունենալով մեր այժմեան զիտակցութիւնն՝ մեր երկրագնատի աշխարհագրական երեսյթների և նորա ֆիզիքական կազմակերպութեան մասին, ինչպէս և մեր փորձառութիւնն՝ արդասիք նշարտած այն տեսութեանն թէ ամենայն հետեանք ունի իւր սկրնառակիթն, և, տեսանելով բնութեան օրինաց կարգաւոր զործողութիւններն, հարցնում ենք մեզ ինչպէս կարելի էր որ երկրիս չուրիքն ամրատնային ի վեր քան Արարատ լեան, որ կանգնում է 17.000 ոստաչափ բարձրութեամբ ծովի մակարդակին։ Եւ, երկրորդ, ուր տեղից եկին այդչափ ահազին քանակութեամբ ջուրիք։ Մենք պատասխանում ենք որ ունէ զիտաւածական աստեղաբաշխական և ֆիզիքական արտակարգ հանգամանց ներքոյ այդ երկու երեսյթներն ես անկարելի չեն։ Թո՞ղ, նախ, ի նկատի առնենք քանի մը եղելութիւնք որք զրականապէս ընտանի են մեզ, յարաբերութեամբ մեր երկրագնատին ուր մեք ապրում ենք, և որ երկրագունատ, որպէս անգամ համայն Համատարածին արաբչական ներգանակ կարգադրութեանց, էականապէս անփոփոխ մեացած է անդ ի սկզբանէ, թէպէտե զիտեմք որ նորա թէ՛ ծովային և թէ՛ ցամաքային կազմակերպութիւնն փոփոխուած է, ժամանակ առժամանակ, որպէս հետեւանք հրաբղխական պայթումների, գետնաշարժների և ջրամբար ալիքների հոսանքների։ Քաջածանօթ է մեզ ամենուս որ մեր երկրագունատն Մոլորակաց մէկն է՝ սանձարկեալ Արեգակնէն, որպէս կեղրոն Արեգակնային կարգին (Solar System), Համատարածին անչափ

ու անսահման երկնակամարին մէջ: Զեր ներողամտութիւնն եմ հայցում յիշել այս տեղ, փակագծիւ, որ մեր գիտակցութեան համար, թէ Արեգակնային Կարգին մէջ Արեգակն է բռւն կեզրոն և զսպանակ ամենայնի, մեք չնորհապարտ ենք գերմանացի Նիկողայոս Կոպէրնիկոսի, որ Քրիստոսական 1513 թուականին հաստատեց այդ իրականութիւնն, բայց յերկիւզէ կղերականաց նախապատճեմանց՝ շմարթացաւ ի լուր աշխարհի հրատարակել իւր գիւտն մինչեւ Արեգակն տարի զկնի. այսինքն՝ յամին 1543, իւր մահուան տարին: Մինչեւ այդ ժամանակ, բոլոր աշխարհն անկասկած ընդունած էր Առաջին Կղողիոս Պաղոմէսոսի տեսականութիւնն (հիմնուած նորանէն Քրիստոսական Երկրորդ զարու առաջին կիսում) թէ մեր Երկրագունոտն կղողում էր կեղրոնն, որոյ չուրջն հոգովում էին Արեգակն, Մոլորակներն և համայն երկնային միւս մարմինք: Յիշելով այդ հեռաւոր, բայց դիտութեան տեսակէտի՛ խաւար ժամանակն, Պաղոմէսոսի գիւտն մեծ գործ էր, թէ սիալ: Բայց նա բախտաւոր էր ունենալով իւր տրամադրութեան ներքոյ համբաւաւոր Ազեւքաննորեան Գրադարանն (որ ի յաւիտենական ցաւ գիտական աշխարհին, Խալիֆայն Օմար այրեց 634 թուականին): Այդ ճոխ Գրադարանին մէջ գտնուում էին հնագոյն նշանաւոր արուեստագէտների գործերն, որոնցմէ Պաղոմէսոս օգտուեցաւ. զոր օրինակ՝ Թալէս Միլլատոսացին (640-546, Ն. Ք.), Պիթագորաս (582-500 Ն. Ք.), Անաքսազորաս (500-428, Ն. Ք.), Փիլոդայոս (480-396 Ն. Ք.) և Հիպատոսաց (160-120, Ն. Ք.), որք կտուցած էին իւրեանց տեսականութիւններն ևս հնագոյն Քաղցէականին և Եղիսկականին պեղութականին վերայ:

Հեռաւորութեան տեսակէտով՝ մեր ըշնակած Մոլորակն Երրորդ ամենամերձն է Արեգական, առաջին ամենամերձն մինչելով Փայլածուն և Երկրորդն՝ Լուսարերն: Մեր Երկիրն, բաղդատամբ Համատարածին միւս մարմիններին հետ, այնչափ մեծ չէ: Նորս արամագիծն է իրը 8,000 մղոն և չըջափակն իրք 25,000 մղոն: Ինչպէս Արեգակն և համայն միւս Երկնային մարմինք, նոյնպէս և մեր Երկիրն ունի Երկու հակառակ առաջական մարմինք, որք մեծ հարուած կ'ստանան իթէ ունէ Երկնային մարմին զարտուղելով իւր ծիրէն ըմբռուանայ, իւր անսպասելի մօտաւորու-

կեղրոնաքարը՝ և կեղրոնախոյս կամ կեղրուամերժ՝ ոյժեր (centripetal and centrifugal forces): Այս երկու հակառակ ոյժերի չնորհիւն է որ, գրգծելով միաժամանակ, իրաքանչիւր երկնային մարմին կարողանում է, կատարեալ կարգաւորութեամբ, անսասան պահպանել իւր հեռաւորութիւնն բոլոր միւսներէն, որց հետ ունի Երեւակայտան կապակցութիւն, անօրինաւում առհասարակ անխախտ մէկ կետին վերայ (common centre of gravity) որ կազմում է մեր կենսունակութեան վահանն և պաշտպան զսպանակն: Եթէ մեր Երկրագնտին պատկանելի ծանրաքարչին կեղրոնն խանգարուի թէ ներքնային և թէ արտաքնային ունէ հակագեցութեան պատճառու, հետեւանքն պիտի լինի տարարախտութիւն և, մինչեւ անգամ, զարհուրելի արհաւերքներ, մեծ կամ փոքր ըստ չափու զզրգումների ահազնութեանն: Այս իրականութիւնն կարելի է ապացուցանել անձնական մէկ փորձառութեամբ, զոր օրինակ՝ եթէ ևս ուղղահայեաց կանդ նեմ այս սենեկիս մէջ՝ ոտքերիս զարշապարներն կից միմեանց և թեկես կապուած կողքերիս (որպէս զի անօշնական լինիմ) ոչինչ կը պատահի. բայց եթէ, մինչդեռ այդպէս կանգնած, սկսեմ մորմինս տակու որ տակու կորացնել զէպի յասաջ, ժամանակ պիտի զոյ երբ հաւասարակշռութիւնս կորսնցնելով զետին պիտի տարագիմ, հաւանաօրէն ջախջախնելով երես: Ընդէլու: Քանզի վստահացաց խորտակել առ Երկրամեջն հակող ծանրաքարչին կեղրոնն: Ինչ որ ճշմարիտ է այս պարզ օրինակին մէջ՝ նմանապէս ճշմարիտ է, բայց անբաղդատելիորէն շատ աւելի սարսափելի հանգամանքներով, եթէ Երկնային մարմինների միջն այս կենսական հաւասարակշռութիւնն անպատճառութեանց ենթակուի ունէ անբնական միջամտութեամբ: Խոյնն նշմարելի է, նաևս, ի մասին ծովերի և զետերի ջուրերի մակնթացութեանց և տեղատուութեանց, որց յառ և յասաջ կարգաւոր հոսանքներն հպատակ են Արեգական՝ բայց շատ առուելապէս կուսնի՝ քարչողական զօրութեանց, և որք մեծ հարուած կ'ստանան իթէ ունէ Երկնային մարմին զարտուղելով իւր ծիրէն ըմբռուանայ, իւր անսպասելի մօտաւորու-

բեամբն, խանգարել նոցա կարպաւուու-
թեան բնական օրէնքներն:

Երկնային մարմինների մէջ կարելի
մէծագոյն չարիք պատճառողն է համար-
ուած Գիսաւոր Աստղն, եթէ պատահի որ
նա իւր պարբերական հոլովմանց մէջ իւր
ձրազրիալ անմիջական շաւիղն զուրս սո-
զուկելով կամ վատարւելով մասնայ մեր
Երկրագնատին՝ ամենաչնչին մասն կոտորա-
կի չափով իսկ: Երբ այս ասողերէն մէկն
ամենամերձ է Արեգական (Perihelion)
կարի վատնգաւոր է այն Մոլորակին որ
ժամագոյն է իւրն: Ինչո՞ւ է որ մեր աշ-
խարհիս զոյւթեան արշալոյսէն իսկ, նո-
րա բնակիչներն միշտ զիտած են Գիսաւոր
Աստղերի գալուստան ահիւ և զօղիւ: Արոշ-
հանե՛ ուսած են նախորդաց պատամածնե-
րէն որ ազետալի հետեանքներ տեղի ու-
նեցած են նոցա անբարենիկ այցելութեամբն
այն կամարին, որոյ մէջ թաւալում է մեր
Երկիրն: Այս ազետալի հետեանքների փաք-
րազոյններն են. չեղումն իւրեանց ուզգա-
ղիծ զրութենէն՝ ամենայն մարմինք որք
կազմում են բազազրիչ մասերն մեր Երկ-
րին նիւթերին՝ ի ձեռս պարականոն գետ-
առաքարչ զօրութեան. տեսակ տեսակ տա-
պահանոն արտաշնչումներ. ցնցումն եւ ք-
արտական մասնիկներին որք խմբուած են
մեզ չըջապատեալ մթնոլորտին մէջ. մազ-
նիսական փոթորիկներ. տարապայման ա-
րազութեամբ չոպիացումն ծովերի ջուրե-
րին. մէծագորդ հեղեղներ. ջրամբարձ ա-
լիքների անդիմազրելի հոսանքներ. և այն:

Արգ՝ ի նկատի առնենք այս Գիսաւոր
Աստղերի ամենամեծներէն մէկն, որ աւելի
անմիջապէս կապակցութիւն ունի մեր այ-
սորուան նիւթին հետ և որ, ի ներքոյ ար-
տասովոր հանգամանաց, կարող է յառաջ
բերել Եւս մեծագոյն չարիքներ քան փոք-
րազոյններն զորս թուեցնեք ի վեր: Այս
այն աստղն է որ իւր պարբերական հոլով-
մանց ընթացքում երեաց յամին 44. Ն. Ք.
ոյսինքն՝ այն տարին երբ Յուլիոս կաստ
սպաննուեցաւ Հոռվմայ խորհրդարանին
մէջ, և որ Հոռվմայեցի Ֆեբրուար յաւեր-
ժացուցած են, իւրեանց բանաստեղծու-
թեանց մէջ, Julianum Sidus անուամբ, այն
է Յուլիոս Աստղ: Ամանք կարծում են որ
հետեալ անդրադարձութիւնն, Շեքսովիե-
րի «Համէտ» ողբերգութեան մէջ, պատ-

իմասմ է յիշեալ Աստղին: —

«In the most high and palmy state of Rome,
«A little ere the mightiest Julius fell,
«The graves stood tenantless, and the sheeted dead
«Did squeak and gibber in the Roman streets.
• • • • •
«As stars with trains of fire and dews of blood,
«Disasters in the sun; end the moist star(?)
«Upon whose influence Neptune's empire stands,
«Was sick almost to doomsday with eclipses.»

(ACT I. Sc. 1.)

Բանիքուն աստեղագէտք վատահելի վաւե-
րականւթեամբ, հաշուած են այս Գիսաւ-
որ Աստղի կատարեալ հոլովման ժամու-
նակն որպէս մէկ անդամ իւրաքանչիւր
565 տարին և կոտորակ մի աւելի: Ունինք
արձանագրութիւններ նորա պարբերական
այցելութեանց մասին չէն 44. Ն. Ք. թ-
ւականին: Նույ ուն զայդ նորա անմիջա-
կան երկու այցելութիւններ եղած պիտի
լինին 619 Ն. Ք. (44+575=619) թուակա-
նին, և 1194 Ն. Ք. (619+575=1194) թու-
ականին, այն է տասնեկորք ամօք յա-
ռաջ նախ քան Տրովադայի պատերազմն:
Բարձրագոյն քննադատներից ումանք են-
թագրում են որ անդրադարձութիւնն Հո-
մերի Իլլականին մէջ յարբերական է այս
Գիսաւոր Աստղին: Ոլիմպոսի աստուած-
ների ետրէդեան Աստեան, վճռում է վե-
րըսկսել Տրովադայի պատերազմն: Զիսս
յզում է զՊալլասն Աթենաս քակել ճակա-
տամարտին առժամանակեայ զինադադարն:
Հայր Արտէն Բազրատունի, իւր Իլլակա-
նին սքանչելի Հայերէն թարգմանութեան
մէջ, այսպէս է պատմում այդ անցքն: —

«Ասաց, յարոյց զանձկացեալն յառաջարյն
իսկ զԱրենսաւ,

«Որ համակա սրբացեալ յՈլիմպոսին էջ ի
բարձակեց:

«Ուրիշ ասդ ինչ բոցափայը կորովամիտ
Զըրուանայն ճանակ

«Ենապից ի նրան իւ կամ զօրաց լայն
բանակի

«Առաքի, էւ բօրսափին առ ի նուան յոյժ
կայծակումի՛,

«Կոյունայր նրմին հանգոյն յերկիր Պալլասն
Արմենաւ:

(Երգ Զարրորդ)

Վերջին անդամն երրոր այս Յուլիան
կուսած Գիսաւոր Աստղն երեաց մեր Երկ-

(1) «Moist Stars» անձնութեանց նշանակում
է Լուսինն:

բազնութին երկու հարիւր քառասում եւ հօթն տարով յառաջ էր քան մեր ներկայ տարին, այսինքն՝ յամին 1680։ Այդ ժամանակի կենդանի էր մհծահամբաւ Մաթեմատիկոս և Աստեղագէտ Sir Isaac Newton (1642-1727), գտող բնութեան օրինաց զարմանալիաց զիմաստըների զերազայն համարուածն, gravity, կամ ինքնահակ ձանրաքարչ զօրութիւնն, որոյ մասին արգէն խոսեցանք փաքքի ի շատէ։ Ժամանակակիցք և մուրիմ բարեկամբեր էին նորան, երկու երեսի Աստեղագէտք, John Flamsteed (1646-1719) և Dr. Edmund Halley (1656-1742)։ Այս երեք հմուտ զետնականներն, մանրակրկիտ քննողութեամբ, ուսումնասիրեցին 1680ին երեացող այս Գիտաւոր Աստղին յատկութիւններն, մեծութիւնն և հակամիտութիւններն Սոցա զրուածներց մենք ուսանում ենք որ այս ասացն իրք տասն անգամ մեծ է քան մեր լուսինն։ արշաւում է զրիմէ անհաւատալի արտղութեամբ, այն է 880.000 մղոն առ ժամն։ և, դեռ ևս, մատակցէք, նորա կատարեալ մէկ հոլովումն տեսում է 575 տարի։ Նորա կիկլոպսիան փայլակնացայտ զըլուին, աստղաբեռնեալ ամպատեսիլ պահարանն, և տիտանային կրակահեր ձետն, կարելի է միայն նկարագրել որպէս սարսափիլ հիացուցիչ։ Այս Գիտաւոր Աստղն պիտի վերստին երեայ մեր հողագնութին յամին 2255, բայց մենք չունենալով Մաթեմատայի իրք հազարամեայ կենաց երկարութեան երսնութիւնն, չպիտի հանդիսատես լինենք այդ երեսյթին, բարի կամ չար։ Հարկ է յիշել որ, բայտ վաւերացեալ հաշուերանութեան, իսկ և իսկ, հաշուած են նորա հոլովումներն իրք եօթն անգամ իւրաքանչիւր 4028 տարին, կամ 575 ։ տարի առ իւրաքանչիւր լրիւ հոլովումն։ Առ նահանջ հաշուելով 1680 թւրականէն (երբ զերջին անգամն նա երեաց մեր ախտարհին), եթէ 4028 ից դուրս ձըգենք 1680, հասանում ենք 2348 թուրականին։ Ն. Բ. որպէս նորա պարբերական հոլովմանց երեսումների մէկն, ևս այս էր նոյնան Զրհեղեղի ընդունուած տարին, բայտ Արևմտեան Եկեղեցեաց Կտակարանական ժամանակարանութեանց։

Կարող աստեղագէտք ասում են մեզ որ ի միջի համայն ծանօթ Գիտաւոր Աս-

տեղաց՝ Յուլիան Աստղն անցնում է մեր ձաւորագոյն մեր երկրին։ Եթէ պատահի որ նա զայշի անգամ մեր երկրին սահմանեալ ծիրին, ընդգէմ ընութեան օրինաց, բաւական զօրութիւն կ'ունենայ ո՛չ միայն պատճառել քառասուն օր եւ քառասուն զիշեր անձրեւ և ամբառնալ երկրիս ջուրին ահազին բարձրութեամբ, այլ և խորտակել և վշշել երկրին նոյն խոկ հաստարմատ պաշտպան պատնեշներն, եւ զուրս մզել սոսորերկրեայ ազգուրներն եւ ուրիշ հեղանիւթերն, որք միանալով մակերեսութիւնն յուզեալ և կատաղեալ ովկիանոսուներին ջուրերին հետ՝ կարող են պատճառել այնպիսի մի ահաւոր ազէտ նոյնան Զրհեղեղն։ Անզգիացի կղերականն, the Rev. William Whitson (Յ. Բ. 1667-1752), որ համբաւ ստացաւ որպէս զիտնական, լեզուագէտ, ներհուն Աստուածարան և բազմապատում հեղինակ, իւր New Theory of the Earth երկասիրութեան մէջ, նշմարում է որ այդպիսի մի զէպքում ընդունելի է գտանել իրաւ և բաւական պատճառ Մեծ Զրհեղեղին։ Կարծեմ որ այս ականաւոր Անզգիացի կրօնաւորին անունն ծանօթ պիտի լինի շատոնց մեր հայրենակցաց, բայտ օրում նա, ունենալով իւր եղբայրն որպէս զործակից, թարգմանեց լատիներէնի (հրատարակուած յամին 1736) մեր Մովուս Խորենացոյ Հայոց Պատմութիւնն և Աշխարհազրութիւնն։ Dr. Hallay, իւր Miscellanea Curiosa զրքին մէջ զրում է։ — « Եթէ մեր երկրի ձանրաքարչ զօրութեան կեդրոնն ենթարկուի ունէ փափստութեան՝ միայն երկուհազարերորդ մասն երկրիս կիսատրամագին չափով, այդ բաւական կը լինի ջուրի տակ թաղել ամենաբարձր լերանց զազաթիներն»։ Հեւ գարձեալ, Յուլիան Գիտաւոր Աստղին մասին, զրում է։ — « Ունէ Գիտաւոր Աստղ այնչափ սպառնալիքների առիթ չէր եղած մեր երկրին քան այն որ երեւեցաւ յամին 1680։ Բանզի հաշուելով ես գտայ որ նոյների 11 ին, ժամն 1, եւ վայրկեան 6, զինի միջօրէին, այդ Աստղն ոչ էր առաւել քան Արեգական կիսատրամագին չափով առ հիւսիսակողմն մեր երկրի ծիրին։ Եւ եթէ այդ ժամանակ մեր երկրագունածն այդ տեղ լինէր, թէ հետեւանքներն ինչ պիտի լինէին այդչափ մօ-

տաւորութեամբ, կամ թէ դպչէին միմանց (որ բնաւին անկարելի չէ պատահելոյ), թողում և նոցա որք առանողք ևն փիզիքական գիտութեանց ։

Արզ, զինի այս երեխի զիտուականների վկայաբանութեանց՝ ի մասին լին ջըրհեղին փիզիքական տեսակէտին, և ըստ հաշուերանութեան, այս ահաւոր Աստվին զագագիպութեանն Զքնեղեղին տարին, հանդերձ իւր կարելի չարաչար հետեանքներով, յաւակնութիւնն կը լինի ինձ համար յաւելաբանել քան զոր ճառեցի որպէս արգիւնք ուսումնասիրութեանց, բաւականանալով ռանենալ որպէս նշանաբան Շեքսպիրի մէկ նշանակալից տառ թիւնն թէ, «Երկինքի և Երկրի մէջ, շատ աւելի բաներ կան քան ինչ որ երազած էք ձեր վիւխուփայութեան մէջ ։

Լոնդոն

Ա. Տէ՛ր Մ. ԳՐԻԳՈՐԻԵՎԻ

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Բ. (7)

Գրեց՝ Ա. Ե. Ա. ՅԱԳԻԼԱՆԻ Ա. Ա. Ա. Ա. Ա.

Յարեկարգութենէն եարք՝ ամբողջ երեք հարբ տարի՝ Անգլիայ նկեղեցին մէջ կրօնական կեանք զոյութիւն չունէր Ասեն ատեն բազմութիւն փաքը ջանքեր կ'ըլլային վիրանորոգելու զայն նկանողութեան արժանի է մասնաւորաց ուս 1625-ին առանին հաստակութեան մը կատարած ջանքերը Ալլե կ'արինքի մէջ (Little Gidding), ուր նիկու Ֆերբար և իր ընտանիքը աշօթքի և բարեկործութեան կեանք մը կ'առցրէին նօրթհատող է զանոնք իր և ձօն ինդիւնիմ շի (John Inglesant) զատամաւթեան մէջ։

Բայց այս և առոր նման ճիգիր միշտ կատաձ կ'ենթարկուէին, պատականութեան մը զատամ նշմարտելով անոնց մէջ, և կարճ զոյութիւն մը կ'առնենային լոկ վերջին զարուն կրօնական կեանքի վերկինցազումը և անօր չարունական և արագ զարգացումը այսօրուան Ա-

րեմանան նկեղեցւոյ մեծագոյն հրաշքներէն մէկ կըն է թիրեա: 1833-ին Անգլիական նկեղեցւոյ մէջ սկսած Օքսֆորդեան Շարժումին յառաջ բերած հոգեկոր արթուութեան ուղղակի մէկ արգիւնքն եղաւ այն Այն ատեն էր որ նկեղեցին կինդացաւ առենալով աս' ինքնագիտական թիւն Այ Ա Մ է Մ է Կաթողիկէ նկեղեցին մասն է ինք: Բնականաբար այս համոզումը պիտի առաջնարդէր քրիստոնէական կեանքի վերահաստատման՝ իր ամէն Աներուիր:

Կրօնէր կեանքը կաթոլիկութեան մասնաւորութիւնն է կարծես թէ: անմիկա բողոքականներու մէջ զոյութիւն չէ ունեցած երրքի: Եագումայ այլքան պատկառելի է կրօնական այդ կեանքը, և իր ազգեցութեամբը այնքան ուժն՝ որ ինքզինքը կաթողիկէ գաւանող նկեղեցի մը մէջ անոր չգոյութիւնը շատ նշանակալից կրօնական թիւնը: Օքսֆորդեան Շարժման ատեն կարելի չէր պատասխան մը տալ Ֆրանսացի և արգելու այն քննադատութեան թէ Անգլիական նկեղեցին կաթողիկէ նկեղեցիի մէմարփան էրկանքը չէր, զանոցի ան իր մէջ չանէր կրօնական կեանքը բարգաւաճելու համար պէտք եղած բաւարար ուժն ու կորուլը անխուսափելիորէն յառաջ բերին կրօնական կեանք:

1841-ին առաջին կանանց Միարանութիւնը հիմնացաւ կոնսոնի մէջ, քանի տարի եար առաջ համեցաւ այր մարդոց առաջին կրօնական հաստատութիւնը — Ա. Յոհաննես Աւետարանիչի Բնիկրութիւնը կանանց կրօնական կեանքը ի սկզբանէ անոսի այնպիսի արագ աճում մ'ունեցաւ որ այժմու Անգլիայ նկեղեցւոյն մէջ զանուազ կրօնաւորակներու թիւը կ'անցնի նախ քան Բարեկարգութիւնը նկեղեցի մէջ զանուածներու ընթացքութիւնը կ'անցնի նախ քան բանքը, զոր նկատի կ'առնենք այսուղ, զանդազ և տաժանինի եղած է Սակայն հիմայ որոշապէս հաստատուած է որ թէպէտ թիւով տկար կրօնական Միարանութիւնները զօրաւոր ազգեցութիւնը մը ի գործ կը զնին նկեղեցւոյ կեանքին մէջ այսօր:

Միարանութիւնները մանրամասնորէն նկատուութեան առնելէ առաջ, քանի մը խօսք պէտք է ըստներ Անգլիական նկեղեցւոյ մէջ կրօնական կեանքի յատկանիշներուն վրայ: Արևմտաւորի մէջ կրօնքի մէի տեսակէտէն մեծ այլազանութիւն մը զոյութիւն ունեցաւ է միշտ: Ասիկա արգիւնքն է աս' իրողութեան թէ կրօնական կեանքը անեցուն ձգուում մ'ունի միշտ զործնաւ կան ըլլայու, հակառակ Արեւելեան նկեղեցին աւելի հայեցազական (contemplative) կրօնքին: Աւսուի կրօնական կեանքի ստացած մերը մեծապէս կը տարրերին ազրթքին կամ գործին արուած շատ կամ քիչ կարեւութեան համե-

(*) Ասիկա Բրդ եւ վերջին մասն է այն նիմին, որ Ա. մատր նրատարակուեցաւ Սիմին մէջ (1927, էջ 251-252):

մասու Ս. ԲԵՆԻԿԱՓԻԿՈՎԱ, Արևելուարքի մէջ կրօնքի կողմանկերպիչը, աղօթքի, և գործի միացեալ յարացոյցն ունէր իր վանականներուն համար, աւելի շեշտելով առաջինին կարեւորութիւնը Աստիան Արևելուարքում ամէն կրօնաւոր վանական չէ: Ժմ զարու վերջերը երկնան նդրայրները (Novices) որոնց նույնիրան կհանձրը հայեցաբականութեամբ շարուայտանեցաւ աղնչամի՛ ո՞րչափ Աստուծոյ որդիներուն անձնաւուէր ժառայւաթեամբ: Երկնան զարու կամաց երկներուն անձնաւուէր ժառայւաթեամբ: Ասկէ զարու կամաց երկներուն անձնաւուէր աւելի բարգաւաճում յառաջ հկաւ, երբ հզնատիսու Լոյրու հմիւնեց իր գերակիրթ բահանաներուն, Յիսուսնեաններու զինուորական կարգը:

Իր կրօնական կարգերուն վերակենդանացման ասեն Անգլիայի Տեկնդեցին կարիի է ըսկէ թէ կրօնական կիսունքը ձեռք առաւ այն կետէն ուր թաղած էին զայն Ցիստուսեանները: Անիկա զարունական-կրօնական կինցաղ մը հզաւ արդի պէտքերուն պատշաճնեցուած: Զանց չթափուացաւ ամինեին ուէ մասնաւոր մէ մը օրինակիւու, մեռած անցեալ մը շվերակաշեցին: Հնացած մեթաղները շվերականդանացուցին: Այլ, կրօնական կեանքը արդի պայմաններով վերահասատելու հարացաւ ճիգիր թափեցին:

Կրօնաւորը առական իմաստով Քրիստոսի համեսոց մըլլաւով, միշտ պէտք է ծառայ ԸԱՅ, պատրաստուած՝ գործածուելու ինչ կերպով որ ուզէ Աստուծու: Անսի ան պատրաստուելու է ինքզինքն աշխաղէ մը շինելու, որ ԸԱՅ ամէն բան ամէն մարգուու: Տեսուեցաւ թէ Տեկնդեցին արդի պէտքերը երրակի են: Նախ որ ծիսական ցրութիւններ ամրոշլուին թէրք էր, պէտք էին նուիրու և հոգեոր փորմառութիւն ունեցող մարդիկ, շատ զարծերով ծանրաբեռնուած ծիսական քահանաւութեան զործէն մաս մը սուանձնելու համար՝ առաքելութիւններ վարելով, հայեցողութիւններու առաջնորդելուով, և խոստովանանքներ լուիրու Երկրորդ՝ քանի որ պէտական զորոցի զասարանը կարգաւորներ հասցները մէջ անօպուու կը մնար (վասնով այլ ևայլ աստիճաններ կրօնաւորներ դիմաւարարար անիէ կ'ելլէին մինչեւ այս ատին), մեծ պահանջ կար ընծայարաններու, ուր ազգասններու զաւակները կարենային մըրարու ամրոշական կրթութիւն մը սուանալ՝ քահանայ ԸԱՅուն նպատական կրօնաւորդ, օտար առաքելութեանց դաշտին համար ամուռի բահանաններու պահանջ կար, այնպիսի բահանաններու՝ որոնք կարենային հասարակաց ձրագրով մը միասնիդ աշխատիլ, և որոնք պատրաստուէին իրենց կեանքը նույնիրել անդրծովիք եկեղեցւոյ զատին: Եկեղեցւոյ կրօնական միարանութիւնները նկարագրելու առնեն պիտի տանանենք թէ ինչպէս անսնոցէ իւրաքանչիւրը այլ երեք ուղիներէն մէկուն մէջ առիթը զաւա Աստուծոյ և իր եկեղեցին ծառայելու, ներկայ սեբունդին մէջ:

Ներկայիս միայն հինգ իսկապէս կրօնական

Միարանութիւններ կան Անգլիայի Եկեղեցւոյն մէջ(*): Միարանութիւն մը հիմնելու նախնական փորձը վեր, Յովանի Լէյսլը Լիյն (Հայր Իզամատուած) (Rev. Joseph Leycester Lyte [Father Ignatius]) կատարեց, որ թէ համարութեան մասնաւցաւ, ասկայն ուզին հարթելու մեծապէս սասարպից, ժողովարպը կրօնական կեանքի ընտեղացնելով: Անզիւսկան Միարանութիւններէն ամենահինն ու մեծագոյնը, Ս. Յովաննէս Ավետարանիչի Ընկերութիւնը, իր ձագումը կը պարտի վեր, Անչարտ Միւրու Պէնալնի (Richard Meux Benson) որ ձխատէր քահանայ մը և գիտնական մըն է անիկան միսիոնար քահանաններու կամ գահական արքազականը, որոնք կեանքի երեք ութիւնը կ'ընեն և խիստ կանոնի մը ներքենը: Կ'ապրու Անգլիայի բահանանները քահամանութիւնը են Անգլիայի մէջ ամէն կողմ' իրը հայեցազութիւններ և առաքելութիւններ վարողների: Միսիոնարական նշանակիլի զործունէութիւններ մունին անոնք Ընկերուատների և Հարաւային Արքի կէի մէջ: Օքափորդի մէջ Ընկերութեան Մարգ Տաւնը (Քեղբունավայրը) ամենն աւելի կը զործածուի քահանաններու կողմէ իրը հայեցազութիւնն ավան զայր մը: Միացեալ նահանջներու Անգլիական կարգին ձևանցն է:

Նույնիրական Առաքելութեան Ընկերութիւնը (Society of the sacred Mission), որ 1891 ին Rev. Hebert Hamilton Kelly ի կողմէն հիմնուցաւ, կը բազկանայ քահանաններէ և աշխարհական եղայլներէ, որոնք իրենց ամրոշը կեանքը կը նորուիրն աստուծածյին պատշաճութիւնը: Անոր դործը կրթական և միսիոնարական է միանդամուն: Այս Ընկերութիւնը քահանայութեան ազատ կրթութեան նախակարապետ եղաւ, և զործին այդ կողմէն է որ հանրածանութ զարձացած է զայն Անգլիայի եկեղեցւոյն մէջ: Մայր Տունը (Քեղբունավայրը) նօթինէնէ մըրք, Քէլհամի մէջ, ոչ միայն Ընկերութիւնն ընդայացուներուն տառնըն է, այլ նուև աստուծարական զարձարան մը՝ աշխարհիկ քահանաններու կրթութեան համար: Այժմ զրիթէ հարիւր երեսուն այր մարդիկ և պատանիներ կան հան և զործը արագործն էր տարածուի: Ընկերութիւնը միսիոնարական զարձունէութիւն ունի հարաւային Ամերիկայի կամ հանէնէ արգելու ընդարձակ ձրագրի մը Պլումֆոնին (Bloemfontein) զաւանուն բնիկ մանչերուն և աղջիներուն կրթութեան զործին համար:

Յարութեան Միարանութիւնը (Community of the Resurrection), Թուրքը, Միր Ֆիլմի մէջ, որ հիմնուած է 1892 ին վեր, Զարու Կորի կողմէ (առա եղիսկոպոս Օքափորդի), կը բազկանայ

(*) Ծնթ. — Ամերիկայի եպիսկոպոսական Եկեղեցւոյն մէջ չորս այր մարդոց կարգեր կան և տառնեւօթը՝ կահանա:

քահանաներէ, որոնք այլեւոյ գործերով կը պրազին-հավուական, աւետարանչական, գրական և կրթական ժխական միախանարութեան մէջ յառակ փորձառութիւն ունին անոնք, և երիտասարդները քահանայւթեան համար պատրաստելու վարժարան մըն ալ ունին։ Անոց ամենէն օգտակար գործերն մէկու եղած է կոռհական պարզինաստ զբարյէներու հրատարակութիւնը՝ աշխարհականներու մէջ ցրտելու համար։ Հարաւային Ամերիկայի մէջ անոնք միսինաւարեան ու կրթական արժէքաւոր գործունէութիւն մ'ունին։

Աստուածային Ֆիլոսոփեան Ընկերութիւնը (Society of the Divine Compassion) փաքք միարանութիւն մըն է քահանաներու և աշխարհական էլլորյըներու։ որոնք քրանչիսկանի յարացացական կեանքը կ'ապրին։ Անոնք ծանօթ են իր առանձնական կեանքը առաջնորդները, (retreat conductors) և լուսոնի Արևելիան մասին մէջ ալ ձխական գործեր կ'ընեն աղքաններու մէջ։

Անգլիոյ Եկեղեցւոյ մէջ Բնենեաթիշեան Միաբանութիւնը միւսներէն կը տարբերի անով որ չանք մըն է այն աւանդական վանականութեան հետեւու։ 1887-ի իր սկզբնաւորութիւնն ի վեր շժուարին ժամանակներ անցուցած է ան, իր անդամներուն մեծ մասին 1913-ին Հասմի Եկեղեցւոյ յարելէն ետքը, մնացած հաւատարիմեւուր շարունակեցին իրենց կեանքը Բրուո ի մէջ (Pershore, Worcestershire)։ Պահերազմէն ի վեր Միաբանութիւնը կենսունակութեան նոր լընան մը սկսած է և վերջերս հաստատած է աւելի մեծ Տան մը մէջ։

Անգլիոյ Եկեղեցւոյ մէջ կրօնական կեանքը իր նոր ձեռքը 80 տարուան հնութիւն մը միան ունի։ Թիւի տեսակէտէն յառաջդիմութիւնն զանգազ եղած է, բայց ասոր համար ալ շնորհակալ Ըլլալու պատճառներ կան։ Բազմաթիւ կրօնական կեանք որոնող մարդոց ներթաւումը, իր չկային կեանքի փորձառութեամբ զանոնք առաջնորդելու վարժուած կրօնաւորներ, աղետաւոր պիտի Ըլլալ կրօնական կեանքի կայունութեան համար։ Ամբացման երկար և օգտակար լընան մը բոլորուած է հիմա։ Առաջիկայ տարիներուն համար, կրօնանք վատահօրէն յոյս ունինալ աճումի, եթէ Տէրը կամենաց։

Թրզ. Ն. Ա.

Տեք. — Այս յօդուածը Սթորի համար զրեց Rev. Father John Scott, վերև լիշուած Կոնկրետիստ Առաքելուրըն Պահանաներէն, որ Քէրամի Աստուածարանական Դպրոցին վարիչներէն է։ Այս յօդուածին տաշին մասն ալ զրած է Հայր Հ. Պէրբութըն։

ԿԻԼԻՒԻՈՑ ԿԱՐՈՂԻ ԽՈՇՈՆԵՐԸ^(*)

Գ.

ՍՏԵՓԱՆԵՍ ԱՄՐԱՎՈՐԵՑԻ

1477/8—1483

Յաւալի է որ պատմական աղրիւրներ չեն հասած մեզ կիլիկույ կաթողիկոսներու մեծ մասին անձին և զործունէութեան վերաբերութիւնը։ Ինչ որ կայ առայժմ կցկտուր տեղիկութիւններ կամ յիշատակութիւններ են պարզապէս, որոնք շատ բան չեն սորվեցներ մեզ։ Հաւանական է որ Զեռազիրներու Յիշատականներին նոր լոյսեր ցայտեն օր մը։ Հետեւաբար պիտի գոհանանք առայժմ մեզ հասած կցկտուր տեղիկութիւններով և թուականներով, կաթողիկոսներու յաջորդութեան շղթան կազմվուու։

Սարաձորեցիին համար Զեռազիրներու յիշատակարաններէն քաղցւած պատմական առաջին նպաստն է իր կաթողիկոսութեան թուականը։

Իր նախորդին, Եղողկացի Կարապետին, կաթողիկոսութեան տարիները նշանակած էինք 1448-1477։ Բայց Ս. Յակոբայ Մատենագարանին թիւ 1943 Զեռազիր Աւետարանին յիշատակարանին համիմատ Սարաձորեցին արգէն կաթողիկոս է 1475/6ին . . . և երջ՝ գրեալ եղաւ սա ի Սուրբ Բարսի Երուսաղէմ . . . ի թիմ Հայոց Ձեր (=1475/6) ի հայրապետուրիան Սոյց Հայոց Տեղան Ստեփանոսի, և յայիսկրպութեան Սուրբ Քայոցին Տեր Մէրժի Մէր-հայիսկրպութիւն։

Բանի որ Եղողկացիի մահուան թուականը ստոյգ է Ձեզ=1477/8, այդ պարագային կարելի է ենթազրել որ նա իր կենդանութեան իսկ իրեն յաջորդը ընտրած և օծած էր, հաւանաբար իր՝ ծերութեան պատմաւու և միանգամայն յաջորդութիւնը չընդհատելու նախահոգութեամբ, և այլն քաշուած է զործօն գեր մը կատարելէ, որով Սարաձորեցին կը ներկայաւուած էր կաթողիկոս, և այս պատճառով

(*) Առաջին մասիրը տես Սիմոն 1927, էջ 121-26, 154-58, 240-41։

ալ իր անունը միայն կը յիշուի այդ յիշատակարանին մէջ։

Այս յիշատակարանը ուշադրաւ է նաև անով որ կջմիածնի կաթողիկոսին անունը չի յիշեր, Երուսաղեմ գրուած ըլլալով հանգերձ, ճիշդ այն Զեռապրին պէս, որ Երուսաղէմ գրուած է և յիշատակազրած է միայն Կարապետ կթղի. անունը, ինչպէս տեսանք ասոր մասին գրելու ատեն (ՏԵ՛Կ Սին 1927, էջ 242 ր.)։

Կրնայ դիտուիլ թէ ասիկայ պատահական երեսով մը չէ կիլիկիոյ Աթոռին այդ նորոգ ըլջանին սկիզբները, որով Եւդոկացին և իր յաջորդները չուզեցին ճանչնալ կջմիածնի կաթողիկոսները. Վիրապեցին անիրաւ գահազրկումէն ետքը. Եւինչպէս որ պիտի տեսնենք քիչ ետքը, ըստ Չամչեանի, Սարաձորեցիին մաքառումները կջմիածնի աթոռը խափանելու համար, շատ լաւ կը լուսաբանեն առ կետը թէ ինչո՞ւ համար Եւզոկացի և Սարաձորեցի ատեն Երուսաղէմի մէջ զըստած գիրքերու յիշատակարաններուն մէջ չեն յիշուիր կջմիածնի ժամանակակից կաթողիկոսներուն անունները։

Գալով Սարաձորեցի անձին ու զործին, չենք գիտեր իր ծագումը: Իր ծննդայացըն ալ շատ ծանօթ չէ: Ուր է Սարաձոր: Կա՛յ Սարնյ Չոր Բաղէցի (Պիթիզ). Կա՛յ նաև Սարաձոր, Կարնոյ Թաշտին մէջ զիւղ մը (Տղգր. Հ. Ն. Սարգսիանին էջ 239 և 79 և Տղագիր. Հայոց Մեծաց. Ալիշանի էջ 45): Թերես կարելի ըլլայ Սարաձորը նոյնացնել այդ երկուքին հատ ալ, թէև մեծ կարևորութիւն չունի մը պատմութեան համար: Առ այժմ կարևորը ան է որ Ստեփանոս իր ծննդավայրին անունով շեշտուած է:

Իր գործունէութեան մասին Չամչեան (ՊՏՄ. Հայոց Գ. էջ 491) տուած է հետաքրքրական տեղեկութիւն մը, ըսկով թէ —Ասիկա ամէն կերպով ջանքեր ըրսու խափաներու կջմիածնի կաթողիկոսութիւնը. բայց տեսաւ որ բան մը չի կրնար ընել, և երկու աթոռներուն ալ խաղաղութիւնը կը գրդովի, զաղրեցաւ իր ջանքերէն»: Ստեփանոսի կաթողիկոսութիւնը տեսեց 1477-1483, և այդ միջոցին կջմիածնի Աթոռին վրայ է Յովհաննիս կ. «Ալշակիր» (1474-1484), որ արգէն 1470էն ի վեր ա-

րուակից էր Սարգիս Բ. ին: Այս Յովհաննէս կին ժամանակը խառնակ է և իր գործունէութեան մասին ունէ տեղեկութիւն և յիշատակութիւն չկայ, այնպէս որ այդ կաղմէն ալ չենք կրնար լոյս մը գտնել Ստեփանոսի կջմիածնի աթոռը խափանելու համար ըրած ջանքերուն չուրծ: Հետեւ բար բոլորովին մութի մէջ ենք, և Զամշանի հետաքրքրական տեղեկութիւնը չի լուսաբանուիր: Շատ շատ կարելի է սա ենթագրութիւնը ընել, թէ Վերապեցին տապալող Զալարէկեան Գրիգոր Փ. 22 տարի կաթողիկոսութիւն վարեց (1443-1465) և իր յաջորդներու ատեն կջմիածնի աթոռը շատ տկար կացութեան մը ենթարկուեցաւ թէ ներսէն և թէ գուրսէն, երկրին քաղաքական աննպաստ ու անսանելի պայմաններուն հետեւանքով, այնպէս որ կջմիածնի աթոռը փայլուն գիրք մը չկրցաւ չինել իրեն: Լուսաւորչի Աջն ալ, որ այնքան մեծ դեր կատարած էր կջմիածնի աթոռուն վերահաստատութեան առթիւ, Աղթամար տարուած էր և զարմանալի պարագաներու մէջ միայն վերադարձուեցաւ կջմիածնին 1477ին (Ազգայի. էջ 2165-66, 2189-92): Արդ կրնայ ենթագրութիւն Ստեփանոս Սարաձորեցին, օգտուելով կջմիածնի անփայլու անբարունեակ վիճակէն, ձևանարկ մը ըրած ըլլայ զայն խափանելու և Սիսի աթոռը փայլեցնելու նպատակով:

Ալիշան, Կիլիկիան ժամանակագրէն անելով կը յիշէ թէ 1479-ին Սիսի մէջ կուսաւորչին կորուած Աջը զանուեցաւ թիւրքի մը ձեռքով և զնուեցաւ (Սիսուան էջ 539):

1479-ը Սարաձորեցիին ժամանակն է:

Դ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ա. ԱՆՏԻՐԻՔԱՅԻ

1483—1488

Ամենեւին տեղեկութիւն չկայ Յովհաննէս Ա. Անտիրքացիի մասին, եւ ընդհակառակն անուններու շփոթութիւն մը կայ: Սարաձորեցիէն ետքը իրարու կը յաջորդէն Յովհաննէս անունով երեխ կաթողիկոսներ:

1. Յովհաննէս Ա. Անտիրքացի.
2. » Բ. Թէկուրանցի.
3. » Գ. Քիլիսցի.

Մաղաքիս դպիրի ցուցակին մէջ չկայ Յօվհ. Ա. Անտիռքացին (Հմմտ. Սիսուան էջ 218. ձնթ. 3). Զամշեանի և Ալիշանի ցուցակներուն մէջ կայ, բայց սխալ թուականաւ (1474—1489), թէև Ալիշան յիտոյ կերպով մը կ'ուզզէ թուականը, հետեւով կ'իմիկան ժամանակագրին, որ, կ'ըսէ, իրեք Յովհաննէս կաթողիկոսներէն առաջնորդ կը դնէ 1488ին և յաջորդ տարին ալ հաշակաւոր Թվուրանին, իսկ երրորդն աշխօրդները, մեր ժամանակագրածին պէս (Սիսուան էջ 539 և 218):

Մեր կազմած ցանկին համեմատ Յովհ. Անտիռքացին հինգ տարի կը վարէ կաթողիկոսութիւնը:

Ցուսանք որ օր մը վաւերագիրներ յերեւան գան եւ տեղեկութիւններ տան մեզի իր կեանքին եւ գործունելութեան մրայ:

Բ. Ե.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱԳԼԾԸ (*)

ԽՆՉՊԼՍ ՀԱՅԵՐԵՆ ՈՌՎԲԵՑԱՑ

Գիտութեան անյայտ գետիններուն վրայ աշխատելու ձեռնարկող գպրագէտը իր վերջին հանգրուանին կը հասնի շարք մը պարագաներու բերումով, որոնք իրարու պատճառ և արդիւնք ըլլալով հանգերձ յաճախ զուտ պատահական դէպքերէ յառաջ կուգան և ուզզութիւն մը կ'առնեն: Գալով իմ պարագային՝ կովկասիան իրաց շուրջ իմ շահագրգռութիւնս բնականորէն ծնունդ առաւ Բիւզանդական պատմութեան մասին իմ նախկին հետաքրքիր վերաբերմունքէն:

Հարզբար Համալսարանի աւարտական աշխատանքներուս միջոցին մեծագոյն բարերափութիւնն ունեցաց մտերմօրէն ըն-

կերանալու ատեն մը Փրոֆ. Եղուարդ Մէջերի հետ, որ Պերլինի Համալսարանին հինգամութեան փրոֆէսօրն էր, և որուն ներշնչող անձնաւորութիւնը մզեց զիս զէպի պատմութեան գաշտը, ուժացնելով զիս յոյն և լատին բանասիրութեան հանդէպ իմ հայութին հետաքրքրութենէս: Արդէն նոյն իսկ Քալիֆորնիայի համալսարանի շքանուարաութիւնս կանխող օրերուն մեծ հետաքրքրութիւն արթնցած էր իմ մէջ Բիւզանդական նվթերու շուրջ: Փրոֆէսօրին ազդեցութեան արդիւնքն այն կատ որ Բիւզանդական պատմութեան գաշտը նետուեցայ բոլորովին:

Յաջորդ քայլը եղաւ ոռուսերէն սովորելու սկսիլս, ինչ որ անհրաժեշտ է բոլոր բնագանդագէտներու համար: Եւ որովհետեւ երկու տարի պիտի անցընէի եւրոպայի մէջ՝ ամէնէն աւելի գործնական թուեցու ինձի միուսիա երթալ, ծանօթանաւ աշգ մարդի գպրագէտներուն, եւ միեւնոյն ատեն լեզուն ալ սովորիլ:

Հարզբար եղածս ատենէն՝ չատ հրապարուած էի Փրոֆ. Ա. Ա. Թուլինի գասահիսութիւններով Մերձաւոր Արեւելքի ինքըրոյն շուրջ, և մասնաւորապէ այն տեղեկութիւններէն՝ զորս կուտար ան Հայաստան ըրուծ իր մէկ այցելութեան և զէպի Արարատի գագաթը իր կատարած վերելքի մասին: Աւատի օրոշեցի Սանապետերսպուրի երթալ Կովկասի ճոնապարհով, և իմ յարշոյ ուսուցիչս վերազանցել՝ լեռնային արշաւանքներով: 1911 թուականին Օգոստ. և Սեպտ. ամիսները Կովկաս անցուցի և այդ միջոցին ձիով ճամբորգեցի Տալեւարէն զէպի Դարաշշիչակ՝ Սաթանալսաչի եւ նոր Պայազիտի ճանապարհով: անկէ ալ երեւան անցայ: Արարատ բարձրանալու փորձս անյաջող անցաւ փոթորիկի մը պատճառաւ, բայց վերադարձին իջմիածնի եւ Անիի ըրած այցելութիւններս բիւրեղացուցին իմ մէջ աճեցուն փափաք մը հաղորդ ըլլալու հայերէնին՝ որուն Բիւզանդական ուսումնասիրութիւններու համար կարեւութիւնը զգացած էի արդէն:

Սանապետերսպուրի հասնելէ ետք սկսայ հայերէն սորվիլ համար Ն. Կ. Աղոնցի, և յիտոյ Փրոֆ. Ն. Ի. Մատի հետ: Այս վերջին գպրագէտին ահազին հմտութիւնը և ուժեղ

(*) Ամերիկացի հայագէտ Բրոֆ. Ռ. Բ. Պէլչը, մանաւորապէս Սիմինի համար գրեց այս անդեպիտիւնները, երբ 1927ի մայոր այցելեց երուսաղէմ, Ա. Յակոբի Զեռագրաց Մատենադարանի մէջ հետազոտութիւններ ընելու համար: Շ. Ի.

անձնաւորութիւնը անջնջելի տպաւորութիւն մը թօղուցին վրաս, և Ամերիկա վերագանակէս ետքը (1912 Օզոս) իմ հայերէնի աշխատանքներս չարւունակեցի, և մօտէն հետեւեցայ ուսուցչիս հրատարակութիւններուն:

1914-ի գարնան՝ իմ հաշուոյս մուսեիա գացի չարւունակելու համար իմ հետազոտութիւններս և ուսումնասիրութիւններս. այս անգամ ալ սկսայ Փրոֆ. Ն. Մառէն վրացերէն սովորի: Ան ինձի խորհուրդ տուաւոր բնագիր մը ընտրեմ և անոր վրայ աշխատիմ, զայն ի վերջոյ հրատարակելու նպատակաւ:

Յաջորդող երեք տարիները Պետերսուպորկ կեցայ ամբողջովին՝ բայց 1916-ի գարնան երեք ամիսներէն՝ երր Ամերիկա այցելեցի և Հարվըրտ Համալսարանէն Վարդապէս Փիլիստիայուրեամ աստիճանս ստացայ:

Հետաքրքրութիւնս աստիճանաբար աւելի գրական խնդիրներու չուրջ գարձաւ, և կեղրոնացաւ թարգմանութեան և ոճի խնդիրներուն վրայ: Մագիստրոսութեան քննութիւններուն մէկ մասը Հայերէն և Վրացերէն Գրականութեան վրայ պատրաստեցի. 1918ի Մարտին Բեթրօլիքատ, և ապա Կովկաս դրկուեցայ Ռուսական Դիտութեանց կաճախին կողմէ՝ վրացերէն ձեռագիրներ քննելու պաշտօնով: Առքանիրոյ քառոսային վիճակը և պատերազմի վերջանալուն տակնուվայութիւնը հարկազրեցին զիս երկու տարի մաս թիվլիս, ուր շարունակեցի հետազոտութիւններս, ապրուստ շահներ հարկէն յառաջ եկած այլազան վրացումներէս աւելցած պատա միջոցներուս:

Կովկաս մնալու ատեն ու չագրութիւնս գրաւեցին մասնաւորապէս այս խնդիրները, որոնք կապ ունէին Առւր Գիրքի վրացերէն թարգմանութեանց հետ: Ամենահին թարգմանութիւնները (versions) բոլըն ալ հայերէնէ կատարւած են, և շատ աւելի նախնական բնագիր մը կը ներկայացնեն քան զոյութիւն ունեցող հայերէն Զեռագիրները: Ի սկզբան Հին Կտակարանը հետազոտութիւններու կեղրոնն էր ինձի համար, բայց յետոյ նոր Կտակարանն ալ տեղ ունեցաւ անոր քով: 1920ին Ամերիկա վերագրածայ և աւագ ուսուցիչ և դաստիարակ եղայ. յետոյ ալ (1922ին) պատմութեան փրոֆէ-

սէօրի օգնականի պաշտօն ստացայ Հարդիրութ Համալսարանին մէջ:

Թէպէտ աշխատութիւններէս մեծ մասը վրացերէնի վրայ կեղրոնացած է, ուստի նայկական նիւթերու օգտագործումը էական եղած է ատոնց բոլորին համար: Հետեւարար ստորեւ կը զնեմ ցանկը այն նիւթերուն՝ որոնք զոնէ մասսմբ հայկական նիւթերու մասին կը խօսին:

1915. Արեւելամ Հռոմեական Կայսերական Կառավարութեան Տրեաներու նև ունեցած յարակնութեանց վրայ, 602-630 Յ. Ք. Թրիսթիանովին Վուսոք. հար. 3. էջ 162-194. (ռուսերէն):

1918. Սոլրաս Ալրասիկոսի Եկեղեցական Պատմութեան Հայերէն բարգմանութեանց վրայ (ռուսերէն). նոյն անդ. հար. 6, էջ 142 շ.:

1921. Հին Կտակարանի Վրացերէն Թարգմանութիւնները: Մակուայի Հնախօսական Բնկերութեան Կովկասեան Բաժնի Տեղեկագրին մէջ. հար. 6, էջ 1-40 (ռուսերէն): Ասոր վերաբննեալ մէկ անգլիերէն թարգմանութիւնը հրատարակուեցաւ Հարվըրտ Աստուածարանկան Հանդէսին մէջ. 19. (1926) էջ 271 շ.:

1922. Վերաբննութիւն Յ. Մալիկի Հայ Աւելարամներուն, Հարվըրտի Աստուածարանկան հանդէսին մէջ. 15, էջ 299-303:

1926. Չորրորդ Եղասի վրացերէն բարգմանութիւնը Երուապիմի Զեռագրին, Հարվըրտի Աստուածարանկան Հանդէսին մէջ. 19. (1926) էջ 299-375:

Եպիփանի Երկրասամ Բարերու վրայ զրած ճառին վրացերէն բնագիրին մէկ հրատարակութիւնը, որուն մէջ սոյն զրաւածքին հայերէն և եղիպատերէն (կոպատերէն) կտորները ալ հրատարակուած են: Հայերէն կտորները առնուած են Բարիգի, Վենետիկի և Երուապէմի Զեռագիրներէն: — ինչ ինչ ուրիշ յօդուածներ ալ կան, որոնք հայկական յատուկ ուսումնասիրութեանց դաշտին սահմանէն զուրս իյնալով՝ զանց առնուած են հոս:

Թրգ. Ն. Ա.

ROBERT P. BLAKE

ՍՈՒՐԲԵՐՆ ՈՒ ԱՆԱՍՈՒՆԵՐԸ

ովԱմբ ՄԻՔԱՅՈՒՆԵՐՈւ զրուցախառն ու զուարճալի մասերէն մէջն է վայրի դաշտաներու ընտելութիւնը կամ սպասարկութիւնը ա՛յս կամ այն սուրբին մօս, անոր կամքն ու խօսքը յարգելու յօժարութեամբ։ Աւելորդ է ըսկէ թէ անասուններու այդ խորհրդաւոր ընկերակցութիւնը նոր փայլ մը կ'աւելցնէր արդէն իսկ հրաշալիքն նկարագրուած կեանքերու վրա։

Նման զրոյցներ նորագոյն հաւասորիքներ կ'ընձեռէին քրիստոնէութեամբ վերածնող մարդկութեան համար, արձագանքաւորով վաղնջական ժամանակներու սքանչելիքներուն ուր անրանները մարդկորեն քարրատեղով հաշու ու հաւան զրացիներն ինն մարզոց։ Այդ ցանկալի թուականը շատո՞նց անհետացած էր մեղքին չարաչուք աղղեցութենէն, որ եղծած էր մորդն ու անասունները իրարու մօտեցնող այդ հմայքը։ Ինչո՞ւ կարելի չըլլար վերանորոշել այդ լուծոււած կախարդանքը, չունչով ու զօրութեամբը այն գերազայն զաղանքին՝ որ պիտի պարտազրէր զայլը ոչխարին հետ ճարակելու միևնույն արօտագայրին մէջ։ Սուրբերու իշխանութիւնը որևէ ոք էր որ տարածուէր՝ մորդերէն զատ, արջերուն և նմաններուն վրայ ալ, հապատակեցնելու կամ քաղաքացիներ ընկելու զանոնք, կամ անսովոր լոյս մը պատցնելու համար անոնց մեղի հետ ունեցած համրու հետուոր եղբայրութեանը վրայ⁽¹⁾։

Կորդալով թոչուններու և զնիկներու ճպուռներու կամ զորտերու մասին պատմուածները Սուրբերու կիսանութիւնը որևէ ոք էր որ տարածուէր՝ մորդերէն զատ, արջերուն և նմաններուն վրայ ալ, հապատակեցնելու կամ քաղաքացիներ ընկելու զանոնք, կամ անսովոր լոյս մը պատցնելու համար անոնց մեղի հետ ունեցած համրու հետուոր եղբայրութեանը վրայ⁽¹⁾։

(1) Այս մելամաղնա զայնասութիւնը սական չի կհնաւ անօւաւ հաւանուի միրուն զառացանին նետային անամասացի եւրօղին, ու եւեն ալ կը հաւախէ իրալիք դրախը։

... Պիտի առնեմ զաւագան, ու կտելով մեծ համբան՝ Պիտի բամ մրերիմ իւսկեւու զիթիկը, ևս Francis Jammes-ն եմ, անո՞ դեպի դրախան կ'եւրաց կար.

Հետապոյն եւենի զուտ նեղիկ բարեկամներն, օ՞ն, եկէ, միարի Տիրոջ եւերին մէջ չիկայ դրսիմ մը երեք։

ովէս, ու անսոնց մութ աշխարհը ճառապայթումներ կ'ունենայ մեր մտքի նայուածքին։ Այսպէս երբ Ֆրանսուա առ Ասիդ, լուսնու թռչուններուն երգը՝ կը գաղրիցնէ իր աղօթքը, որպէս զի անոնք փառարաննեն Տէրը։ կամ՝ երբ կը յիշենք Միշին Դարբուն մէջ՝ եղնիկներուն երկիւղած ձերագրութիւնը Ա. Կոյսին հանդէպ, այն եղնիկներուն որոնց նախամայրը՝ երբեմն Ա. Աթանազիպնէի տօնական յիշատակին նույր կը ընկէր իր նորածին ձագուկը տարուէ տարի, չե՞՞ք չիկնիր ու շփոթիր ուահ մը՝ մըր պաշտամին ցուրտ մեքենաւ կանութիւնը բերելով աչքի տօն։

Բոլոր գաղաններէն օծը միայն չէ մոռացած իր թշնամութիւնը, առաջին մարդասպանը, ինչպէս կը կոչուի ան։ Երբեք ընտելացաւ որնէ սուրբի հետ, և հասկնալի է որնէ սուրբ պիտի չուզէր շոյէ այդ թուանուր թշնամին, որուն վրայ կը տանին իրենց բանի յազթանակը Զինուուրական կամ Զիւառը Սուրբերը, (Գէորգ, Մինաս, Թէոդորս, Սարգիս, և այլն) իրնց նիզակին ծայրովը գետնին գամելով զայն, մինչ ուրիշ սուրբեր ալ խաչակնքումով, աջօթքով կամ բերնի փչումով կը փճացնեն հատարակաց վտանգ սպառնացող եղենաւուր այդ գաղանը։ Մեկնութեան չեն կարօտիր այս սպառնութեան զիրար յիշեցնող պարագաները, վասնզիր Սատանը ոտնակուի ընկելու խորհրդանշական զրուագներ էին անոնք ովարք Սրբոցներու մէջ ընկելուուած։

Անշուշտ գաղաններու անակնկալ ծառայութիւնները Սուրբերու մօս և անոնց վերաբերմունքը այդ առիթներով ժողովրդային մտայնութեան ու բարոյական ըմբռուումին համեմատ համեմուած են շատ անդամ, զոր օրինակ՝ ասդին՝ Անտոն ճրգնուոր կ'օրնէն այն առիւծը՝ որ անապատական Պօղին համար գերեզման մը կը փորէ իր ճանկերովը, և սուրբին բարեմաղթանքներուն չնորդիւ կը հանդիպի ոչխարի մը... անզին՝ ուրիշ սուրբ մը, Պատինուատիս, կը մերժէ ընդունիլ ոչխարի մը մորթը՝ զոր իրեն կը բերէ երախտապարտ բորենի մը։ Առաջինով կը կարծուի՝ թէ բարի զործ մը կրնայ վարձատրուիլ ի վեսա անմեղի մը . . . իսկ երեկորդով կը խորհինք՝ թէ խորհինք՝ թէ անիրաւու-

թիւն մը չի կրնար արդարանալ երբեք:

Այս զբոյցները յիշելով՝ միտք չունինք բնաւ բարոյականի գասեր հանելու անոնցմէ, այլ միայն գնահատելու այն ջիրմ ու գաղտրիկ զգացումը՝ զոր անասուններու չոլիքը կրնայ արթնցնել մեր մէջ:

Զմուննեք բսելու որ հնթանոս աշխարհն ալ իր պատկանելի մարդերուն հետ կը սիրել ճարդել զազաններու հաճելի բնակակցութիւնը, Պիւթագորի մատակ արջն ակսելով մինչև Անդրուկիսի առիւծը՝ որ երախտագէտ մելու խորունկ զգացումը պահած էր իր մէջ:

Հոս կը զննէնք մեր ազգային սուրբերու կեանքէն քաղուած քանի մը օրինակներ, առանց երաշխատորելու անոնց զուտ հայեցի հանգամանքը, վասնզի նման զրոյցներ կրնան փոխազդելի ապրանքներ նկատուիլ Վկայաբանական շահավաճառի մէջ, միշտ առակներու կամ առակաւոր խօսքերու արէս, որոնք ամէն կողմ ըշջան կ'ընեն, թէեւ իւրաքանչիւր ժողովուրդ իր կակ փորձառական իմաստութիւնէն կամ հրաշանու մտայնութիւնէն քիչ կամ շատ բաժին մը կը հանէ ու կը խառնէ ամէնուն:

1. Շաղիսայի Ալոհիծը (Դ. գար)(*) — «Շաղիտայս, ազգաւ ասորի, աշակերտ մեծին Դանիէլի և ի տղայութենէ իւրմէ սրնեալ էր համակ յանապատս . . . յիտ հանգըտեան Սրբոյն ներսեսի, չոքաւ ի գաւառն կորզուաց . . . բնակէր ի մէջ առիւծուց, և աւելի քան զքսան առիւծ հանապազ լրջին ընդ նմա . . . և յորժամ ցաւինչ ցաւէր զազանացն զային չուրջ պատէին զնովաւ և ձգձգէին զնադիտայն, և նշանաւ առնէին խնդրել զրժշկութիւն: Եր երբեմն զի առիւծ մի մէծ, որոյ եկեալ էր նշէզն ընդ թաթոււր բազին, եկն առ սուրբն Շաղիտա որ նստէր յԱլոհիծ լերինն, և զօրէն մարգոյ ի վեր առեալ զթաթոււն՝ ցուցանէր նմա զիւրն: Խոկ սուրբն հանէր զեղէզն և թքանէր ի վէրն, և թաշկինակաւն զոր ընդ զլուս իւր էր ածեալ՝ պատէր զթաթ առիւծուն և բժշկէր»:

— Դանեսոց վանքին մեծանուն և հռչակաւոր հոյն ալ Վարդիկ (Թ-Ժ գար), ինչպէս կը պատմէ Ասոզիկ (Պատմ, էջ 163), գազաններու հետ անսուազ կ'ազրէր ամայի և անսուազ վայրերու

մէջ, մինչեւ որ արժանացաւ հրաշք գործելու զորովհան՝ որուն կը ցանկար: Նոյն փափաքն ունէր նաև իրեն բնկերացող կարմիր վանահայրը՝ զոր պիտի յիշելը յետոյ: Մատակ առիւծ մը վերշապէս հնազանդեցաւ վարդիկին, և որսացած եղչերուներու կաշին կը բերէր անորու Օր մըն ալ իր հրետ կորիւնները սուրբին ուորին առնեն բիրու գրաւ, խնդրելու համար որ բժշկէ անոնց տկանչները, և Սուրբը ձեռք գնելով գաւառում կուտայ առիւծին խնդրանքին:

Կարգավ Հանիկա Ամսուափ մէջ (1924 էջ 100-102)՝ «Բառչէլիք զոր եցոյց Աստուած ի մեռն Սրբոյն կոստիմութիւն գրուածքք»:

2. Տիրոս վանակոր զուրեկը. (Ե. գար)(*) — «Արթիկ Սիւնեաց աւել՝ վանական կույց և սպասաւոր զբնարեան Տիրոս, հաւատարիմ՝ սուրբ և ներանձնաւոր քահանայ, յորում ժամանակի ոչ ոք զոյր նման նմա վարուք առաքինութեան և սքանչելագործ հաւատովք . . . Յորժամ զոյլ յայծեաց ուլ կամ զառն յափտակէր, և ձայնեալ ոմանց առ Սուրբն, նա սուրբ աջովն իւրզ առնէր զնշան խաչին ընդդէմ զազանին և ասէր: «Քրիստոսիւ ասեմ, չիշխս տանիլու: և զազան զայլուն ի վայլ եղեալ զուն կամ զզառն՝ զնայր հանգարտութեամբ: Եւ զարձեալ թաղ մի Շաղատայ էր յեզր ծովակի միով, և երանելին Տիրոս նստէր ի մէջի ոմանց: և զորտքն ի ծովուն՝ լստ սովորութեան իւրեանց ընուին (զակին) յաւէծ ազազակերով: Եւ սուրբն զշարեալ նոցա՝ ասէ. «Ո՞հ, խուցէք ձեր անհեղեղ բարբառովդ!». և զրացում աւուրս կարկամեցան զորտքն և ո՛չ կարացին բարբառել: Եւ եղեւ ի միում աւուրց եհաս երանելին ի նոյն տեղի: Եւ բնակիչք տեղուոյն զգացուցին վասն զորտցոն, և նա ասէ. «Հրամայեալ հմ նոցալումնել ի նոյն սնոտի բարբառն և վերաձայնելու: Եւ նոյն ժամայն, և այսն:

— Մեր սուրբն աւելի խզճամփա կ'երեի քան սրբունին Աւրիա որ Պիկարտիոյ ճահիճներուն մէջ ընակող գրոտերուն արգիւեր է կոչել, ու մինչեւ հիմայ անոնք կը լսեն (Տե՛ս Almanach Catholique, 1924, էջ 129-130): «Վարք Սրբոցներու մէջ զորտերը լուեցնելու կշտամբանքը հասարակ անդիք մըն է զարձած Անդամ Սուենոնիս հեթանոս զատմիւր զանց յիշառաւ կել՝ մէ Օքոսաս կայսը լեզու ելուծ օրն հրամայած ըլլայ զորտերուն որ լսեն: Կը յիշուի Մուուիման սուրբերէն՝ ձեւալլէտոին միումիի զատմահամձու: Երբ որ մը եղտիւրի մը չուրջը հան-

(*) ՓՈՒԱՏՈՒ, Ե. 26:

(*) ԱՅ. ՕՐԲԵԼԵԱՆ, Պատմ. Ա. էջ 84:

գերձեալ կեանքի վրայ կը խօսէր ան, բոլոր զորակերը սկսան կրկնալու Մէլլէջին անազին ձայնով մը պառաց. պինչ ազմակէ է աս, դուք պիտի խօսիք, թէ մնէք, և զորակերը լսեցին: իր խօսքին աւարտեէ յետոյ սակայն՝ մօտեցու լիճին, և նշանացի թոյլառութիւնը շնորհեց. բոլոր զորակերը վերսկան իրենց շաղակառաւեցք (Huart, *Les Saints des Derviches Tourneurs*, էջ 131):

Նման զրյց մը կ'աւանդէ նման մեր Զաքարիա Աստրիացը (Ժէ. գար)՝ որ խօսեալով Մարմաշէնի վանահայր կը եմայի մասին (Ժէ. գար): կը գրէ. «Վանքին մաս փոքրիկ լսէկ մը կար, որ ուուրբ կ'երթար երթարէն աղջինուու: Օր մը երբ իր աշակերտներէն մէկը՝ լսակին մէկ կողմէն կը ձայնէր իրեն, զորակուր ազատակէն անշահելի եղան անոր բառերու Այն առնեն չարանչելի այբն Աստուծոյ երեմիս սասանիով զրյուցն՝ ամէ. Լսեցէք, և խօսիյն լսեցին, և մինչեւ ցայտոր հան լուս և ոչ խօսին:» (Պատ. Դիքք Գ. Գլ. է):

3. Յովինան Այրազոնացիի արշը (Ժ. դար.)^(*)— «Երթեալ Յովհաննու՝ ընարեաց իւր տեղի լուսւեան ի կողմանս դիմուացիս բերդոյ, և անդ զազարեալ՝ հանապազ ընդ Աստուծոյ խօսէր. և եցոյց Աստուծած սրբնէնին վկայ լինիլ սրբութեան նորա: Զի էր նորա էլ մի՛ որ սպասուուրէր ի պէտո նոցա (վանականաց). սպասուանաց նմա արջ մի՛ և եկէր զնա: Եւ իրեւ ասացին Յովհաննու՝ երթեալ առէ ցարջն. Որովհեած սպանէր զազասաւորն մեր, արդ փոխանակ նորա դու սպասուուրէրա մեզ: Եւ երթեալ արջուն՝ սպասուուրէր ամինայն հնազանդութեամբ ի բնուահերութիւնս ամս բազումա:

